

## ԳԻՐՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ԿՐԹԱՏՈՒՄՆԵՐՈՎ

### ՕԴԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՕԴԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՍԱՆ ՍԻԶՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՄՈՒԹՅՈՒՆԸ ՈԵԱԿՏԻՎ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Արծրուն Հովհաննեսի Հայաստան



Արծրուն Հովհաննեսի Հայաստան


Եղիշե 1980թ. Շբաթի մարզի Ֆալսանարդ գյուղում:  
2001թ. ակտուագ է ՀՀ ՊՆ ՎՆագըտափ անվամ տագմանիսն  
ինսուլտուու: Զարգութ է տարածվածուումնելի պատճեռուուն  
և զարգութ նետամիկութելի, ինչպես նաև տարածվածուալի  
տակնարարուունն ինքնումայութեցի տառամայիսուունը:  
Եղիշե մեմակարայումների և ամենի բան տառապ նորինուի հելլինուլ:



ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՅՈՒՄՆԵՐԸ

ՕԴԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՕԴԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՍԱՆ ՍԻԶՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՄՈՒԹՅՈՒՆԸ ՈԵԱԿՏԻՎ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆ, 2010

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Նախարան-----էջ

### ԳԼՈՒԽ 1. ԵՀՊ-ից ՄԻՆՉԵՎ ՈԵԱԿՏԻՎ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

- 1.1. ՕՀՄ-ները մինչև տիեզերական դարաշրջանը-----
- 1.2. ՕՀՄ-ները ԵՀՊ-ի ժամանակ-----
- 1.3. Կորեական երկնքում-----
- 1.4. Միջին արևելյան առաջին կայծակնային պատերազմը-----
- 1.5. Չինական փոքր պատերազմ-----
- 1.6. Վիետնամական երկնքում-----

### ԳԼՈՒԽ 2. ԱՍԵՐԻԿՅԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

- 2.1. «Հյուծման պատերազմ» և «Դատաստանի օր»-----
- 2.2. Աֆղանական երկնքում-----
- 2.3. Իրան-Իրաքյան պատերազմ-----
- 2.4. Լիբանանում 1982թ.-----
- 2.5. Ատլանտյան օվկիանոսի հարավում-----
- 2.6. «C-200»-ի դերյուտը-----

### ԳԼՈՒԽ 3. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ԱՍԵՐԻԿՅԱՆ ՆՈՐ ՄՈԴԵԼ

- 3.1. ՕՀՄ-ները տիեզերական դարաշրջանում-----
- 3.2. Բալկաններում, Աֆղանստանում և Իրաքում-----
- 3.3. ԱԹՄ-երի դերը ամերիկյան Ո-ՕՌ-երում-----

### ԳԼՈՒԽ 4. ԱՍԵՐԻԿՅԱՆ ՕՀՄ-ՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

- 4.1. Ամերիկյան Ո-ԾՈՒ-երի երկար ձեռքը-----
- 4.2. Հակառակորդի Ո-ՕՌ-երի և ԹՌ-երի ուսումնասիրությունը-----
- 4.3. Ամերիկյան հանդգնությամբ կատարվող օդային հետախուզությունը-----
- 4.4. Ամերիկյան ռադիոհետախուզությունը և Ո-Է-Պ-ը-----
- 4.5. Անցած փորձի վերլուծությունը և նոր ձեռքբերումներ-----

### ԳԼՈՒԽ 5. ՀԱՍԵՍԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1. Ո-ուսական և այլ մոդելներ-----
- 5.2. Եզրակացություններ-----

### ԳԼՈՒԽ 6. ԴԱՍԵՐ ՄԵԶ ՀԱՄԱՐ

- 6.1. Օրինակներ մեր պատմությունից-----
- 6.2. ՀՕՊ-ի և Ո-ՕՌ-երի միավորման մասին-----
- 6.3. Տեղեկություններ աղբբեջանական Ո-ՕՌ-երի մասին-----
- 6.4. Կործանիչները և ՀՕՊ-ի այլ սպառազինությունը-----
- 6.5. Օդուժի բարեկոխումների այլ հարցեր-----
- 6.6. Այլ ՕՀՄ-ներ-----
- 6.7. ԱԹՄ-երը մեզանում-----
- 6.8. Ենթակառուցվածքներ-----

## Վերջաբան-----

*Հզոր է այն բանակը, որում յուրաքանչյուր զինվոր համոզված է, որ ամբողջ բանակի հաղթանակը ինց իրենից է կախված: Սակայն այդ նույն զինվորը պատրաստ է մարտնչել իր յուրաքանչյուր զոհված բնկերոց փոխարեն և՝ կրկնապատկերով ուժեղը, մինչև վերջ հավատառով հաղթանակին:*

*10.10.10 թ. Երևան*

*Ուժ՝ ահա՝ արևի տակ ապրելու իրավունքը: Ինչո՞վ է շարժիում մոլորակը, ինչպե՞ս է զավակը դուրս գալիս մոր արզանից, ինչպե՞ս է փոքրիկ ծաղիկը ծակում բեռոսներ հաստ շերար՝ արևի տակ հաստատվելու համար: Այդ բոլորը ո՞չ գեղեցկությամբ, ո՞չ սիրով, այլ ուժով: Մաս քննորյան մայր օրենքը: Ուժ՝ ահա՝ հզորների հենարանը և բույերի բաղադանը:*

*20.07.09. Երևան*

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս աշխատության մեջ առաջին անգամ հայերեն փորձ է արվել վերլուծել ԵՀՊ-ից հետո ստեղծված բոլոր ԹՍ-ների կիրառության պատմությունը և դրանց դասերը: Որոշ դեպքերի մանրամասները չեն ներկայացվել: Սահմանափակվել ենք իմանականում բվական տվյալների ներկայացմամբ, քանի որ փորձել ենք շեշտը զնել վերլուծության վրա: Աշխատության մեջ ներկայացվում է «օդային գերակայություն» հասկացողությունը, պատերազմում օդային միջոցների տեղուն ու նշանակությունը, հակառակային պաշտպանության ցամաքային և օդային բաղադրիչների կիրառության առանձնահատկությունները: Ամփոփելով այս ոլորտում համաշխարհային գարգառումները՝ փորձել ենք ներկայացնել դրանց դասերը և զարգացնելու վերաբերյալ ունենալով հստակ սկզբունքներ, հստակորեն հետևել է դրանց, որոնք ընթերցողի մոտ կարող են առաջացնել որոշակի՝ առաջին հայացքից անհասկանալի հարցեր: Մենք փորձել ենք նման խնդիրների համար առանձին բացատրություններ տալ տողատակերում: Ներդամտություն ենք հայցում, երեւ հեղինակի որոշ սկզբունքների վերաբերյալ բացատրություն չի տրվել, ինչպես նաև այն բանի համար, որ հստակ ուղղմական տերմինարանության բացակայության դեպքում կիրառվել են որոշ ոչ հայերեն բառեր: Չափ բառեր մենք թարգմանել ենք և այսուհետ մշտապես կիրառելու ենք՝ որոշակի հիմք դնելով այս ոլորտում:

Ո-ՕՌի-ի և բազմատեսակ ԹՍ-ների գործողությունների բազմակողմանի վերլուծության այս փորձը ընթերցողի մոտ կարող է կոտրել կարծրատիպերը: Մեր կողմից բազմակի անգամ ապացուցված բվական տվյալների և դրանց վրա կատարած հետևողությունների հիման վրա շատերի մոտ կարող է կարծիք առաջանալ, որ հեղինակը պատկանում է պատմաբանների այն դասին, որոնք ամեն կերպ ցանկանում են սևացնել և ստորացնել խորհրդային ժողովրդի բազմակի հաղթանակները, այդ բվում նաև՝ փառավոր հաղթանակը մարդկության պատմության հզորագույն բանակներից մեկի նկատմամբ:

Ծովապենը Ձեզ հիանափեցնել: Ոչ, ինչքան էլ որ հեղինակը ճշմարտության փնտրութիւն մեջ խճճվի, մինչենույն է, ակնառուն և բացահայտը փոխելու բնավորություն չունի: Ավելին կասենք՝ խորհրդային և ոռուսական պետականության ցանկացած մեծ ձեռքբերում իրականացվել է նաև հայ ժողովրդի մեծագույն ներդրմանը: Այդ ամենը մեզ համար էլ է հոգեհարազատ և ինչ-որ չափով սեփական: Գերմանական բանակին հաղթելու համար հայ ազգը գերազույն ճիգեր է գործադրել և ահեղին ներդրում ունի, որով մենք անշափ հպարտ ենք: Ոչ մի փոքր ազգ այդքան արժեքավոր մասնակիցներ չի տվել: Գուաղականալի հերոսների անունները հավերժացնող վահանակին կա հայորդու անուն: Հայկական փառավոր դիվիզիաներից 89-րդ Թամանյանն այսօր Սովորակայի զորքերի ամենահերինակավոր զորամիավորումն է: Ոչ մի փոքր ազգ այս պատերազմում այդքան հերոսներ (ԽՍՀՄ հերոսներ, փառքի լրիվ շքանշանակիր, ԱՍԴ-ի, Ֆրանսիայի և այլ երկրների հերոսներ) ու բարձրաստիճան հրամանատարներ (60 ավելի ԽՍՀՄ գեներալներ, որոնցից 5-ը հետագա մարշալներ, 2-ը կարևորագույն զորատեսակների գլխավոր շտաբների պետեր, ԱՍԴ-ի բանակի գեներալ) չի տվել:

Խորհրդային ամենահերինակավոր կործանիչները, որոնց ամենը ուսական գենքի փառքը հասցեց անհասնելի բարձունքների, ստեղծվում էին հայորդու կողմից: Արևելքի ու արևմտադիրի միջև միշտ գերադասում ենք պահել ազգային: Անհրաժեշտ է օգտվել բոլորից էլ, սակայն միշտ պետք է մնալ ամուր արմատների վրա: Այս աշխատությունը զգացմունքների ոգով չի ստեղծված, ինչքան էլ լինեն որոշակի ոչ ակադեմիական մեջբերումներ, որոնք չոր զուտ ակադեմիական ձևին որոշակի ճկունություն են հաղորդում:

## ՆԱԽԱԲԱՆ

Ա. Հովհաննիսյանի կողմից կատարված այս աշխատությունն առաջին փորձերից մեկն է Հայաստանում, որում հայերեն ներկայացվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մինչև մեր ժամանակները ընթացած հիմնական ռազմական գործողությունների ու հակամարտությունների ընթացքում ռազմաօդային ուժերի և գենիթա-հրթիռային համալիրների կիրառության և դրանց զարգացման հիմնական միտումները: Այս աշխատանքը կարևորվում է նաև նրանով, որ մեկ ամբողջական գրքում ներկայացված են օդային հարձակման միջոցների և ՀՕՊ-ի հակամարտություններ՝ նշված ժամանակահատվածում: Հեղինակը, արդյունավետ կերպով օգտագործելով մի քանի հարյուր աղբյուրներ, թվական տվյալների օգնությամբ ցույց է տվել օդային հարձակման միջոցների օրեցօր աճող դերը, դրանց ազդեցության տակ փոփոխվող մարտի կանոնները: Առանձանակի կարևորվում է աշխատանքի այս մասը, որտեղ հեղինակը, ռազմական գործողությունների համաշխարհային փորձից ելնելով, վերլուծություններ է կատարում, առաջարկներ է ներկայացնում հայկական զինված ուժերի հատկապես ռազմաօդային ուժերի ու ՀՕՊ-ի զարգացման ու կատարելագործման ողղությամբ: Բավականին փաստարկված ներկայացված է նաև մեր տարածաշրջանում Աղբեջանի կողմից նախաձեռնված սպառագինության մրցավագրը, սպառագինությունների համեմատական վերլուծությունը, և արվել են կարևոր հետևողական նշումներ: Իհարկե, աշխատանքն ինչ որ առումով բացառիկ է: Այն հավակնում է լուրջ բանավեճեր առաջացնել և կարծրատիպեր կոտրել: Սա էլ աշխատանքի մյուս արժանիքն է: Գաղտնիք չէ, որ ճշմարտությունն ծնվում է նման բանավեճերում: Սա ճշմարտության ուղեցույց-աշխատանք է, որը, իմաստային առումով, հեղինակի նախորդ գործերի շարունակությունն է:

ՀՀ ՊՆ Արմենակ Խանկերյանցի անվան ռազմական  
ավիացիոն ինստիտուտի պետի ուսումնական և գիտական  
աշխատանքների գծով տեղակալ, տ.գ.թ.  
զնդապետ Զավեն Հակոբի Հակոբյան

## Ներածություն

Վերջին յորանասունամյակում գրեթե ոչ մի պատերազմ չի սկսվել գետնի վրա: Դեռ 1921թ. իտալացի ռազմական տեսաբան Ջուլիո Դուին Առաջին համաշխարհային պատերազմի (ԱՀՊ) (1914-

1918թթ.)) արյունաբամ մարտերից խելամիտ ելք գտնելու փնտրությունների մեջ մշակեց հիմնավոր մի տեսություն<sup>1</sup>: Նա նկատեց, որ պատերազմի սահմանների վերացումը և բոլոր հարթությունների ներգրավումը մարտական գործողությունների մեջ հիանալի հնարավորություն են ստեղծում հենց ավիացիայի համար<sup>2</sup>:

Դուեն առաջիններից էր, ով նկատեց, որ ավիացիան դառնում է զորատեսակներից ամենահզորը, որ միայն ավիացիայով հնարավոր է հաղթանակ տանել: ԱՀՊ-ից սկսած՝ զինված հակամարտությունների ժամանակ ավիացիայի դերը զնալով ավելի է կարևորվում: Կարճ ժամանակ անց նմանատիպ տեսությամբ հանդես եկավ նաև ամերիկացի գեներալ Ուիլյամ “Բիլլ” Սիտչելը<sup>3</sup>: Նա, բավականին ոգևորվելով Դուենի տեսությամբ, նոր քայլ հաղորդեց գործին, անգամ պաշտոնը զոհեց ավիացիայի զարգացման համար<sup>4</sup>:

Դուենի տեսության հիմնական ասելիքը հետևյալն էր՝ հակառակորդի կենսական նշանակություն ունեցող օրյեկտների խոցմամբ հնարավոր է ազդել ամբողջ բանակի, պետության ու ազգի հոգեբանության վրա՝ նույնիսկ երբեմն հանգիստ բողնելով զինված ուժերին (ԶՈՒ)<sup>5</sup>:

Այս տեսությունը հիմնված էր այն պարզ դատողության վրա, որ պատերազմի ժամանակ, սեփական գործողություններով կարողանաս ազդել հակառակորդի վարքի վրա: Այսինքն՝ դու՝ քո նախապես պլանավորած և հստակ իրականացվող քայլերով, կանխատեսելի ես դարձնում հակառակորդին: Սա արդեն մի փոքր ավելին էր, քան զուտ մարտավարությունը: Այն դրանով իսկ դառնում է բոլոր ժամանակների զորավարների երազանքի իրականացումը: Սա ոչ այլ ինչ էր, քան՝ տեսնել պատերազմի ժամանակային և տարածական բոլոր հարթությունները: Նման քայլի իրականացման համար իհարկե անհրաժեշտ էին նաև համապատասխան միջոցներ, որոնք այն ժամանակ դեռ գոյություն չունեին, սակայն տվյալ դեպքում կարևոր գաղափարն էր:

Վերջին յորանասունամյակի գրեթե բոլոր պատերազմները գալիս են հավաստելու այն տեսակետը, որ նա իրավացի էր: Իհարկե, այդ ամենը միանգամից տեղի չունեցավ: Դուեն ընդամենը կանխատեսում էր, միտք էր տալիս: Այսօր այդ կարևորվող դերն իրենց վրա են վերցրել ընդհանուր թռչող սարքերը (ԹՍ) կամ օդային հարձակման միջոցները (ՕՀՍ), որոնց մի մասն էլ կազմում է ավիացիան: Մենք ԹՍ-ները ընդհանրացնում ենք ՕՀՍ-ների հետ այն պատճառով, որ դրանց կիրառության պատմությունն ապացուցեց հստակ մի իրողություն: Գրեթե չկա մի ԹՍ, որը հնարավոր չլինի կիրառել՝ որպես կրակային կամ այլ հարված հասցնող ՕՀՍ<sup>6</sup>: Ավելին՝ զինվորականները գրեթե բոլոր ԹՍ-ների մարտական հնարավորությունները փորձել են: Նշված դասակարգումներից զատ կան նաև ռազմաօդային ուժեր (Ռ-ՕՌ) կամ օդուժ հասկացություններ, որոնք ևս մեր աշխատության մեջ որոշ տեղերում, բարդություն չառաջացնելու նպատակով, նույնացված են: Չնայած վերջինս մեջ կարող են մտնել ավելի ընդհանրական ԹՍ-ներ, տրանսպորտային այլ ԹՍ-ներ, որոնք տվյալ պահին գենք չեն կիրառում:

Օդուժը մոտ մեկ դար է, ինչ կիրառվում է ռազմական բնագավառում: Բնականաբար, նույնքան ժամանակ է, ինչ, որպես օդուժի հիմնական թշնամի, կիրառվում է նաև հակաօդային պաշտպանությունը (ՀՕՊ):

<sup>1</sup> Giulio Douhet, The Command of the Air. New York: Coward-McCann, 1942; Reprint, Washington, DC: Office of Air Force History, U.S.A.F, 1983 «1921, 1927». pp. 58-65.

<sup>2</sup> Giulio Douhet, The...; Reprint, Washington, DC: Office.... pp. 58-276.

<sup>3</sup> William J Ott, Maj Gen William “Bill” Mitchell: A Pyrrhic Promotion, Air & Space Power Journal, December 1, 2006. 29 may 2009. pp.27-33.

<sup>4</sup> John T. Correll, "Billy Mitchell and the Battleships", AIR FORCE Magazine , June 2008, pp. 64-67.

<sup>5</sup> William Mitchell, Skyways: A Book on Modern Aeronautics. Philadelphia: J. B. Lippincott Company. p. 255.

<sup>6</sup> Տարբեր ժամանակներում ստեղծված ամենամեծ և անհարման դիրիժարերը, բեռնատար, մարդասար ինքնարթունները, տիեզերական կրող իրթիւններն անգամ շատ շնչին տեխնիկական ձևափոխությունների արդյունքում վերածվում էին հարվածային միջոցների՝ ոմբակլոծիչի, հականավային ինքնարթիքի և այլն: Նշվածի լավագույն ապացույցն են հանդիսանում գերմանական «Zeppelin» դիրիժարերը, խորհրդային «Р-7» բալիստիկ հրթիռը, «Ալմազ» տիեզերակայանը, գերմանական «FW-200», ամերիկյան «C-130», «Boeing-747» և այլ ինքնարթինները, չհաշված հարյուրավոր ուսումնական ԹՍ-ները, որոնք ներգրավվել են ամենատարբեր մարտական ինդիքների կատարման համար: ԱՍՆ-ում նույնիսկ բեռնատար ինքնարթիոնց բալիստիկ ռազմավարական հրթիռ է արձակվել (Н. Տալիկով. Самолет Ил-76 и его модификации. Авиация и космонавтика. 4.2003, стр. 12.):

Սակայն այս երկու զորատեսակների դերի բարձրացմանը մենք կանդրադառնանք հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից (ԵՀՊ, 1939-1945թթ.) հետո եղած զարգացումների մասին նշելիս: Երկու զորատեսակներն ել մեծ զարգացում են ապրել հատկապես այս պատերազմից հետո, այսպես կոչված, ուսակտիվ տեխնոլոգիաների զարգացման արդյունքում: Չինված պայքարի պատմությունը հարձակման և պաշտպանության միջոցների մշտական հակամարտության ընթացք է: Հարձակման միջոցները, ի տարրերություն պաշտպանականի, հանդիսանում են կատարելագործման լրկումուտիվներ և, անկախ ժամանակաշրջանից, ավելի դիմամիկ են զարգանում: Պաշտպանության միջոցների զարգացումը գրեթե միշտ կրնկակու հետևում է հարձակման միջոցների առաջընթացին: Ինչպես հարձակման, այնպես էլ պաշտպանության նորագույն միջոցների զարգացման համար պարարտ հող է հանդիսանում գիտատեխնիկական առաջընթացը: Զարգացած պետությունների ԶՈՒ-ի կազմում ՌՕՌ-ները և, առհասարակ, ՕՀՄ-ներն ավելի զգայուն են արդի գիտատեխնիկական տարատեսակ զարգացումների նկատմամբ: Դրա համար էլ նման պետություններում մինչ օրս նշված զորատեսակին հատկացված միջոցները զգալիորեն գերազանցում են այլ զորատեսակների զարգացման համար հատկացված միջոցներին:

1940-ական թթ. հենց նման գիտատեխնիկական առաջընթաց էին ապահովում ուսակտիվ շարժիչների, ռադիոալիքների, նյութագիտության և այլ տեխնոլոգիաները: Նման գիտական նորամուծություններն ապահովեցին ՕՀՄ-ների և ՀՕՊ-ի հետպատերազմյան աննախադեպ զարգացումը:

#### 1.4. Միջին Արևելքի առաջին կայծակնային պատերազմը

Դեռ 1956թ. Խորայելն Անգլիայի և Ֆրանսիայի դաշտակցությամբ պատերազմեց Եգիպտոսի դեմ: Պատերազմը ընթանում էր Սուեզի ջրանցքի համար: Եգիպտոսին օգնում էր ԽՍՀՄ-ը: Մարտերը շատ երկար շտեղին, դաշնակիցները հաղթանակ տարած: Չնայած նրան, որ Եգիպտոսին օգնում էին խորհրդային զինվորականները, ավիացիայի դերն այս պատերազմում խորհրդանշական էր՝ հատկապես Եգիպտոսի կողմից<sup>7</sup>:

Դասական օդային պատերազմ տեղի ունեցավ 1967թ. Խորայելի և արաբական երկրների միջև, (այսպես կոչված «վեցօրյա պատերազմ»-ը): Արդեն վաղուց կործանիչները և այլ ռեակտիվ ինքնարիոններն իրենց տվյալներով ևս մեկ քայլ առաջ էին անցել Կորեական երկնքի ինքնարիոններից: Հակառակորդի ավիացիայի դեմ պայքարի իմանական միջոցները դեռ համարվում էին կործանիչները: Այս պատերազմի մասին մենք նշում ենք ավելի շուտ, քան հաջորդ նշվելիքը, այն պատճառով, որ այն նախ շուտ ավարտվեց, իետո՛ առաջին դասական պատերազմն էր Մերձավոր Արևելքում, որտեղ չնայած հայտնվեց ՀՕՊ-ի ցամաքային հրթիռային բաղադրիչը, սակայն այդպես էլ մնաց աննկատ:

Խորայելական ՀՕՊ գորքերը մինչև 1965թ. գործում էին որպես առանձին զորատեսակ: Նոյն թվականին խորայելական ԶՈՒ-ն, ստանալով ամերիկյան «HAWK» զենիթահրթիռային համալիրները (ԶՀՀ), անցան զորատեսակների ամերիկյան կառուցվածքին: Այսինքն՝ ՀՕՊ գորքերն ենթարկվեցին Ո-ՕՌ-իկ<sup>8</sup>:

Պատերազմից առաջ կողմերն ունեին հետևյալ քանակի ինքնարիոններ՝ Խորայելը՝ մոտ 280 ինքնարիո, որոնցից միայն 90-ը կործանիչ էր, դրանցից 72-ը ժամանակակից կործանիչ էր, իսկ մնացած՝ իմանականում իին կործանիչների հիմնան վրա ձևափոխված, շեշտում ենք, ոչ հասուլ ստեղծված ոմբակոծիչներ<sup>9</sup>: Եգիպտոսը, Միրիան և այլ օգնական արաբական երկրները միասին ունեին մոտ 460-500 ինքնարիո<sup>10</sup>:

Հունիսի 5-ի առավոտյան շուտ խորայելական ավիացիան կայծակնային հարված հասցրեց եգիպտական, հետո սիրիական, հորդանանյան և իրաքյան Սոսուկ քաղաքի օդանավակայաններին: Հարվածներն այնքան ճշգրիտ և անսպասելի էին, որ գրեթե միանգամից հիմնականում գետնի վրա արաբական ավիացիան ոչնչացվեց: Առաջնային հարվածներ հասցեցին խորհրդային արտադրության «Ty-16» և «Ил-28» ոմբակոծիչներին, որոնք հզոր մեքենաներ էին և մեծ վտանգ էին ներկայացնում Խորայելի համար:

Վեցօրյա պատերազմի արդյունքում խորայելական ավիացիան կատարեց 3279 մարտական թոփք, ոչնչացվեց 469 արաբական ինքնարիո, օդում՝ միայն 60-ը: Յ ինքնարիո ոչնչացվեց խորայելական ԶՀ-ի միջոցով<sup>11</sup>: Խորայելական կորուստները կազմում էին 46-48 ինքնարիո<sup>12</sup>, սուկոսային 1,4-1,5%: Դրանցից միայն 15-18-ը<sup>13</sup> օդային մարտերում՝ 0,5-0,7%-ը: Ընդհանուր քանակով Խորայելը, իհարկե, կորցրել էր իր ունեցած ինքնարիոնների մոտ 20%-ը, սակայն դրանով հակառակորդին հասցրել էր 90-95 % վճար: Դժվար է, իհարկե, թոփքներից առանձնացնել, թե քանի տոկոսն է կատարվել օդային մարտերի համար, իսկ քանիհա՞ ցամաքային զորքերի աջակցության համար: Խորայելական ինքնարիոնները հիմնականում օդ էին բարձրանում խառը սպառազինությամբ: Ընդհանուր արդյունավետությունը կազմում է 7-8 թոփք՝ յուրաքանչյուր ոչնչացված արաբական ինքնարիոի համար: Արաբական ցուցանիշներն ավելնորդ է անգամ հաշվելը, որովհետև դրանք չափազանց փորք են: Հաշվի առնելով դրանց քանակը, տարածքի չափերը և խորայելական կործանիչների խիստ թոփքները՝ արաբական ավիացիայի զործողություններն ուղղակի խայտառակություն էին:

Գերազանցությունը, որը ստեղծել էին խորայելցիները, հնարավորություն ընձեռեց նրանց փայլուն հաղթանակ տանել բոլոր ուսումնականություններում: Ամեն ինչ կազմակերպված էր բարձր մակարդակով, եթե անգամ ի հայտ էր գալիս որևէ սխալ, այն անհապաղ վերլուծվում և շտկվում էր:

<sup>7</sup> <http://www.airwar.ru/locwar.html>

<sup>8</sup> А.Алексеев. Военно-воздушные силы и ПВО Израиля, ЗВО, 2.2002, стр. 28; О. Грановский, Войска ПВО АОИ. <http://www.isayeret.com/units/air/7298/article.htm>, <http://www.isayeret.com/units/air/cgrophan/article.htm>, <http://www.iaf.org.il/>

<sup>9</sup> М.Спик. Истребители Асы..., стр. 253; М.А. Жирохов. История ВВС Израиля. М.-Минск, 2001, стр. 157.

<sup>10</sup> М.А. Жирохов. История ВВС... стр. 156-157; М.Спик. Истребители Асы..., стр. 253.

<sup>11</sup> М.А. Жирохов. История ВВС... стр. 171.

<sup>12</sup> М.А. Жирохов. История ВВС... стр. 172; <http://home.comcast.net/~anneled/IAFinventory.html>

<sup>13</sup> <http://home.comcast.net/~anneled/IAFinventory.html>

Իսրայելական ինքնաթիռները, որոնք հիմնականում ֆրանսիական արտադրության էին, իրենց որակով որոշակի, սակայն ոչ որոշիչ առավելություն ունեին նորագույն խորհրդային ինքնաթիռների նկատմամբ: Հաջողությունը հիմնականում բարնված էր կազմակերպման, մասնագիտական պատրաստության և որակ ապահովող այլ գործոնների մեջ:

Թե ինչ էր նշանակում ավիացիայի նման կայծակնային և հագեցած հարվածներով պարտության հասցնել թշնամուն, մենք ստորև կներկայացնենք այլ պատերազմների օրինակի վրա, որոնք սակայն հանդիսանում են այս մեկի օրգանական շարունակությունը:

### 1.5. Չինական փոքր պատերազմ

1946թ. սկսված Չինաստանում ընթանում էր հերթական քաղաքացիական պատերազմը: Չան Կայշիի կողմնակիցներն ամրացել էին Թայվան և այլ կողմների վրա: Ինչպես միշտ, նրանց աջակցում էր ԱՄՆ-ն, ժամանակի ընթացքում նրանց միջև օդային մարտերը դարձան սովորական բան: Կորեական պատերազմի ավարտից սկսած այս մարտերում ներգրավվեցին նաև ռեակտիվ կործանիչները<sup>14</sup>: Ամերիկյան նավատորմի ինքնաթիռները ևս ներգրավվեցին այս փոքր պատերազմում: Մեծ տեղեկություններ չկան այս պատերազմի մասին: Ըստ ոռու պատմաբանների՝ Մ.Ժիրոխովի և Ա.Կոտլորդովսկու, մինչև 1967թ. Թայվանի և Ամերիկյան կործանիչների կողմից օդային մարտերում խոցվել է ավելի քան 70 չինական ինքնաթիռ, իսկ սեփական կորուստները կազմել են մոտ 30 ինքնաթիռ<sup>15</sup>: Օդային մարտերում հիմնականում կիրառվել են ժամանակակից ամերիկյան և խորհրդային կործանիչներ՝ արդիական սպառազինությամբ: Այստեղ է առաջին անգամ կիրառվել ամերիկյան «օդ-օդ» դասի «AIM-9 Sidewinder» հրթիռը, որի մասին ստորև կնշվի մանրամասն:

## 4.1. Ամերիկյան հանդգնությամբ կատարվող օդային հետախուզությունը

Ամերիկյան Ռ-ՕՌ-ի հրամանատարությունը ռազմական գործողությունների ժամանակ կամ դրանց նախապատրաստվելիս միշտ գործել է նախաձեռնողականությամբ: Երբեմն նախաձեռնություններ մշտապես պահելու համար նրանք լինում էին հանդուգն: Հակառակորդի մասին մշտական տեղեկությունների հավաքման համար ԱՄՆ-ում միշտ մեծ տեղ են հատկացրել օդային միջոցներին: Ժամանակի ընթացքում սովորական հետախուզական ինքնաթիռներին եկան լրացնելու տարատեսակ ռադիոհետախուզության, պայքարի և սաղրիչ միջոցները, որոնք այսօր լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում: Մենք, հիմնականում նապատակ ունենալով քննարկել ՕՀՍ-ների և ՀՕՊ-ի գործողությունները, ստիպված ենք սկսել սաղր պատերազմից:

Դեռ չեր ավարտվել ԵՀՊ-ն, երբ սկսվեց երկու հակառակ հասարակարգերի դաժան մրցակցությունը, որը երբեմն-երբեմն կարճ կամ երկար ժամանակով՝ հիմնականում ուրիշ պետությունների տարածքներում վերաճում էր իսկական պատերազմի: Այդ պատերազմների ժամանակ հետախուզական ինքնաթիռների թռիչքները կրում էին ավելի հետաքրքրական և զավեշտական բնույթ: Ինչը նախ պայմանավորված էր «դե ֆակտո» խաղաղ ժամանակների համար բավականին ինտենսիվ և ազդեսիվ թռիչքներով, թռիչքների համարձակությամբ, տեխնիկական միջոցների ընդորլում ներգրավմամբ, ինքնաթիռների օրեցօր աճող բացահայտ տվյալներով և այլն: Այս ժամանակներից հետախուզական թռիչքների մեջ ի հայտ եկան նորանոր մոտեցումներ: Տեխնիկական նորամուծություններից էին ավտոմատ տարատեսակ տեսախցիկներն ու ֆոտոսարքերը, ռադիորեզունիչներն ու պետենգատորները, ինֆրակարմիր ճառագայթների հայտնաբերման ընդունիչները, մքնուրուտային բաղկացուցիչների ամենատարբեր հայտնաբերման միջոցները և այլն:

Ամերիկյան հետախուզական ինքնաթիռները ԵՀՊ-ից հետո միանգամից սկսեցին ակտիվորեն հետախուզել խորհրդային և այլ կոմունիստական պետությունների տարածքներ՝ ամենահանդուգն ձևով խախտելով օդային սահմանները: Այդ բազմաժանր թռիչքների ժամանակ ևս կիրառվում էին ինչպես սովորական ինքնաթիռների ձևափոխված տարբերակները, այնպես էլ այլընտրանքային թռիչքային սարքերը՝ հատկապես օդապարիկները, աերոստատները, տարատեսակ զոնդերը, անօրաչու ինքնաթիռները, արբանյակները և այլն:

<sup>14</sup> <http://army.lv/ru/oruzhie/Oruzhie-Rossii/Stati/Voenno-vozdushnie-sili/103>

<sup>15</sup> <http://www.airwar.ru/locwar.html>; [www.ACIG.org](http://www.ACIG.org); <http://army.lv/ru/oruzhie/Oruzhie-Rossii/Stati/Voenno-vozdushnie-sili/103>

Սկզբից ամերիկյան և անգլիական ՌՕՈւ-ները խորհրդային տարածքների հետախուզման համար օգտագործում էին ԵՀՊ-ի լավագույն հետախուզական ինքնարդիոները և ոժբակողծիչների վերափոխված տարրերակները: Արդեն 1945թ. մայիսի 20-ին խորհրդային զենիթային հրանորները կրակ բացեցին ամերիկյան «B-24 Liberator» ռմբակողծիչի վրա, որը խախտել էր խորհրդային սահմանը, չանցած մեկ ամիս՝ հունիսի 11-ին, կրակ բացեցին «P-38 Lightning» կործանիչի վրա: Երկու դեպքում էլ կորուստներ չեղան: Հետախուզությունը կատարվում էր ԽՍՀՄ-ի ռոլոր կողմերից: 1945թ. աշնանից արդեն խորհրդային հրանաճատարությունը պաշտոնապես պահանջեց, որպեսզի ամերիկյան սահմանախախտները դադարեցնեն թոշքըները: Սահմանախախտները սկսել էին բավականին շատ ներխուժել խորհրդային տարածքներ, իսկ ԽՍՀՄ-ի եվրոպական դաշնակիցների օդային սահմանները առհասարակ սեփականի տպակորություն ունեին հետախուզական ինքնարդիոնների օդաչուների համար: Նման իրավիճակ էր նաև չինական երկնքում: Ամերիկացիները ոչ միայն լոկ հետախուզություն էին կատարում, այլ նաև կատարում էին դիվերսանտների նետում, ինչը բացառիկ բան էր: Դիվերսանտներին և գործակալներին նետում էին հատկապես մերձբարյան հանրապետությունների տարածքներ, Ուկրաինա, Կովկաս և այլն: Թոշքըները գնալով սաստկանում էին: Ուստ պատմաբաններ Դ.Վոլոգոնովի և Վ.Ֆյորդրովի հաշվարկներով՝ ամերիկյան հետախուզական թոշքըները 1950թ. մինչև 60-ական թթ. վերջերը կազմել են ավելի քան 10 000 դեպք: Դրանցից շատերը մինչև օրս գաղտնի են, քանի որ կապ ունեն պետական անվտանգության հետ: Մենք կանոքադառնանք բացահայտվածներից ընդամենը մի քանի տասնյակ ամենահետաքրքիրներին:

Ստալինին շատ էին անհանգստացնում ամերիկյան հետախույզների նման համարձակ գործողությունները, սակայն իրական վախր նրան համակեց 1950թ. հուլիսի 15-ին, երբ ամերիկյան մի հետախույզ քչելով հասավ մինչև Մոսկվա: Գերագույն իրամանատարի զայրույթը զգացին ՀՕՊ-ի դեկավարությունը և այլ ռազմական գործիքներ, սակայն ոչինչ անել չէր հաջողվում: Նման հանդեպություն դեռ ոչ մի հակամարտող երկիր իրեն քույլ չէր տվել: 1950թ. հոկտեմբերի 8-ին տեղի ունեցավ չտեսնված հանդուզն մի դեպք: Ամերիկյան «F-80 Shooting Star» գրոհիչները հարված հասցրեցին Վլադիկոստոկ քաղաքի մոտակայքում գտնվող խորհրդային Սովորյա Ռեզլա օդանավակայանին, վնասվեցին մի քանի ինքնարիոններ<sup>16</sup>: Հետո, իհարկե, ներողություն խնդրեցին՝ պատճառաբանելով, որ սխալվել են: Այդ օրերի հետ է կապվում ևս մեկ դեպք կապված «P2V Neptune» ինքնարիոի հետ, որը պատկանում էր ամերիկյան 6-րդ պարեկային ավիաթիւն: Վլադիկոստոկի գիշերային երկնքում «ՄիГ-15»-երը փորձում էին խոցել ամերիկացուն, սակայն գնդացրորդը խոցում է խորհրդային կործանիչներից մեկը<sup>17</sup>:

1952թ. ապրիլի 17-ի գիշերը նիստամից երեք NATO-ական «RB-45 Tornado» ինքնարիոներ մեծ բարձրության վրա խախտեցին խորհրդային սահմանը: Ինչու NATO-ական, քանի որ ինքնարիոներն ամերկյան էին, անձնակազմերը՝ խառը: Նրանք ող էին բարձրացել Ակալտորպ բազայից: Առաջին ինքնարիոնը, որը վարում էր Զոն Կրեմպոնն, ուղղություն վերցրեց դեպի ԽՍՀՄ-ի հարավ՝ Աև ծովի ավազանի ռազմական բազաներ: Երկրորդ ինքնարիոնը, որը վարում էր Գորդոն Կրեմերն, ուղղություն վերցրեց դեպի Մոսկվա, իսկ երրորդ ինքնարիոնը՝ Բիլ Բլեերի հրամանատարությամբ, ուղղություն վերցրեց դեպի Բալթյան ավազանի ռազմական բազաները: Ինքնարիոներն անվճաս կատարեցին իրենց մարտական առաջադրանքը, հետախուզեցին հսկայական տարածքներ և հետ վերադարձան: Խորհրդային ՀՕՊ-ի նրանց տեսնում էր, սակայն անկարող էր որևէ բան ձեռնարկել:

1952թ. հոկտեմբերի 15-ին ամերիկյան երկու «RB-47B Stratofortress» հետախույզները՝ Դոնալդ Հիլմենի ղեկավարությամբ, թռչելով Ալյասկայից Չուկոտկայի կողմից, հյուսիսից ներխուժեցին խորհրդային օդային տարածք<sup>18</sup>: Բավականաշափ թռչելով հարավ՝ նրանք թեքվեցին դեպի արևելք, հետախուզելով խորհրդային ռազմական օրյեկտները, նրանք միաժամանակ վերադառնում էին: Միմյանցից բաժնավելով՝ նրանք հետախուզում էին ավելի մեծ տարածություն, Էզվենենկինոտին շհասած, խորհրդային «ՄիԳ»-երը երևացին Հիլմենի հետախույզի հետևում, սակայն նրանք չկարողացան գրնիել: Ծորչքը տևեց մոտ 8 ժամ, որից մոտ երկու ժամը՝ խորհրդային օդային տարածքում: Այս թռչքով ճշգրտվում էին ոչ միայն իրադրությունը խորհրդային այդ

<sup>16</sup> А.Котлобовский. И. Сеидов. Горячее небо „холодной войны“. Мир Авиации №2(10)'1995, №1(11)'1996; <http://www.warlib.ru/index.php?id=links>

<sup>17</sup> А. Котлобовский, И. Сеидов, Горячее...

<sup>18</sup> А. Котловский. Газета... Независимое военное обозрение. Пятница, 04 июля 2008, №22 (574); <http://nvo.ng.ru/gazeta>

տարածաշրջանում, այլ նաև հեռավոր հետախուզական թռիչքների հնարավորությունը: Սա «RB-47B Stratojet» ինքնաթիղի առաջին թռիչքն էր ԽՍՀՄ-ի տարածությունը:

Չայլը, ինչ խոսք, համարձակ և հանդուգն էր: Ամերիկացիները նման թռիչքների համար սկսեցին լայնորեն կիրառել այդ ժամանակների համար դեռ նոր «RB-47E Stratojet» հետախուզական ինքնաթիղները, որոնք իրենցից ներկայացնում էին նորագույն «B-47» ոմբակոծիչի վերափոխված տարբերակները: «RB-47E»-ն ուներ մինչև 950-1000 կմ/ժ արագություն, 13-14 կմ թռիչքային առաստաղ և կարող էր խորհրդային տարածքներում կատարել մոտ 1000 կմ թռիչք: Այն զինված էր հզոր հետախուզական սարքերով և բազում զաղունների հայտնաբերման հեղինակ էր:

1952թ. նոյեմբերի 18-ին խորհրդային չորս «ՄիԳ-15» կործանիչները Վլարիվստով քաղաքի մոտակայքում փորձեցին խոցել ամերիկյան «USS Princeton (CV-37)» ավիակիր նավից օդ բարձրացած մի քանի «F9F-2 Panther» կործանիչներին: Տեղի ունեցած օդային մարտի արդյունքում ԽՍՀՄ-ը կորցրեց երկու կործանիչ, օդաչուներ Վանդալովը և Բելյակովն անհետ կորան Պախոնմինն էլ զոհվեց՝ փորձելով փրկել խոցված կործանիչը:

Ըստ ամերիկյան տվյալների՝ 1952թ. ընթացքում ամերիկյան հետախուզական ինքնաթիղները ռադիոտեղորշման հետախուզության միջոցով կարողացել են գտնել Սիրիի ռազմավարական նշանակության օբյեկտները, և մեկ թռիչք էլ կատարել են Կոլայի թերակղզու կողմը: Նման հետախուզական սարքերը նրանց թույլ են տալիս կատարել զիշերային անվտանգ թռիչքներ:

Օգոստոսի վերջին «RB-57 Canberra» ինքնաթիղները իրենց բախտը ԽՍՀՄ-ում փորձեցին անգլիացիները՝ հետախուզական թռիչքի ուղարկելով Կապուտին-Յար իրածգարանը՝ ոմբակոծին նկարահանելու համար: Ինքնաթիղն օդ բարձրացավ Գերմանիայից և միանգամից հայտնվեց խորհրդային ՀՕՊ-ի տեսադաշտում: Ինքնաթիղը, բարձրանալով մինչև 14000 մետր, անցավ Վարչավայր պայմանագրի անդամ երկրների տարածքով և հարավից մտավ խորհրդային օդային սահմանը: Անցավ Կիևը, հետո Խարկովը ու շարունակում էր թռչել դեպի արևելք ավելի բարձրանալով վեր: ԽՍՀՄ-ում տասնյակ կործանիչներ էին օդ բարձրանալով՝ մեկը մյուսին խանգարելով ու հերք չտալով, սակայն՝ ապարդյուն: Կապուտին-Յարի մոտակայքում «ՄիԳ»-երից մեկը դժվարությամբ մոտեցավ և կրակահերք արձակեց, արկերը դիպան «RB-57 Canberra»-ին: Ինքնաթիղը չկործանվեց, սակայն սկսեց քափահարվել և օդաչուն վախենալով թռիչքն ավարտեց իրանում<sup>20</sup>:

1954թ. ապրիլի 28-ից 29-ի զիշերը նորից երեք ինքնաթիղներ, այս անգամ անգլիական «RB-45 Tornado», խախտեցին խորհրդային սահմանը: Հարավային ուղղությամբ թռչում էր Զոն Կրեմպտոնը, կենտրոնական ուղղությամբ՝ Գարբի Կարբելի անձնակազմը, իսկ հյուսիսային ուղղությամբ անձնակազմն առաջնորդում էր Գորդոն Կրեմերը: Կրեմպտոնի ինքնաթիղն արդեն հասնում էր Կիևին, երբ երկնքում 11 000 մետր բարձրության վրա տեսավ զենիթային հրանորների արկերի պայթյուններ: Ոչ մի օդաչու չի կարող սեփական բազայից հազարավոր կմ հետախորության վրա չվախենալ արկերի պայթյուններից: Նա ինքնաթիղը շրջեց հետ՝ բացելով առավելագույն արագություն: Հրամանատարի մոտ անգամ միտք ծագեց ներքեւ նետել դատարկ կախովի վառելաբարերը, որպեսզի մի քիչ էլ ավելացնի առավելագույն արագությունը, սակայն հետո, մտածելով քաղաքական ճգնաժամի նախն, ձեռնպահ մնաց այդ ձեռնարկից: Կիևից օդ բարձարցվեցին կործանիչներ, սակայն նրանք մթության մեջ ոչինչ անել չկարողացան: Սյուս ինքնաթիղներին ևս փորձեցին խոցել, բայց նորից ապարդյուն: Անգլիացիներն անվտանգ հետ վերադարձան: Կրեմպտոնը վայրէջք կատարեց արևմտյան Գերմանիայում, հետո վերալիցքավորվելով վերադարձավ Սկալտորը: Սա թվում է՝ հերթական ամերիկյան սարդարն էր, սակայն ԽՍՀՄ-ում այս մտքից ուղղակի սարսափում էին, չէ՞ որ ամերիկացիները խորրային անպատճ հետախուզություն էին կատարում ռազմավարական ոմբակոծիչներով, որոնք կարող էին կրել միջուկային ռումբեր: Այլ տվյալներով ինքնաթիղները եղել են «B-47» և երեք ուղղություններով հասել են Նովգորոդ, Կիև և Սանկտ-Պետերբուրգ՝ առևտյան գոտիներում:

Սի միջադեպ տեղի ունեցավ 1954թ. մայիսի 8-ին: Սրանք տոնական նվերներ էին ոռուսների համար: Ըստ նախագահ Դ. Եյզենհաուուրի թույլտվության՝ ամերիկյան 91-րդ ռազմավարական հետախուզական թերքը, որը տեղակայված էր Օհայո նահանգի Լոկրուրն բազայում, ստացավ շտաբների պետերի կոմիտեի հրամանը՝ մի քանի «KC-97» օդային լիցքավորողներ ու «RB-47E Stratojet» հետախուզական ինքնաթիղները ուղարկել Ֆայերֆորդ բրիտանական բազավորության համար սկսել են նոր ռազմական գոտիներում:

<sup>19</sup> Известия, 5.1.1994; <http://news2000.org.ua/print?a=/paper/35151>

<sup>20</sup> The Quarterly Journal of Military History. Spring 1997, N 3, p. 29-30.

<sup>21</sup> И.В. Ерохин. Войска ПВО страны: Прошлое и настоящее, судьба и надежды. Тверь 2004, стр. 34.

ավիաբազա: Այդ օրվա թոփշքն առաջին համանարարությունն էր: Ըստ սցենարի՝ օդ էին բարձրանում երեք ինքնարիո, որոնցից երկուսը, չհասած Մուրմանսկ քաղաք, հետ էին շրջվում, իսկ երրորդը՝ կապիտան Հարոլդ Օստինի գլխավորությամբ (Երկրորդ օդաչու կապիտան Վարլ Հոլտ, շատորման մայոր Վենս Հեվլիթ), պետք է շարունակեր թոփշքը և նկարահաներ խորհրդային 9 օդանավակայանները, որտեղ կարող էին տեղակայված լինել խորհրդային նորագույն ինքնարիոներ: ԽՍՀՄ-ի օդային տարածքում նրանք պիտի կատարեին ավելի քան 950 կիլոմետրանոց թոփշը: Օստինի անձնակազմը խորհրդային օդային սահմանը խախտեց 12 000 մետր բարձրության վրա օրը ցերեկով: Լավ եղանակ էր, նույնիսկ ինքնարիոն իր հետևից սպիտակ գծեր էր թողնում, ինչն անցանկալի էր: Ծառ չանցած, ինչպես և սպասում էին ամերիկացիները, հայտնվեցին խորհրդային կործանիչները, որոնք սկզբից չէին համարձակվում մոտենալ և միայն ուղեկցում էին, իսկ հետո կատարեցին առաջին, սակայն անհաջող գրոհը: Հետո հաջորդ գրոհները, սակայն նորից անհաջող, հավանաբար օդաչուները մեծ բարձրությունների և արագությունների պայմաններում չէին կարողանում ճիշտ հաշվարկել գրոհը: Օստինը փորձեց պաշտպանական հրանոթներով պատասխան կրակ բացել, սակայն չհաջողվեց, հրանոթները չէին աշխատում: Հոլտն ինչ-որ կերպ հրանոթները կիրառեց՝ արձակելով մի փոքր կրակահերթ, որից կործանիչները, որոնք արդեն մի քանիսն էին, հավանաբար վախեցան, քանզի մի որոշ ժամանակ նոտ չէին գալիս: Պայքարն արդեն շարունակվում էր մոտ մեկ ժամ, Օստինն արդեն շրջվել էր հարավ-արևմուտք՝ դեպի ֆինլանդական սահմանը, ի վերջո կործանիչներից մեկը գրոհեց հետևից քիչ քեք և առաջին իսկ կրակահերթով դիպավ թիվն: Անձնակազմը զգաց հզոր հարվածը, որոշ սարքեր շարքից դուրս եկան, դրոնցից էր նաև կապի համակարգը, սակայն ինքնարիոը նորմալ ենթարկվում էր, շարունակում էր թռչել՝ կատարելով առաջադրանքը: Ծուտով ամերիկացիներն իրենց «ուղեկցողներով» մտան ֆիննական օդային սահման, որտեղ դեռ շարունակվում էր օդային մարտը: Սակայն նորից խորհրդային կործանիչներն անհաջող էին գրոհում, նրանցից մեկն անգամ փորձեց խոյահարել, սակայն նորից անհաջող, իսկ այդ պահին նկարահանող ֆոտոսարքերը նրան նկարեցին այդքան մոտիկից<sup>22</sup>:

Խորհրդային կործանիչը, որին հաջողվեց դիպչել ամերիկյան հետախույզին, «ՄԻԳ-17ΠՓ» նորագույն կործանիչն էր, որի օդաչուն էր հյուսիսային նավատորմի լավագույն օդաչուներից մեկը՝ կապիտան Մ. Կիտայչիկը: Նա շատ դառնացած էր, որ ամերիկացիների համար ամեն ինչ ավարտվեց այդքան հեշտ<sup>23</sup>: Ամերիկացիների բախտը քերեց, գեներալ Լի Սեյի մոտ ընդունելության ժամանակ Օստինը խոստովանեց, որ եթե կործանիչները գրոհեին պոչի կողմից, ապա նրանք հաստատ կիսոցեին «RB-47E Stratojet»-ին<sup>24</sup>:

1954թ. խորհրդային հակաօդայինները ձեռք բերեցին ևս մեկ լուրջ թշնամի՝ ավտոմատ թափառող աերոստատները, որոնք, թռչելով բավականին բարձր, կատարում էին ավտոմատ հետախուզություն: Այդ տարի ամռանն առաջին նման աերոստատին խոցեց կապիտան Լ. Սավիչը նորագույն «ՄԻ-17Π» կործանիչով 10 000 մետր բարձրության վրա: Առհասարակ աերոստատների հետ սկզբից գրեթե անհնար էր պայքարել:

Հաջորդ տարի՝ 1955թ. մարտին, անգլիական Ակադեմիական ռազմաօդային բազայից երեք անգամ ամերիկյան «RB-45 Tornado» հետախույզները՝ մայոր Չոն Անդերսոնի հրամանատարությամբ, եվրոպական մասից խախտեցին խորհրդային օդային սահմանը:

Նույն ժամանակ ամերիկացիներն իրականացրեցին մի ռազմական գրոծողություն՝ մի քանի ինքնարիոներով հետախուզելով խորհրդային հյուսիսային սահմանները: Ամերիկացիների քաղած տվյալների համաձայն՝ ԽՍՀՄ-ը հզորացնում էր իր ՀՕՊ-ը: Անհրաժեշտ էին ավելի շատ և ստույգ տվյալներ:

1956թ. գարնանն ԱՄՆ-ի նախագահի թույլտվությամբ սկսվեց հետախուզական «Hurman» գործողությունը: Գործողությունը չտեսնված բարդ էր ու ծավալային: Խորհրդային ողջ հյուսիսային սահմանները, որ կազմում էին ավելի քան 5000 կմ, պետք էր հետախուզել ամենայն մանրամասնությամբ: Գործողությունը պլանավորում էր զննապետ Գլեն Ռոջերսը: Գործողությանը պիտի մասնակցեին ամերիկյան «RB-47E» և «RB-47H» ավելի քան 20 հետախույզ ինքնարիոներ: Նրանց օդում վերալիցքավորելու համար կիրառվելու էին տասնյակ «KC-97» լիցքավորող

<sup>22</sup> К. Пиблз Тайные полеты. Смоленск, 2002; <http://www.airwar.ru/locwar.html>; И.В. Ерохин. Войска ПВО страны: Прошлое и настоящее, судьба и надежды. Тверь 2004, стр. 34.

<sup>23</sup> The Quarterly Journal...

<sup>24</sup> А. Котлобовский. И. Сеидов. Горячее небо...; <http://www.airwar.ru/locwar.html>

ինքնարիոները: Բոլոր ինքնարիոները տեղակայվել էին Գրենլանդիայի Տուլե բազայում: Ամեն ինչ կատարվում էր գերազույն գաղտնիությամբ: Մեծ տեղ էր հատկացվում ռադիոհետախուզությանը, որը պետք է իրականացնեին «RB-47H» ինքնարիոներից: Դժվարություններից խուսափելու համար թոփքները նախատեսված էին իրականացնել վատ եղանակային պայմանների ժամանակ և գիշերվա ժամերին:

Ամենահանդուզն թոփքը տեղի ունեցավ մայիսի 6-ին, երբ ամերիկյան վեց ինքնարիոն թոշելով հասան մինչև Ամաղիր և թերվելով դեպի արևելք՝ անցան Ալյասկա<sup>25</sup>: Հաջորդ օրը նրանք նույն թոփքուղղվ վերադարձան Տուլե: Յոթ շաբաթվա ընթացքում կատարվեց ավելի քան 150 հետախուզական թոփք ԽՍՀՄ-ի օրային տարածքում, և ինքնարիոները ոչ մի տեսակի կորուստ չունեցան: Գործողությունների ողջ ընթացքում խորհրդային կործանիչները ընդամենը մի քանի անգամ էին փորձել խոցել ամերիկյան ինքնարիոններին՝ այն էլ անարդյունք: «Hurman» գործողության արդյունքները փայլուն էին ու ցնցող, խորհրդային օդային սահմանները հյուսիսից գրեթե անպաշտպան էին<sup>26</sup>:

1956թ. հուլիսի 4-9-ը կատարվեց հետախուզությունների 5 բափանցում խորհրդային տարածքներ՝ մինչև 350 կմ խորությամբ:

1956թ. խորհրդային ավիացիայում սպառագինության մեջ է ընդունվում նորագույն «ՄԻԳ-19» կործանիչը, և հենց նույն ժամանակ, երբ օդաչուները դեռ նոր էին յուրացնում այս կործանիչը, հուլիսի 4-ին ամերիկյան «RB-57 Canberra» հետախուզով խախտեց ԽՍՀՄ-ի սահմանը, սակայն ող բարձրացած երկու կործանիչներից ոչ մեկը չկարողացավ խոցել նրան: Իսկ հաջորդ օրը մեկ ուրիշ ամերիկյան հետախուզով խախտեց սահմանը, անցավ ԳԴՀ-ի, Լեհաստանի սահմանները և մտավ Բելառուսական ՍՍՀ-ի տարածքը: Ամբողջ ընթացքում այս սահմանախախտին խոցելու համար ող էին բարձրացել ավելի քան հարյուր կործանիչներ, որոնցից մի քանիսը նորագույն «ՄԻԳ-19»-ներ էին<sup>27</sup>: Սակայն այդ բոլոր քայլերն ապարդյուն անցան: Սահմանախախտն անվճառ հետ վերադարձավ՝ հսկայական հետախուզական տվյալներ հավաքած:

Ամերիկյան օդային հետախուզության համար այս թվականը հիշարժան է նաև նրանով, որ 1956թ. Թուրքիայի և Գերմանիայի տարածքից դեպի ԽՍՀՄ էին արձակվում հետախուզական աերոստատներ, որոնք, նկարահանումներ իրականացնելով, պետք է հասնեին մինչև Խաղաղ օվկիանոս: Սակայն արձակած 516 աերոստատներից միայն 44-ը հասան տեղ, մնացածին ոչնչացրեցին խորհրդային հակառակյանները<sup>28</sup>:

ԽՍՀՄ-ի դեկավարությունը նման հետախուզական թոփքների դեմ պայքարելու համար փորձում էր կատարել ամեն ինչ, և 1958թ. հուլիսի 4-ին արձակվեց պաշտպանության նախարարի № 0049 հրամանը, որը նախատեսում էր խոցել պետական սահմանախախտներին:

1958թ. շատ ակտիվ էին անգլիական «RB-57 Canberra»-ները և դրանց ամերիկյան «Եղբայրներ» «RB-57 Canberra»-ները, որոնք անպատճ մեկ անգամ չեն, որ հասնում էին մինչև անգամ Կիև ու Մոսկվա: Վերը նշվածները 1958թ. համարվում էին բավականին բարձրաթիվը: «RB-57 Canberra»-ի հատուկ հետախուզական տարրերակները կարող էին բարձրանալ մինչև 15-16 կմ:

1959թ. հոկտեմբերի 7-ին չինական երկնքում գրանցվեց հաղթանակ՝ խորհրդային հակառակյանների կողմից խորհրդային նորագույն «C-75» ԶՀՀ-ներով խոցվեց ամերիկյան «RB-57D Canberra» հետախուզական ինքնարիոնը: «C-75» ԶՀՀ-ին բախտ էր վիճակված լինել խորհրդային ուժերի նման առաջին և հուսալի պաշտպանը: Շատ զավեշտական պատմություններ են կապված այս համալիրի հետ:

Չինական երկնքում խորհրդային նորագույն ԶՀՀ-ի հաջողության մասին մենք արդեն նշել էինք, սակայն դա դեռ բոլորը չեն: Հայրենի երկնքում այս զենքի դեբյուտը եղավ 1959թ. նոյեմբերի 16-ին, երբ

<sup>25</sup> Независимое военное обозрение. Пятница, 04 июля 2008. №22 (574); <http://nvo.ng.ru/gazeta>

<sup>26</sup> <http://www.airwar.ru/locwar.html>

<sup>27</sup> А. В. Федорченко, А. В. Котлобовский, А. В. Хаустов. Непризнанный в своем отечестве // Авиация и Время. 1995. № 5, стр. 2-20; Ефим Гордон Первый советский сверхзвуковой // Авиамастер (приложение к журналу Техника — молодежи). 1999. № 1, стр. 37-49; Якубович Н. В. Истребитель МиГ-19 // Авиаколлекция (приложение к журналу Моделист-конструктор). 2003. № 1; Беляков Р. А., Мармен Ж. Самолеты МиГ 1939—1995, Москва: АВИКО ПРЕСС, 1996, стр. 134-157; Подреший Е. И. Реактивный прорыв Сталина — Москва: Язва, Эксмо, 2008, стр. 276-349; Война в воздухе № 107, 2004.

<sup>28</sup> The Quarterly Journal...

Վոլգոգրադի մոտ «С-75» համալիրով 28 000 մետր բարձրության վրա խոցվել էր ամերիկյան հետախուզական աերստատը:

Վերը նշված ժամանակաշրջանում ամերիկյան և հիմնականում NATO-ական հետախուզական և սպառիչ թոփշքները, որոնք անցնում էին մի քանի հազարը, իրենց նպատակին հասան՝ ապացուցելով, որ խորհրդային ՀՕՊ-ը հուսալի չէ, և, առհասարակ, երկրի տարածքը հուսալի պաշտպանված չէ: Լինում էին դեպքեր, որ սահմանի մոտակայքում թոշող ինքնարիոները ռադիոխանգարումներ էին ստեղծում՝ խափանելով այս կամ այն համակարգի շահագործումը: Ըստ տարբեր տվյալների՝ մինչև 1960թ. խորհրդային սահմաններում ամերիկացիները կորցրել են 17-25 տարատեսակ հետախուզական ինքնարիոներ, որոնց անձնակազմը հիմնականում զրկվել էր կամ անհետ կորել: Խորհրդային կործանիչ ավիագնդերից մեկը հեռավոր արևելքում 1962-66թթ. ընթացքում կատարել էր ավելի քան 960 մարտական թոփշ՝ սահմանախախտների դեմ պայքարելու համար:

Ավանդական հետախուզության համար «RB-47 Stratojet»-ից և «RB-57 Canberra»-ից հետո այլ ինքնարիոնի կիրառման մասին խորհեիս ամերիկացիները կանգ էին առել մի շատ բարդ խնդրի առաջ: Նրանք այդ մասին սկսել էին մտածել դեռ հետախուզական հիմնենսիվ թոփշքների սկզբից, քանի որ այս ժամանակներն ավիացիայի բուն զարգացման տարիներն էին: Ամերիկացիները, կիրառելով բազում հետախուզական ինքնարիոներ հասկացան, որ նրանք բոլորն ել կարծ ժամանակ անց դառնում են խոցելի, քանի որ հատկապես խորհրդային «ՄԻԴ»-երը տարեցտարի ավելի ու ավելի էին հզրանում: Անհրաժեշտ էր ստեղծել հատուկ հետախուզական ինքնարիոն և այնպիսի մեքենա, որը խոցվելոց ձերբազատված լիներ հնարավորին երկար ժամանակ: Կիրառվող հետախուզական ինքնարիոների փոխարինողը պատրաստվում էր քայլ առ քայլ:

Այսինքն՝ ամերիկացիներն իրականացնում էին իրենց հստակ մշակված օդային պատերազմը խորհրդային երկնքում և մտադրությունից ետ կանգնելու ցանկություն չունեին: Հայտարարվեց մրցույթ, որին ներկայացված լավագույն նախագիծը ճանաչվեց «Lockheed» ընկերության ավիակոնսուլտոր Կլարենս Ջոնսոնի «CL-282» նախագիծը: Մրցույթի հովանավորը ոչ թե Ω-ՕՌι-ն էր, այլ ԿՀՎ-ն, ինչը նշանակում էր, որ ամեն ինչ շատ լուրջ էր և գաղտնի: Առհասարակ, խորհրդային օդային տարածքի խախտումների հիմնական պատվիրատուն երթեմն հենց այս կազմակերպությունն էր: Աշխատանքները ընթանում էին բավականին արագ տեսայերով և արդյունավետ: 1955թ. օգոստոսին իր առաջին թոփշը կատարած «U-2 Dragon Lady» ինքնարիոն մեկ տարի անց արդեն մշտական հետախուզական թոփշներ էր կատարում խորհրդային, չինական և այլ տարածքներում: Ինքնարիոն ուներ առավելագույնը 7-8 տոննա քաշ, 850 կմ/ժ առավելագույն արագություն, 8000-8500 կմ թոփշային հեռավորություն, սակայն այս անհասանելի հետախույզի գաղտնիքը նրա թոփշային բարձրությունն էր, որը կազմում էր 21 000 մետր և ավելի: Ամենազարմանալին այն էր, որ առավելագույն թոփշային բարձրությամբ «U-2»-ը կարող էր թոշել ոչ թե մի քանի բռպե, այլ ամբողջ թոփշի ընթացքում: Ինքնարիոն այդ ամենի համար ուներ շատ մեծ թևեր՝ 24,38 մետր թևերի բացվածքով և 55,7 մ<sup>2</sup> մակերեսով: Այս զարմանալի մեքենան հետազոտում պիտի դառնար բոլոր ժամանակների ամենահայտնի և սկանդալային ինքնարիոներից մենքը: «U-2»-ը կառուցված էր հանճարեղորեն՝ համարելով պարզության և բարդության տարրեր:

Նոր հետախուզական ինքնարիոների առաջին ստորաբաժանումը, որը ոչ պաշտոնական գրականության մեջ կոչվում է ստորաբաժանում «10-10», տեղակայվեց արևմտյան Գերմանիայում: Ամեն ինչ կազմակերպվում էր շատ մանրակրկիտ և հուսալի, ԿՀՎ-ն իր ուղղակարական ծրագրերի իրագործման համար միջոցներ չեր խնայում: Թոփշների թույլտվություն պետք է տար անձամբ ԱՄ-ի նախագահը:

Առաջին հետախուզական թոփշը «U-2»-ն իրականացրել է 1956թ. հունիսի 20-ին<sup>29</sup>: Թոփշը կոչվում էր «Առաջադրան 2003»: Օդ բարձրանալով Արևմտյան Գերմանիայից՝ օդաչու Կարլ Օվերստրիտն արևելյան եվրոպայի կոմունիստական երկրերի տարածքներում կատարեց հետախուզություն և վերադարձավ Վիսբադեն<sup>30</sup>: Ողջ թոփշի ընթացքում պահպանվում էր ուղղություն: Մեկ օր անց արդեն քննարկվում էր խորհրդային տարածքներում թոփշների հեռանկարը:

<sup>29</sup> К. Пиблз. Тайные...

<sup>30</sup> А.Котлобовский. И. Сеидов. Горячее..., <http://www.airwar.ru/locwar.html>

Հուլիսի 2-ին իրականացվեց ևս երկու թոհջք գրեթե նույն թոփքուղով (*առաջադրամը 2009 և 2010*) կոմունիատական երկուների վրա: Երկու ինքնարիոներն էլ անվնաս տեղ հասան՝ իրենց հետ բերելով հսկայական հետախուզական տեղեկություններ:

Իսկ հուլիսի 4-ին կայացավ առաջին թոհջքը խորհրդային տարածքների վրա (*առաջադրամը 2013*): Ինքնարիոր (կողային համարը 341, գործարանային համարը 56-6680) օդ բարձրացավ Գերմանիայի Ֆեներատիվ հանրապետության (ԳՖՀ) Վիսրադեն օդանավակայանից, օդաչուն էր Հարվի Շթորմանը: Անցնելով Արևելյան Գերմանիայի տարածքները, հյուսիսային Լեհաստանը՝ Շտոկմանը մտավ բելառուսկան տարածքներ, անցավ Մինսկը և ուղղություն վեցրեց դեպի Լեհինգրադ: Նա հետագայում խոստվանել է, որ վախենում էր: Ծուտով նա տեսավ նաև առաջին «ՄԻԴ»-երին, որոնք հուսահատորեն փորձում էին հասնել նրան, սակայն ապարդյուն: Շթորմանը նկարիանեց Լեհինգրադի մոտակայքի նավաշինական գործարաններն ու ոմբակոծիչ ավիացիայի օդանավակայանները<sup>31</sup>: Կործանիչները բազում անգամ փորձում էին հասնել նրան, սակայն ապարդյուն, նա նույնիսկ նկարեց մի քանիսին: «U-2»-ը Բալթիկ ծովի ափերով հետ վերադարձավ և վայրէջ կատարեց Վիսրադենում: Թոհջքը տևեց գրեթե 9 ժամ:

Այս թոհջքը նվիրված էր ԱՄՆ-ի անկախության օրվան: Խրուչովը գտնվում էր ԽՍՀՄ-ում՝ ամերիկյան դեսպանատանը, երբ նրան հայտնեցին այդ մասին:

Հաջորդ թոհջքը տեղի ունեցավ հաջորդ օրը (*առաջադրամը 2014*): Կարմեն Վիտոն օդ բարձրացավ նույն տեղից, մարտական առաջադրամքը սակայն այլ էր: Նա ուղղություն վեցրեց դեպի Կիև: Նորից խորհրդային ՀՕՊ-ի ուժերը միանգամից հայտնաբերեցին սահմանախախտին: Կործանիչներն օդ էին բարձրանում առանց ժամանակ կորցնելու, սակայն, ավաղ...: Հասնելով Կիև՝ Վիտոն ինքնարիոր թեքեց դեպի Մինսկ, որից հետո հասնելով այնտեղ՝ դարձավ դեպի Մոսկվա: Խորհրդային դեկավարությունը զայրույթից ատամներն էր կրծտացնում: Վիտոն կարծես դիտմանք երկու անգամ անցավ Մոսկվայի վրայով, հատուկ նկարահանեց նորագույն ՀՕՊ-ի համալիրները, որոնք նախատեսված էին մայրաքաղաքի պաշտպանության համար: Վիտոն հանգիստ նկարահանեց Մոսկովյան շրջանի բոլոր ռազմավարական օբյեկտները և մերձբալթյան երկրների վրայով վերադարձավ Վիսրադեն: «U-2»-ը ԽՍՀՄ-ի եվրոպական մասում հայտնաբերեց ցանկալի ռազմավարական ոմբակոծիչ ինքնարիոները, որոնցից այնքան վախենում էին ԱՄՆ-ում: Պարզվեց, որ նրանց քանակը շատ ավելի քիչ է, քան կարծում էին ԱՄՆ-ում: Հետագայում խորհրդային պաշտոնարող օրաչու գնուապես Վասիլի Պիկալինը այսի պատմի, որ այդ օրը նրան նորագույն «ՄԻԴ-19» կործանիչով Ռիգայի մոտակայքից օդ բարձրացրեցին սահմանախախտին խոցելու, սակայն ուղղորդողները խառնվեցին, իսկ բարձրությունը չէր բավարարում: Հաջորդ օրը վերգետնյա ուղղորդողները նույնիսկ երկու խորհրդային կործանիչներին միմյանց դեմ հանեցին: Մեկ այլ անգամ վայրէջի ժամանակ վրարկեց օդաչու կապիտան Կապուստինը: Խրուչովը սահմանախախտ ինքնարիոնին խոցող օդաչուին խոստացել էր հերոսի կոչում տալ, իսկ նախարարը՝ զինվորական կոչում:

Հետախույզների հանդուգն թոհջքների ընթացքում խորհրդային ՀՕՊ-ը ոչ միշտ էր կարողանում հետևել սահմանախախտներին, իսկ ամերիկյան ռադիոհետախուզական ուժերն ամեն տեղից հետևում էին խորհրդային ուժերի գործողություններին:

Հուլիսի 9-ին միանգամից երկու ինքնարիոններ կատարեցին հետախուզական թոհջքներ: Առաջինը՝ զիգզագներով (*առաջադրամը 2020*) անցավ մերձբալթյան երկրների վրայով, չհասած Մինսկից հարավ, ու նորից նկարահանելով Լեհաստանը՝ վերադարձավ Վիսրադեն:

Երկրորդը՝ (*առաջադրամը 2021*) շատ ավելի բարդ ու երկար թոփքուղի անցավ: Ակսելով Վիսրադենից՝ այն անցավ Պրահան, ավստրիական հողով մտավ Բուլղարիայով, հետո Լվովի վրայով անցավ Կիև, շրջեց Մինսկ ու նորից մերձբալթյան երկրների վրայով վերադարձավ: Հաջորդ օրը (*առաջադրամը 2023*) «U-2»-ը հասավ մինչև Ղրիմի թերակղզի, նկարելով Սևստոպոլը, Սիմֆերոպոլը, Օդեսան, վերադարձավ Վիսրադեն: Նույն օրը խորհրդային կողմն ամերիկյան դեսպանատանը հանձնեց բողոքի նոտա՝ հուլիսի 4-ին և 5-ին կատարած թոհջքների վերաբերյալ: Նոտան իրենից ներկայացնում էր հետաքրքիր հետախուզական փաստաթուրը: Ինչպես երևում էր նոտայից, ուստաները թոհջքների ողջ երկարությունը չէին վերահսկել, քանի որ իրենց թվում էր, թե սահմանախախտը խորացել է մի քանի հարյուր կմ: Ինչպես նաև ուստաները մտածում էին, որ սահմանախախտը երկարժիշտնի ոմբակոծիչ է: Հետո հետևեցին այլ պետությունների բողոքները, որոնցից հատակ

<sup>31</sup> Նույն տեղում:

Երևում էր, որ ոչ մեկն էլ չի կարողացել հստակ հետևել սահմանախախտին և, որ ամենակարելորն էր, ոչ մեկը չգիտեր, թե դա ինչ ինքնաթիռ է։ Այս ինքնաթիռը ռադիոալիքների համար որոշակիորեն անտեսանելի էր, ինչպես նախատեսել էր կոնստրուկտորը։ Դա հետագայում կապացուցվի։

Ամերիկացիներն այդ բոհքներից կատարեցին հսկայական հետևողություններ և, բնականաբար, շատ զի՞ն էին: Ժամանակավորապես ԿՀՎ-ի «սավառնակները» դադարեցրեցին իրենց «սանձարձակությունները»: Սակայն նոր տարվա սկզբից աշխատանքները վերականգնվեցին:

1957թ. երկու «ՄԻԴ-17Պ» կործանիչ 17-րդ կործանիչային ավիագնդից Պրիմորեյում փորձեցին խոցել անկոչ հյուրին, սակայն, բնականաբար, բարձրությունը չբավարարեց: Նույն տարում նման կործանիչով Ուգրեկստանի սահմանի մոտակայքում 9-րդ գվարդիական կործանիչային ավիագնդից մեկ այլ օրաշու փորձեց հասնել սահմանախատին, սակայն նորից ապարդյուն:

Հայտ պահեստի գեներալ-գնդապետ Յով. Վոտինցեկի, ով 1957թ. հանդիսանում էր Մոսկվան պաշտպանող ՀՕՊ-ի բանակի հրամանատարի տեղակալը՝ նոյն բվականի օգոստոսին Մոսկվան համարվում էր հուսալիորեն պաշտպանված «С-25 Եօրկու» ԶՀՀ-ով: Եվ այդ ամսում նորից Մոսկվային է նոտենում «Ս-2»-ը: Գեներալն ասում է, որ թոփշքին հետևող մասնագետներն ապշած էին նրա թոփշքի բարձրությունից, թոփշքի երթեմն կանգնելու աստիճան հասնող արագությունից և հաճախակի կարծ ժամանակներով էլեկտրանից առհասարակ անհետանալուց<sup>32</sup>: Տվյալ պահին նրան անտեսանելի էին անվանում, եղան քննարկումներ ամենաբարձր մակարդակներով, ոմանք առհասարակ կասկածում էին այդ բարձրություններում թռչելու իրողությունը, իսկ մյուսներն առհասարակ երկնտանքի մեջ էին (շատերը, բայց ոչ փորձառու *Ա.Տուպովիք*, ով շատ միշտ էր կրահել այդ ինքնարիոի կառուցվածքը): Գեներալի հիշելով՝ հրթիռները մարտական վիճակի բերեցին, սակայն այլևս նման թոփշքներ չկրկնվեցին:

Կան տեղեկություններ այն մասին, որ խորհրդային առաջին «С-25 Եօրկյ» ԶՀՀ-ով, «U-2»-ին խոցել, այնուամենալիվ, փորձել են, սակայն արձակած հրթիռները նպատակին չեն հսկել:

1959թ. փետրվարին «Ա-2»-ը հերթական անգամ խախտեց խորհրդային սահմանը, նրան խոցելու համար Միջին Ասիայից օդ բարձրացրեցին «ՄիԳ-19»-ին (այլ տվյալներով՝ «ՄիԳ-17»), որը դեկավարում էր եսկաղրիլիայի հրամանատար փորձառու օդաչուն: Սահմանախախտը գտնվում էր 20 կմ բարձրության վրա: «ՄիԳ-19»-ը դինամիկ առաստաղով բարձրացավ մինչև 17,5 կմ այլևս ոչինչ անել չէր կարող: Եթե օդաչուն վայրէջք կատարեց վերադաս հրամանատարությանը զեկուցեց, որ տեսել է մեծ թերուով, խաչաձև ինքնարթին: Հրամանատարությունը նրան շիավատաց:

Սինչև 1960թ. ամերիկյան «U-2» հետախույզները ԽՍՀՄ-ի բոլոր կողմերից կատարեցին ավելի քան 30 հետախուզական թռիչքներ: Նրանք գործում էին բուրքական հնջիրլիք, ճապոնական Ատոմ և հատկապես պակիստանյան Փեշավար օդանավակայաններից: Խորհրդային ոչ մի տարածք անհետա չէր մնում:

1960թ. փետրվարի 5-ին «U-2»-ը նորից հասավ Մոսկվայի մոտակայքը և նկարահանեց երկարգծի ճյուղավորումներն իրենց շարժագնացքներով<sup>33</sup>:

1960թ. ապրիլի 5-ին ամերիկյան հետախույզը հասավ մինչև խորհրդային տիեզերանավակայան, որն այն ժամանակ դեռ կոչվում էր հրթիռային հրածգարան, և նկարահանեց այդ օբյեկտը<sup>34</sup>:

Ինքնարիոի հաջողությունները ցնցող էին, այն հետախուզական բոիչքներ էր կատարում խորհրդային ամենակարևոր շրջանների վրա՝ սահմանը խախտելով ցանկացած կողմից: «U-2»-ները գործում էին նաև Իրանում և Ալյասկայում տեղակայված ամերիկյան բազաներից:

1960р. аялрիլի 9-ին Պակաստանի Փեշավար քաղաքից օդ բարձրացած և Թուրքմենիայի կողմից խորհրդային սահմանը խախտած «U-2»-ի օդաչուն էր հետաքայում հայտնի դարձած Ֆրենսիս Հարի Փառուերը: ՀՕՊ ուժերի ջանքերու պարդյուն էին, հետախույզը մեկ ռազմավարական օրբեկուից անվնաս անցնում էր մյուսին: Ուրախ օդանավակայաններից մեկից օդ են բարձրանում երկու «ՄիԳ-19» կործանիչներ, որից մեկը վարում էր կապիտան Գենադի Գուսևը, իսկ մյուսը՝ ավագ լեյտենանտ Վադիմիր Կարչևսկին: Երբ նրանք մոտենում են Սվերդլովսկ քաղաքին վերափոխվովելու

<sup>32</sup> Ю.В. Вотинцев. Неизвестные войска исчезнувшей сверхдержавы. Военно-исторический журнал. 1993.8,9,10,11.

<sup>33</sup> К. Пиблз. Тайные...; <http://www.lockheedmartin.com/products/u2/u-2-specifications.html>

<sup>34</sup> А. Докучаева, "Как сбили Фрэнсиса Пауэрса", <http://combatavia.info/razyi61.html>.

<http://www.lockheedmartin.com/products/j2/j2-specifications.html>

նպատակով, վերջինիս ինքնարթիոր հանկարծակի վթարվում է, և օդաչուն, փորձելով փրկել իքնարին, ուշ է կատարում ինքնանետումը (կատապուլտ) և մահանում: «U-2»-ն, այսպես էլ անպատճի անցնելով տարածքներ, հետախուզեց Սարի-Շագանի գաղտնի հրաձգարանը, այնուհետև մոտեցավ այն ժամանակ դեռ Տյուրա-Տամ կոչվող գաղտնի օբյեկտին, որը հետագայում հայտնի դարձավ, որպես Բոյկանոր տիեզերանավակայան: Օդ բարձրացած տարրեր կործանիչները ոչինչ անել չկարողացան: Թուրքմենիայի տարածքով հետախույզի հետ վերադառնալուց նորից «Су-9»-ին օդ բարձրացրեցին, սակայն օդաչուները մեծ բարձրությունների վրա թռչելու փորձ չունեին, վերգետնյա ուղղորդման մասնագետները նման փորձ չունեին, կործանիչների վրա համապատասխան սպառագինուրյուն չկար և այլն և այս:

ՀՕՊ կորպուսի հրամանատար գեներալ Յու.Վոստինցևը 156-րդ կործանիչային ավիազնիք երկու «ՄԱՐ-17» կործանիչների օդաչուներին հրամայեց իրանի օդային սահմանը խախտելով ուղեկցել սահմանախատին, այնքան մինչև վայրէջքի նապատակով իջնող «Ս-2»-ին հնարավոր լինի խոցել (այլ տվյալներով՝ «ՄԱՐ»-երև ող էին բարձրացել «Ծу-9»-ի օդաչու կապիտան Դորոշենկոյին օդանավակայան ուղեկցելու համար, բանի որ վերջինս մոլորվել էր և վատելիք չուներ): Սակայն խորհրդային օդաչուներն, անցնելով մոտ 300 կմ, արդեն հետապնդումը շարունակելու հնարավորություն չունեին, քանի որ վերջանում էր վատելանյութը, և հետ վերադարձան<sup>35</sup>:

«U-2»-ի առաջին և ամենանշանակալի կորուստը եղավ 1960թ. մայիսի 1-ին, երբ այժմյան Եկատերինքուրգ քաղաքի մոտակայքում խորհրդային «C-75» ԶՀՀ-ով խոցվեց Ֆրենսիս Փաուերսի կողմից դեկավարվող ինքնաթիռը: Այս դեպքը համաշխարհային խայտառակություն դարձավ: Օդաչուին ցուցադրական դատարանով դատեցին, երկրի դեկավարությունը բացահայտ մեղադրեց ամերիկյան կողմին: Այստեղ կա մի հետաքրքիր նրբություն, մինչև Փաուերսի խոցումը խորհրդային փառաբանված հետախուզությունը գրեթե տեղեկություն չուներ ամերիկյան հետախույզի մասին: Տասնյակ օդաչուներ և օպերատորներ արդեն ինձն տարի է գեկուցում էին քանի կա-ի վրա թոշող ինքնաթիռի մասին, իսկ շատ գեներալներ չին հավատում նրանց: ԿՀՎ-Ա, չնայած իր գերգաղտնիության ապահովման բոլոր քայլերին, թույլ էր տվել մի քանի այնպիսի վրիպումներ, որ թվում էր «U-2»-ի գաղտնիքը վաղուց կորսված է: Մի քանի անգամ հետախույզի շարժիչի խափանման պատճառով այն հայտնվել էր բավականին ցածր բարձրությունների վրա, անգամ մեկ անգամ Չինաստանի երկնքում: Ըստ ոռուսական աղբյուրների՝ օդաչուն, հայտնվելով իրեն խոցել փորձող կործանիչների ճանկերում, պայքեցրել էր ինքնաթիռն իր հետ: Իսկ այլ անգամ՝ 1959թ. սեպտեմբերի 24-ին, խորհրդային օդային տարածքից վերադարձող օդաչուն շարժիչի պատճառով վայրէց կատարեց մի ճապոնական քաղաքացիական օդանավակայանում: Ինչքան էլ որ ինքնաթիռն այստեղ թիշ մնաց, միևնույն է, մի «էնուուզիաստ» հասցրել էր նկարել ինքնաթիռը, տվյալներ հավաքել նրա մասին և նույնիսկ տպել թերթում: Սակայն այս ամենից հետո էլ խորհրդային կողմը կուր էր:

Փառերսի խոցման օրը ևս առանց զոհերի չեղավ, ապրիլի 9-ին զոհված օդաչու, ավագ լեյտենանտ Վլադիմիր Կարչևսկու զորամասից նորից օդ բարձրացվեցին երկու «ՄԻԳ-19» կործանիչներ: Խճնաթիոններից մեկը վարում էր էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ կապիտան Բորիս Այվազյանը, իսկ մյուսը՝ ավագ լեյտենանտ Սերգեյ Սաֆրոնովը: Նրանք լիցքավորման նպատակով վայրէջք կատարեցին Սվերդլովսկի Կոլցով օդանավակայանում: Նույն օդանավակայանում էր պատահաբար հայտնվել կապիտան Իգոր Սենտյուկովը, ով իր «Су-9»-ը գործարանից տեղափոխում էր զորամաս: Անմիջապես օդ են բարձրացնում Սենտյուկովին, չնայած նա առանց սպառազինության էր: Պիտի խոյահարեր, սակայն նորից վերգետնյա ուղղորդման մասնագետները սիսալվում են և հերոսությունը չի ստացվում: Սենտյուկովը մի կերպ վայրէջք է կատարում Կոլցովիում: Հետո օդ են բարձրացնում երկու «ՄԻԳ»-երին, այդ ընթացքում ԶՀՀ-ն խոցում է «Ս-2»-ին, սակայն իրադրությունը ոչ մեկը չէր հասկանում. մոտ կես ժամ քառու էր: Շարունակում են հրիտներ արձակել արդեն օդում կործանվող հետախույզի վրա: Մյուս դիվիզիոնի գենիերայինները Սերգեյ Սաֆրոնովի կործանիչը ընդունում են որպես հետախույզ և հրթիռ արձակում նրա վրա: Սաֆրոնովը մահանում է: Այվազյանը մի կերպ է փրկվում՝ ենթափուլակցորեն կործանիչը կտրուկ թերելով ներքև: Խառնաշփորի մեջ արձակում է 14 հրթիռ, այնինչ առաջին արձակումն արդեն խնդիրը լուծել էր<sup>36</sup>:

<sup>35</sup> Ю.В. Вотинцев. Неизвестные...

<sup>36</sup> И.В. Ерохин. Войска ПВО страны: Прошлое и настоящее, судьба и надежды. Тверь 2004, стр. 44.

Խորհրդային «С-75» ԶՀՀ-ն առաջին անգամ չէ, որ հաջողության էր հասնում:

Սվերդլովսկի խոցումից հետո ԱՄՆ-ի նախագահ Դ.Էյզենհաուերն արգելեց «U-2»-երի թոփքը ԽՍՀՄ-ի տարածքով: Սակայն դրանք վերսկսվեցին 1962թ. օգոստոսի 30-ին, ամերիկացիները «U-2»-ով սահմանը խախտեցին այս անգամ Սախալինի ուղղությամբ, ԽՍՀՄ-ը բռնորդեց: Ամերիկացիները նույնիսկ ներդուրոյուն խնդրեցին:

Տեսատեմքերի 9-ին «U-2»-ը խոցվեց չինական Նանչան քաղաքի երկնքում: Չինական հակառակայիններն առհասարակ «U-2»-ների խոցման հարցում ռեկորդակիր են (Խոցել են 1963թ. նոյեմբերի 1-ին, օդաչուն գերի է ընկել: 1964թ. հուլիսի 7-ին օդաչուն մահացել է: 1965թ. հունվարի 10-ին Պեկինի մոտակայքում օդաչուն գերի է ընկել: Նոյյան թվականի նոյեմբերի 28-ին<sup>37</sup>, 1967թ. սեպտեմբերի 9-ին, օդաչուն մահացել է):

Ամերիկյան այդ հետախույզները թոփքներ էին կատարում նաև այլ պետությունների տարածքներում, մի քանի խոցումները ստիպեցին պակասեցնել նրանց թոփքների քանակը: 1962թ. սկսված Կարիբյան ճգնաժամի պատճառով հոկտեմբեր ամսին «U-2»-ների թոփքները Կուրայի երկնքում նորից ակտիվացան: Արդեն կատարվել էր տասնյակից ավելի թոփքներ, երբ «С-75» ԶՀՀ-ն հաջողության հասավ նաև Կուրայի երկնքում, հակառակորդ նորից նոյն ամերիկյան հետախույզն էր: Խորհրդային սպան գործել էր առանց հրամանի, սակայն նրան դրա համար չպատճեցին: Մահացավ օդաչու Ռուուլֆ Անդերսը: «U-2»-ների թոփքները դադարեցվեցին, սակայն ոչ հետախուզական թոփքները: Այս անգամ հերոսը «RF-101 Voodoo» հետախույզն էր, որը կարող էր թռչել երկու անգամ արագ, սակայն ոչ այնքան բարձր: Առաջին ցածր թռչքը կատարեց ամերիկացի օդաչու Վիլյամ Էկկերը: Մի քանի թոփքներից հետո ամերիկացիները ստացան այն տեղեկությունները, որ կամենում էին: Նման ցածր ու հաճախակի իրականացվող թոփքները շատ էին ազդում Կուրայում տեղակայված գորքի հոգեբանության վրա: Կուրայի առաջնորդ Կաստրոն հրամայեց կրակ քացել նրանց վրա, շատ ինքնարիներ վերադառնում էին գնդակների հետքերով, սակայն ոչ մի ինքնարին չխոցվեց այլև: Խոկ ճգնաժամի քննարկումների ժամանակ Սիկոյանը Քենեդուն առաջարկում էր կղզու սպառազինման վերահսկողությունն իրականացնել հենց «U-2»-ների միջոցով, որոնք անհասանելի էին կուրացիների համար<sup>38</sup>:

Ամերիկյան դեկավարությունն, անտեսելով կրուստները, ոչ միայն կանգ չեր առնում, այլ կատարելագործում էր միջոցներն ու եղանակները: Հոկտեմբերի 28-ին նրանք նորից «U-2»-ով խախտեցին խորհրդային սահման՝ այս անգամ Չուկոտկայի կողմից: Հետազայում էլ «U-2»-ները քուել են խորհրդային և այլ կոմունիստական պետությունների սահմաններում:

Խորհրդային տարածքների հետախուզության գործում լայնորեն կիրառվում էին նաև քաղաքացիական ինքնարիները: Նրանց վրա տեղադրվում էին թաքցրած ֆուտուրարավորումներ և նրանք, իրենց հիմնական թոփքուղուց մի փոքր շեղվելով, շատ դեպքերում հայտնաբերում էին գաղտնի օբյեկտներ: 1962թ. հունվարի 8-ին խորհրդային կործանիչները բելգիական քաղաքացիական «Caravelle» ինքնարինին, որը խախտել էր խորհրդային սահմանը, ստիպեցին վայրէջք կատարել Երևանում (Եղել է նաև այլ դեսպր, երբ Երևանում հարկադրական վայրէջք է կատարել նաև Քովեյրին պատկանող «Boeing 727»-ը, ամսարիվը հայտնի չէ): Ֆրանսիական ավիարեներությունները ևս շատ էին կատարում նման անօրինական քայլեր: Մի անգամ էլ, երբ ֆրանսիական «Caravelle» ինքնարինը հիմնական թոփքուղուց շեղվեց մոտ 50 կմ, խորհրդային «ՄիГ»-երը ֆրանսիացուն նախ ստիպեցին վերադառնալ իր տեղը և հետո վայրէջք կատարել ստուգման համար: Լուրջ դիվանագիտական սկանդալ քացվեց:

1960-ական թթ. սկզբներին խորհրդային օդային սահմանները բոլոր կողմերից հավասարաշափ պաշտպանված չէին: Առավել պաշտպանված էր համարվում արևմտյան սահմանը, որը հսկում էին ոչ միայն խորհրդային, այլ նաև Վարչավյան պայմանագրի պետությունների ՀՕՊ-ի ստորաբաժանումները: Լավ պաշտպանված էր համարվում նաև կովկասյան ուղղությունը: Գերպաշտպանված էին Մոսկվայի, Լենինգրադի և այլ արդյունաբերական կենտրոնների օդային սահմանները: Վաստ պաշտպանված էին համարվում արևելյան և միջինասիական սահմանները: Միջինասիական ուղղությունից հաճախակի ներխուժող հակառակորդը ստիպեց երկրի դեկավարությանն ուժեղացնել երկրամասի պաշտպանությունը: Մասնավորապես, այնտեղ տեղակայված 73-րդ օդային բանակը համարվեց 100 նոր «С-75» ԶՀՀ-ով, 12 նոր «П-14» Ո-ՏԿ-ով:

<sup>37</sup> В. Коровин. Ракетных дел мастер. Техника молодежи. Январь 2001, стр. 37.

<sup>38</sup> Ս.Սիկոյան: Հայրս՝ Անաստաս Սիկոյանը: Եր., 2007թ. էջ 171:

Ունեցած երկու կործանիչային ավիագնդերին ավելացվեց ևս չորսը: 1963թ. մայիսին Սիօհին Ասիայում ստեղծվեց նաև ՀՕՊ-ի 12-րդ առանձին բանակը:

Բացի վերը նշված տարատեսակ հետախուզական ինքնարիոներից, տարբեր երկրներում ստեղծվում էին նաև ռադիոհետախուզության ինքնարիոներ, որոնք բարձր և արագ թռչելու խնդիր չունեին: Քանի որ ԽՍՀՄ-ի սպառագինության մեջ ընդունվեցին ՀՕՊ-ի այնպիսի միջոցներ, որոնք կարող էին պայքարել բարձրաթռիչք նշանակետերի դեմ, ամերիկացիները փոխեցին մարտավարությունը, նրանք հաճախակի անգամ սահմանը չեն խախուզում, քանի որ հետախուզումն ուղղված էր վերգետնյա հայտնաբերման միջոցների տեղադիրքի որոնմանը: Այս տեսակի ինքնարիոները, թռչելով սահմանին բավականին մոտ, մի քանի հարյուր կմ խորությանը հայտնաբերում էին այն ռադիոտեղորոշման կայանները, որոնք փորձում էին հայտնաբերել իրենց, կատարում էին լաճայնային հետախուզություն և այլն: Նշվածից զատ, շարունակվում էին ավանդական հետախուզական թռիչքները՝ սահմանային խախուզումներով, ամենամեծ բարձրություններից մինչև ցածր բարձրությունների կարճ ժամանակով ներխուժումները:

Ամերիկյան դեկավարությունը շարունակում էր մշակել գլոբալ հետախուզության բազում ծրագրեր, որոնցից ծնվեցին նաև մեր քննարկման հաջորդ նյութերը՝ «Ա-11»-ը, հետախուզական արբանյակները, ԱԹՍ-ները և այլն: Այս թվականներին ԱՄՆ-ում նշակվում էր նաև ուղեծրային բազմակի օգտագործման «X-20» ինքնարիոնի ծրագիրը, որը նախատեսված էր նաև տիեզերական հետախուզական թռիչքների համար: Դեռ «Ս-2»-ի փորձարկումների ժամանակ ԿՀՎ-ի դեկավարությունն արդեն մտածում էր այնպիսի ինքնարիոնի մասին, որը նման բարձրաթռիչքության դեպքում ունենար ավելի քան չորս անգամ ավելի մեծ արագություն: Եվ բացի այդ ել, որպեսզի հակառակորդի Ռ-ՏԿ-ներից աննկատ մնար, քննարկվում էին անտեսանելիության տարրերակներ, այսինքն՝ անդրադարձման մակերեսի փորբազման աշխատանքներ պիտի տարվեին, ինչը հիմնովին նորություն էր ավիացիայի պատմության մեջ (չնայած ինչպես նշեցինք նման աշխատանքի փորձնական քայլերը, ոչ առանց հաջողության, կատարվել էին հենց «Ս-2» ծրագրի ժամանակ):

Նոր հետախուզակի ստեղծման համար ԿՀՎ-ն հայտարարեց մրցույթ, որը նորից հաղթեց Կելի Չոնսոնը: Ստեղծված ինքնարիոնը կոչվում էր «Ա-12», այն իր առաջին թռիչքը կատարեց 1962թ: Ինքնարիոնի նախատեսված թոլոր տվյալները համապատասխանում էին իրականությանը: ԿՀՎ-ն շատ ոգևորված էր: Շուտով սպասվում էր զարմանալի հետախուզական թռիչքների նոր ալիք:

«Ա-12» անոնը կրող հետախուզական ինքնարիոնը ԿՀՎ-ի օգտին կատարեց բազում հետախուզական թռիչքներ տարբեր սոցիալիստական պետությունների տարածքներում: Այն համարվում էր «Ս-2»-ի փոխարինողը: Շուտով «Ա-12» նախագիծը վերափոխվեց «SR-71»-ի և փոխանցվեց ՌՕՌ-ին, սակայն խնդիրը միայն անվան մեջ չէր: ՌՕՌ-ի հետախուզությանը հաղեցած էր ավելի հզոր հետախուզական սարքավորումներով: ՌՕՌ-ի հետախուզական թռիչքները շարունակվեցին և նոյնիսկ շատացան: 1968թ. մինչև 1971թ. միայն Չինաստանը 500 անգամ բողոքեց իր օդային տարածքը խախտելու համար. խախտումների զգալի մասն իրականացրել էին ճապոնիայում տեղակայված «SR-71»-երը, որոնք մեկ թռիչքի ընթացքում կարող էին հետախուզել միանգամից նաև Վիետնամի տարածքը: Ճապոնական Օկինավա կղզու Կաղեն օդանավակայանում տեղակայված հետախույզները բազմից խախտել են նաև Հյուսիսային Կորեայի օդային տարածքները և բացառված չեն նաև ԽՍՀՄ-ի (չնայած ակնհայտ ապացույցներ չկան այն մասին, որ այս օդանավակայանից այս ընթացքում «SR-71»-երը խախտել են խորհրդային օդային տարածքները): Ըստ հայտնի տվյալների՝ եվրոպական և խորհրդային օդային տարածքներում «SR-71»-երի թռիչքները սկսվել են 1979թ. անգինական Սիլիւնինելլ ռազմաբազայից: Սակայն չի բացառվում ավելի վաղ կատարված թռիչքները: Մինչև 1980-ական թթ. վերջերը հետախույզներն անգինական բազայից կատարել են հարյուրավոր հետախուզական թռիչքներ («SR-71»-ի կողմից խորհրդային օդային տարածքի խախտումների մասին տեղեկությունները շատ աղքատիկ են՝ եղելով հոյժ գաղտնիությունից, սակայն որոշակի նյութերի վերլուծությունից ինչ-որ քան վերհանել հնարավոր է): Անհնար է, որ ԽՍՀՄ-ի տարածքում թռիչքներ կատարված չինեն: Ըստ հյուսիսկորեական տեղեկատվության՝ միայն 1982թ. այս ինքնարիոնները 187 անգամ խախտել են իրենց երկրի օդային սահմանը<sup>39</sup>: 1986թ. խախտումները և բողոքները շարունակվում էին<sup>40</sup>: «SR-71»-երը հետախուզել են նաև Լատինական Ամերիկայի, Սիօհին Արևելքի բազում պետությունների տարածքները:

<sup>39</sup> И.Перов, А.Федоров. Американская разведка на службе у ваших гонских провокаторов. ЗВО. 10.1983, стр. 11.

Ծատ են նաև այս ինքնարդող կատարված զարմանալի և հանդուգն թոփքները փորձարկումների ժամանակ: Ամենահետաքրքիր թոփքներից մեկը տեղի է ունեցել 1973թ. հոկտեմբերի 12-ին, երբ տեղի էր ունենում արարա-խրայելական հերթական պատերազմը, «SR-71»-ն ող բարձրացավ ԱՄՆ-ից և օդում մի քանի անգամ կատարելով լիցքավորում՝ հասավ մարտական գործողությունների բատերաբեմ, նկարահանեց Եգիպտոսի, Իսրայելի, Սիրիայի և այլ արարական տարածքներն ու հաջորդ օրը վայրեց կատարեց ԱՄՆ-ում: Թոփքը տևեց ավելի քան տաս ժամ, որից կես անգամ երեք ճայնայիններ մոտ արագությամբ, իսկ թոփքի երկարությունը կազմում էր ավելի քան 20 000 կմ: «SR-71»-ը միակ ինքնարդուն է աշխարհում, որի կրեյսերական արագությունն անցնում է 3000 կմ/ժ-ից: Եգիպտոսը հաջորդ օրը բողոքեց իր օրային սահմանը խախտելու կապակցությամբ, սակայն ոչ նրանք, ոչ մնացած պետությունները ոչինչ անել չեն կարող: Սերձավորաբեկյան տարածքներում հետախուզական թոփքները պատերազմի ընթացքում կատարվեցին մի քանի անգամ: Հանդուգն և բազարիկ թոփքները հերթական անգամ կանչեցին համաշխարհային պատերազմը, և օգնեցին Իսրայելին հաղթանակ տանել: 1986թ. «SR-71»-երը նորից մասնակցեցին իրական մարտական գործողությունների: Նրանք հետախուզեցին Լիբիայի տարածքը մարտական հարվածներից հետո:

1987թ. մայիսի 27-ին ԽՍՀՄ-ի հյուսիսային դարպասները հակող հայտնի 72-րդ գվարդիական կործանիչային ավիագունդը հենց առաջին օրը մարտական հերթափառության կանգնած նորագույն «ՄԻԴ-31» կործանիչով ստացավ մարտական առաջադրանք՝ խոցել խորհրդային հակաօդայիններին անհանգստացնող «SR-71»-ին: Ըստ ոռուական տեղեկությունների՝ ամերիկացին շուտ փախավ: Փաստն այն է, որ այն չխոցվեց, սակայն կապիտաններ Յու.Սոխնելը և Օ.Կրասնովը գոհ մնացին իրենց գործողություններից: Կամչատկայում տեղակայված խորհրդային կործանիչ ավիագնդերից մեկը միայն 1987թ.-ին 214 անգամ կործանիչներ է օդ բարձրացրել՝ սահմանախախտներին և սահմանին մոտիկ թռչողներին խոցելու համար, իսկ 1988թ. նոյն խնդրի համար կատարել է 825 թոփք: Գունդն արդեն զինված էր նորագույն «ՄԻԴ-31» կործանիչներով: Ոռուական տվյալների համաձայն՝ այդ խախտումների մեջ քիչ դեռ չուներ անորսալի «Ան թռչունը»:

Խորհրդային և ոռուական բազում տվյալների մեջ հպարտությամբ նշվում է, որ խորհրդային նորագույն «ՄԻԴ-31» և «Cy-27» կործանիչների հայտնվելուն պես «SR-71»-երն այլև չեն կարողանում կատարել իրենց խնդիրները: Իհարկե, վերջիններս հիմնալի կործանիչներ են, սակայն թող մեզ ներեն ոռու մասնագետները, նոյն բանը մենք լսում էինք այն ժամանակ, երբ սպառազինության մեջ ընդունվեց «ՄԻԴ-25» կործանիչը: Իսկ դա դեռ ինը տարի առաջ էր: Սակայն ինչպես տեսնում ենք, ոչ «ՄԻԴ-25»-ի, ոչ «Cy-27»-ի և ոչ էլ նոյնական ամենահզոր «ՄԻԴ-31»-ի հայտնվելով «SR-71»-երն իրենց թոփքները չեն դադարեցրել, իսկ եթե նրանք անգամ իրենց խնդիրը չեն կարողացել կատարել, դա դեռ հաղթանակ չէ: Մեզանից խնամքով թաքցնում են, թե քանի անգամ են այս անորսալիներն անցել խորհրդային սահմանը, քանի անգամ նշված կործանիչները չեն կարողացել հետևել նրանց, քանի անգամ են այս կործանիչները հրթիռներ արձակել նրանց վրա, և՝ ապարդյուն: 1968թ. մինչև 1990թ. «Ան թռչունը» կատարել էր 3551 հետախուզական թոփք: 1990թ. հունվարին այս ինքնարդիների ընդհանուր թոփքը կազմում էր 53 490 ժամ, որից 11 675 ժամը՝ երեքճանային և ավելի արագությունների պայմաններում: Եվ այս ամենն այն դեպքում, երբ արտադրվել է ընթամենը մոտ 50 միավոր «SR-71» և «A-12» ինքնարդիներ: Ամերիկացիները ստեղծել էին հզոր մի հետախույզ, որը ոչ թե երրորդ կարգի պետությունների տարածքները հետախուզելու համար էր, այլ ԱՄՆ-ի համար առաջին թշնամու, և դժվար չէ հասկանալը, որ դա նրանց հաջողվել է: Աշխարհում ոչ մի ինքնարդուն չի կարողացել, լինելով քանակով այդքան քիչ, հակառակորդի տարածքում կատարել այդքան շատ թոփքներ, մնալ անպատճիտ և ունենալ այդքան մեծ հեղինակություն: Այս ինքնարդուն ավիացիայի պատմության ամենազարմանալի, գրավիչ և հայտնի ինքնարդուն է: Թոփքների ընթացքում սահմանվեցին բազում համաշխարհային ռեկորդներ, որոնցից մեկը՝ արագության համաշխարհային բացարձակ ռեկորդը՝ 3529.56 կմ/ժ, մինչև օրս գերազանցված չէ<sup>40</sup> (շնայած ինքնարդուն ունեցել է ավելի մեծ ցուցանիշներ, որոնք սակայն չեն գրանցվել): Նման ցուցանիշները, ինչ խոր, գոհացնում էին ամերիկյան դեկավարությանը, և ոչ մեկի համար էլ

<sup>40</sup> Вартанесян В.А. Радиоэлектронная..., стр. 219.

<sup>41</sup> [http://records.fai.org/general\\_aviation/aircraft.asp?id=779](http://records.fai.org/general_aviation/aircraft.asp?id=779)

նորություն չեր, որ միշտ ամենաարագ և ամենաարաք ցուցանիշներին ձգտող հետախույզ ինքնարդին արդյունավետ են:

Ամերիկյան այս ինքնարդին հետ կարող է համենատվել միայն Միկոյանի կողմից ստեղծված «ՄԻԳ-25»-ը, որը ԽՍՀՄ-ում առաջինը հասավ և անցավ 3000 կմ/ժ-ը, իսկ սահմանված թոփքային առաստաղն աշխարհում գերազանցված չէ մինչև օրս՝ 37 650 մետր<sup>42</sup>: Այս առաստաղը, իրականացվել է շնորհիվ հզոր քարշազինվածության: Խորհրդային կործանիչը այդ քարձության վրա երկար չեր կարող թուիլ: Պրակտիկ առաստաղով «SR-71»-ը գերազանցում է «ՄԻԳ-25»-ին:

«ՄԻԳ-25Р» և «ՄԻԳ-25РБ» ինքնարդիներն իրենց հետախուզական թոփքներով 1971թ. մեծ անախտորժություններ պատճառեցին Խարայելին: «ՄԻԳ-25» հետախուզական կիրառման մեջ առաջին տարածքում հետախուզական կառավագանքը կազմում էր այս պետությունն ուներ արևմտյան ուղղվածություն, խորհրդային հետախուզական մեկ անգամ չէ, որ խախտում էին հարեւանի օդային սահմանը: Հատուկ այս սահմանախախտներին խոցելու նպատակով ԱՍՆ-ում գնաված «F-14» կործանիչներն էլ իրադրությունը չփոխեցին: Եվ միայն, երբ 1977թ. օգոստոսին պարսկական այս կործանիչի կողմից «AIM-54» հրթիռներով 15 կմ քարձության վրա խոցվեց «BQM-34E» թիրախը, խորհրդային ուսունագույնները դադարեցվեցին<sup>43</sup>: «ՄԻԳ»-երը երեմն պատահմամբ մեծ արագության պատճառով ներխուժում էին NATO-ական Թուրքիայի և Հունաստանի տարածքները<sup>44</sup>: Սակայն «ՄԻԳ-25»-ը մարտական ինքնարդի եր, այն որոշ տվյալներով, այնուամենայնիվ, զիջում էր «SR-71»-ին և խրայեցիներին, այնուամենայնիվ, հաջողվեց խոցել այն:

1969թ. վերջին խորհրդային զինվորականների կողմից Բայկոնոր տիեզերանավակայանից մի քանի կիլոմետր այն կողմ նկատվեց սահմանախախտ ինքնարդի: Անմիջապես տարածաշրջանի ամբողջ ՀՕՊ-ը բերվեց մարտական վիճակի: Սակայն սահմանախախտն ինքը վայրէջ կատարեց առանց խոցելու և ստիպելու: Բանից պարզվեց, այն ինքնարդի չեր, այլ անօդաչու հետախուզական թոշող սարք, որը, սակայն հետախուզել էր ոչ թե խորհրդային, այլ շինական տարածքները, ուներ ուղիղի հետախուզության և ֆոտոհետախուզության սարքեր, թոփքի ավելի քան 5000 կմ հեռահարություն և բավականին մեծ քարձություն: Իսկ փոքրիկ ռեակտիվ շարժիչը կարող էր նրան հաղորդել գերձայնային արագություն: Սարքը լիովին նորություն էր խորհրդային մասնագետների համար և միանգամից որոշում կայացվեց այն մանրամասնորեն ուսումնասիրել (Հայտնարերված ամերիկյան «D-21» ամօդաչու հետախուզական էր, որը ստեղծվել էր նոյյան հայտնի Կ. Զոնստնի կողմից: Սարքը Զոնստնի շատ ստեղծագործությունների նման զարմանալի էր ու բացառիկ: «D-21»-ը սկզբից արձակվում էր «SR-71»-ի վրայից, սակայն փորձարկումներն անհաջող անցան: Որոշվեց արձակել «B-52» ուժքակոծիչի թիր տակից: «D-21»-ն ուներ մոտ 30 կմ թոփքի քարձություն և 5500 կմ թոփքային հեռավորություն: Երբ ԽՍՀՄ-ի վիլուգումից հետո Սովորված ժամանեց Կելլի Զոնստնից հետո «Lockheed» ընկերության գիսավոր կոնսորտիումոր դարձած Բեն Ռիչը, նրան ցուցադրեցին այդ սարքի կոռորները: Նա միանգամից ճանաչեց «D-21B» ԱԹՍ-ն, որը չէր վերադարձել իր առաջին մարտական առաքելությունից<sup>45</sup>: Արդյունքում 1971թ. մարտի 19-ին կայացվեց մինիստրների խորհրդի N57 որոշումը՝ ուղարկած արքային մասին: Որոշման համաձայն՝ հարկավոր էր կարծ ժամանակում ստեղծել ամերիկյան սարքի համարժեքը՝ օգտագործելով նաև խորհրդային սարքավորումներ: Ծրագրը կոչվեց «Յօրոն»:

Չարունակվում էին ամենաատարբեր եղանակներով խորհրդային և այլ կոնունիստական պետությունների սահմանների խախտումները և հետախուզական թոփքները: Ինչպես նշեցինք, օդապարիկներն ու աերոստատներն այս գործում վաղուց էին հայտնվել առաջին շարքերում: Հատ խորհրդային տվյալների՝ միայն 1956թ. մինչև 1977թ. խորհրդային ՀՕՊ-ի կողմից արձանագրվել է աերոստատների և օդապարիկների 4112 արձակում դեպի ԽՍՀՄ, որոնցից խոցվել էին միայն 793-ը:

1976թ. օգոստոսի 24-ին Թուրքիայից Խորհրդային Հայաստանի օդային տարածք էին ներխուժել երկու ամերիկյան «F-100 Super Sabre» կործանիչ, սակայն «C-75» ԶՀՀ-ի արձակած հրթիռները խոցեցին ամերիկյան ինքնարդիներին<sup>46</sup>: Այլ տվյալներով՝ մեկին, որի օդաչուն իջակ թուրքիայում: 1978թ. ապրիլի 20-ին խորհրդային սահմանը Մուրմանսկի կողմից խախտեց կորեական

<sup>42</sup> А. Яковлев. Советские самолеты., стр. 358.

<sup>43</sup> <http://www.airwar.ru/history/locwar/bv/f14iran/f14iran.html>

<sup>44</sup> <http://www.airwar.ru/locwar.html>

<sup>45</sup> Крылья Родины. 2003 թ. N5, стр. 23-25.

<sup>46</sup> Տերիկյան, Երկնքի պահապաններն ու տիրակալները, 1-ին գիրք. Երևան 2008, էջ 5:

ավիաուղիներին պատկանող և իր թռիչքուղուց 200 կմ շեղված «Boeing 707» ինքնարիոր: Անմիջապես օդ բարձրացվեց 365-րդ կործանիչային ավիագնդի «Cy-15TM» կործանիչը, որը դեկավարում էր կապիտան Ա.Բոսովը: Վերջինս «օդ-օդ» դասի «P-98» առաջին հրթիռով խոցեց սահմանախատին, որի թևի մի մասը պոկվեց, օդաչուն Ո.ՏԿ-ի էլեկտրանի վրա այդ երևույթը ընդունեց որպես ԹՀ-ի արձակում և այդ պոկված մասին էլ խոցեց հաջորդ հրթիռով: Քաղաքացիական սահմանախախտը բարերախտաբար վնասվածքով կարողացավ վայրէջը կատարել սացցակալած Կորպիյարվի լճի վրա<sup>47</sup>: 1978թ. հունիսի 2-ին, այլ տվյալներով հուլիսի 21-ին, ամերիկյան արտադրության չորս «CH-47 Chinook» տեսակի ուղղաթիռներ հետախուզական նպատակներով, Իրանի կողմից խախտելով օդային սահմանը, մտել էին խորհրդային տարածք և գրեթե հասել թուրքմենիայի մայրաքաղաք Աշխարաբին: Օդ բարձրացվեցին 17-րդ կործանիչային ավիագնդիվիայի 152-րդ կործանիչային ավիագնդի «ՄԻ-23» կործանիչները, որոնցից մեկը՝ ուղղաթիռներից մեկին խոցեց հրթիռով, իսկ մյուսին վնասեց հրանորդով: Առաջինը կործանվեց, անձնակազմը մահացավ, երկրորդը՝ վթարային վայրէջը կատարեց Աշխարաբի օդանավակայանում, իսկ երկուսին հաջողվեց հեռանալ: Նորից բազում էին հարկադրված վայրէջքի դեպքերը: Իսկ դեկտեմբերի 23-ին սահմանը խախտած իրանական քաղաքացիական ինքնարիոնի ստիպողական վայրէջքի բերեցին խորհրդային կործանիչները:

Հարկավոր է նշել, որ շատ խորհրդային օդաչուներ օդային սահմանախախտների հետ պայքարելիս գիտակցաբար գնացել են խոյահարման, ինչը խոսում է նրանց բարձր մարտական և ռազմահայրենասիրական պատրաստության մասին: Խոյահարումներ էին կատարում նաև սոցիալիստական այլ պետությունների օդաչուները:

1983թ. ամերիկացիները նորից «չափերն անցան», չնայած դժվար է գտնել նրանց չափի զգացողությունն ամբողջ սառը պատերազմի տարիներին: Ապրիլի 4-ին ամերիկյան «Midway (CV-41)» և «USS Enterprise (CVN-65)» ավիակիրներից օդ բարձրացած վեց «A-7» գրոհիչները, խախտելով խորհրդային օդային սահմանը մոտ 30 կմ, ներխուժեցին Կորիլյան կղզիներ և Չելյոնի կղզու վրա կատարեցին ուսումնական հարձակում՝ ուժանետմամբ: Խորհրդային դեկավարությունը կատարած էր: Սեպտեմբերի 1-ին կրկին մեկ այլ կորեական «Boeing 747» ինքնարիո, սահմանը խախտելով, խորացել էր խորհրդային օդային տարածք, այս անգամ էլ «Cy-15» կործանիչը՝ օդաչու Գ.Օսիպովիչ, այն խոցեց նորից «P-98» հրթիռներով: Անձնակազմից զատ մահացավ ավելի քան 260 ուղևոր<sup>48</sup>: Մեծ աղմուկ բարձրացավ, բանից պարզվեց, որ խորհրդային օդաչուն ոչ մի նախագործական կրակ չէր բացել, իսկ սահմանախախտի հանգանանքն օգտագործելով՝ ամերիկյան հետախուզական ինքնարիոները հայտնաբերել էին խորհրդային ՀՕՊ-ի ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերի տեղադիրքերը: Դեպքի հետ կապված դեռ կան բազում անհայտ հանգամանքներ: Սահմանի խախտնան դեպքերը շատ էին:

Թոշող սարքերի զարգացման ֆանտաստ տեսաբանները դեռ 20-30-ական թթ. նկատում էին, որ տիեզերական այն սարքերը, որոնք կննանվեն ինքնարիոներին, կծառայեն մարդկությանը նաև մքնուրսի շերտերում: Պատմությանը նման սարքեր շատ են հայտնի: Երբ ԱՄՆ-ում առաջին անգամ տիեզերք բարձրացավ բազմակի օգտագործման տիեզերանավ մաքորը՝ «SPACE SHUTTLE»-ը, մասնագետները լուրջ մտավախություն հայտնեցին: Տեսականորեն այն կարող էր միջուկային հարվածներ հասցնել սառը պատերազմի իր հակառակորդ ԽՍՀՄ-ին, սակայն որոշ մասնագետներ այդ հեռանկարին չէին հավատում: 1985թ. «SPACE SHUTTLE»-ը տիեզերքից սուզվել էր ներքև և Մոսկվայի վրա հայտնվել ընդամենը 80 կմ բարձրության վրա, ինչը ԽՍՀՄ-ի համար շատ վտանգավոր էր: Խորհրդային դեկավարներն անմիջապես գնահատեցին այս տիեզերանավի վտանգը և մեծ զարկ տվեցին խորհրդային համարժեք ծրագրին: «SPACE SHUTTLE»-ի այս խուսավարությունը ևս կարելի է համարել հետախուզական թռիչք, ավելին, այն ռազմավարական հետախուզություն էր: Հայտնի միջոցներով նորից շարունակվում էին խորհրդային, չինական, կորեական և այլ կոմունիստական պետությունների օդային սահմանների մասսայական խախտումները: Եվ նորից առանց գոհերի հնարավոր չէր:

1970-ական թթ. վերջերին խորհրդային սահմանախախտների շարքում ավելացան փոքր սպորտային ինքնարիոները, որոնք, իհարկե, նորություն չէին, սակայն ակտիվացան: Փոքրիկ անկոչները հայտնվում էին բոլոր կողմերից: 1986թ. հունիսի 30-ին երկու նման ինքնարիո հայտնվեցին

<sup>47</sup> В.Е. Ильин, М.А. Левин, Истребители, стр.122; В.Марковский, К.Перов. Советские..., стр.16-17.

<sup>48</sup> И. Муромов, Сто великих авиакатастроф, М. 2003, стр. 300-313; В.Е.Ильин, М.А Левин, Истребители, стр.122; В.Марковский, К.Перов. Советские...

Իրանի կողմից, խորանում էին Ադրեզանի տարածք, եթե ող բարձրացվեցին կործանիչներ և անգամ ուղղաթիռներ: Առաջինին ստիպեցին վայրէջք կատարել Քյուրդամիրում, երկրորդին՝ Հորադիզի մոտակայքում: 1987թ. ապրիլ 25-ին նման մի հնքնարիոի ստիպեցին լրել խորհրդային տարածքը:

Հաջորդ նման կարգազանցությունը ցնցեց ամբողջ աշխարհը՝ մի կողմից ավետելով սառը պատերազմի ավարտը, մյուս կողմից բացահայտելով այդ պատերազմի հաղթողներին: 1987թ. մայիսի 28-ին Մուսկվայի ժամանակով ժամը 13.30-ին Հելսինկիի օդանավակայանից ող բարձրացավ ամերիկյան արտադրության «Cessna-172 Skyhawk» սպորտային ինքնարիոը, որը դեկավարում էր տասնինամյա օդաչու Մարթիա Ռուսթը: Դանդաղաշարժ սպորտային ինքնարիոով օդաչուն, անցնելով խորհրդային սահմանը, մի քանի ժամից վայրէջք է կատարում Մուսկվայում՝ հենց փողոցի վրա՝ Կրեմլի մոտակայքում: Թոփշրային ճանապարհը կազմում էր ավելի քան 1100 կմ, այն անցնում էր խորհրդային բազում կործանչային ավիագնդերի և գենիթային ստորաբաժնումների վրայով: Ամբողջ թոփշրի ընթացքում նկատելով սահմանախախտին՝ մի քանի կործանիչներ փորձել էին կանխել վերջինիս թոփշրը, սակայն ամեն անգամ ինչ-որ մի քանի խանգարել էր նրան<sup>49</sup>: Այնուամենայնիվ, այս պատանին աշխարհաբարձրական սկանդալ սարքեց, պաշտոնից հեռացվեցին ԽՍՀՄ-ի պաշտպանության մինիստրը, ՀՕՊ-ի հրամանատարը և բազում այլ սպաներ, խորհրդային գորքերի վարկանիշը կայծակնային անկում ապրեց, իսկ արևմտյան հատուկ ծառայությունները հաղթանակ տոնեցին: Հետագայում այս պատանուն դատեցին, սակայն դա չէր կարևոր, գործը կատարված էր: Ինչ խոսք, այս ամենը քարոզական ճակատի մի հաղթանակ էր և ավելի մեծ նպատակ էր հետապնդում: Նման դեպքերը հետագայում ԽՍՀՄ-ի համար դարձան իսկական պատուհաս, նրանք անսանի անկում էին թերում խորհրդային վարկանիշին: Ռուսթից հետո նման ոտնագործունեները շղաղարեցին և նույնիսկ աճեցին, դեպքից չանցած մեկ շաբաթ՝ հունիսին 2-ին, նման ինքնարիո հայտնվեց Թիֆլիսի մոտակայքում: Մեկ տարի անց՝ նույն օրը, Ռուսթի սիրագործությունը փորձեցին կրկնել որիշները: 1988թ. մայիսին նորվեգացի Անդրեաս Սոմմերսը երեք օր շարունակ «Cessna-152» ինքնարիոով ներխուժում էր խորհրդային տարածք, սակայն կարճ ժամանակ անց անհապաղ դուրս գալիս: 1989թ. մարտի 29-ին և ապրիլի 22-ին տեղի ունեցան նմանատիպ խախտումներ: Եվ միշտ չէ, որ հնարավոր էր լինում կարգազանցներին ստիպել վայրէջք կատարել: 1989թ. հունիսի 9-ին իր հայրենակցի փառքը գերազանցեց սպորտամեն Հանս Շնայդերը, որն այս անգամ հայտնվելով Թուրքիայի կողմից «Cessna-172 Skyhawk»-ով՝ վայրէջք կատարեց ծովափնյա Բարումի քաղաքի օդանավակայանում, ինքնարիոից նետեց ծաղկներ և նամակ ու անմիջապես հեռացավ: Չլսկած հանդուրյունն անպատիժ մնաց:

1980-ական թթ. խորհրդային ՀՕՊ գորքերը երկրի սահմանների մոտակայքում և սահմաններից ներս տարեկան հայտնարերում էին մոտ 3000 թոփշ: Օդային հետախուզության ամերիկյան գործողությունների մասին ավելի հակիրճ պատմել չատացվեց մի քանի պատճառով: Ինչպես ինքներդ կարող եք գնահատել, դրանք շատ էին, տեխնիկական ու ռազմական առումով շատ վտանգավոր ու համարձակ: Մենք, ուսումնասիրելով օդային հետախուզության այս և բազում այլ այստեղ չնշված դեպքերը, եկել ենք մի հստակ եզրակացության: Փաստորեն, խորհրդային և կոմունիստական այլ պետությունների օդային տարածքներում մի քանի տասնամյակ ընթացել է իսկական օդային պատերազմ: Այդ օդային պատերազմը, որը այլ կերպ անվանել չի կարելի, ելնելով իր երկար ժամանակից և բազում նարտական կիրառության դեպքերից, բացարիկ և առանձնահատուկ է: Բացառիկությունը նրանում է, որ այդ պատերազմը հիմնականում երկու կողմից էլ տարբեր պատճառներով գաղտնի է պահել, կողմերը չեն կիրառել համարժեք ինքնարիոներ և հաղթանակ տանողը այն իրականացրել է հիմնականում առանց կործանիչների: Սա չտեսնված քան է, եթե օդային պատերազմում կործանիչների և ԶՀՀ-ների հետ պայքարում հաղթում են միայն հետախուզական և հատուկ նշանակության ինքնարիոներով: Այստեղ կուզենայի մեկնարանել մի շատ հայտնի ոռու զիտնականի տեսակետը:

ՈՒ-ի ռազմական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ի.Երոխինը՝ իր «Войска ПВО страны: Прошлое и настоящее, судьба и надежды. Тверь 2004.» մեր կողմից բազմից հիշատակված գրքում, հիմնականում դժգոհելով ներկայում իրականացվող ՀՕՊ-ՌՕՌ միավորան ուսուական մորելից, անդրադանում է նաև այս պատերազմին, ինչպես մեկ այլ հետինակ է այս պատերազմն անվանել «Սառը պատերազմի տաք երկինք»: ԵՀՊ-ից հետո մինչև 1960 ական թվականները ԽՍՀՄ-ի տարածքային ՀՕՊ-ի չորս վերակազմավորումները նաև համարում է

<sup>49</sup> Թեպենթաց.7(14) 21.6.1997; Հայ Զինվոր. 30 (438) 3-10 օգոստոս, 2002, էջ 13-14:

հիմարություն և որպես հիմնավորում նշում է ամերիկյան ինքնարիոների վերը նշված անպատճ հետախուզական թոփշները: Սակայն իր տեսակետով 5-րդ վերակազմավորումը ճշմարիտ համարելով՝ պնդում է, որ այդ հետախուզական թոփշները այլևս դադարել են: Որպես հաստատուն հիմնավորում էլ նշում է, որ 10 000 հայտնաբերված խախտումներից խորհրդային ՀՕՊ-ը խոցել է մոտ 250-ին: Մի փոքր մեկնարանենք այս տեսակետը.

- ✓ Նախ մենք բազում օրինակներով ապացուցեցինք, որ նման թոփշները տարբեր ինտենսիվությամբ, սակայն գրեթե անփոփոխ արդյունավետությամբ, սկսվել են 1945թ. մայիսից և չեն ավարտվել մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը: Ավելին՝ դրանք շարունակվում են մինչև օրս:
- ✓ Հետո՝ լավ է ասված հայտնաբերված 10 000-ը, այո՛, շատ թոփշներ չեն ել հայտնաբերվել, իսկ իրականում դրանք եղել են շատ ավելին: Կամաց-կամաց բացվող արխիվներից օրեցօր ավելի տիսուր դեպքեր են հայտնի դառնում:
- ✓ Պետք չէ մեղադրել ոչ մեկին, նախ այդ անհաջող վերակազմավորումների համար պատասխանատու են նույն զինվորականությունը, և դա է նրանց իրական դեմքը: Հետո՝ ինչ վերակազմավորում էլ իրականացվել է, արդյունավետությունը շատ չի փոխվել:

ԽՍՀՄ-ի օդային տարածքի համար մղված օդային պատերազմում իրոք ամերիկացիները կորցրել են մոտ 250 ԹՄ: Սակայն դրանք կազմում են կատարված թոփշների 1-2 %-ը, ինչը ամերիկյան չափորոշիչների մեջ է:

#### 4.2. Ամերիկյան ռազմութախուզությունը և ՌՀԴ-ը

Ամերիկյան օդային հետախուզության մեջ առանցքային տեղ ունեն ռազմութախուզույզները, որոնց մասին մենք ակնարկով նշեցինք օդային ընդհանուր հետախուզության մասին պատմող ծավալուն բաժնում:

Հետախուզական ավիացիայի զարգացման համար այս ժամանակները հիշարժան են նրանով, որ առաջավոր պետությունների ՌՕՌԻ-ում ի հայտ էին գալիս օդային տարածքների հետախուզման և մարտի դեկավարման օդային կետերը: Այսինքն՝ հետախույզներ, որոնք ոչ միայն հայտնաբերում, այլ նաև պայքարում էին այդ նշանակետերի դեմ կամ օգնում և դեկավարում էին պայքարի այլ միջոցներին: Դեռ ԵՀՊ-ի երկրորդ կեսից ԱՄՆ-ի ՌԾՈՒ-ում կիրառվում էր «TBM-3V» ԹՄ-ն, որը («Cadillac» նախագիծ) ինքնարիոն ներքեւում տեղադրված ռադիոլոկացիոն սարքով հնարավորություն ուներ հակառակորդի ինքնարիոններին հայտնաբերել մինչև 160 կմ հեռավորության վրա: Նման մի ինքնարիոն էր նաև անգլիական հատուկ «Vickers Wellington»-ը, որը մեծ հուսալիությամբ հայտնաբերում էր հակառակորդի ռմբակոծիչները:

Պատերազմից հետո նման համալիրներ ստեղծվեցին նաև այլ ինքնարիոնների հիման վրա, սակայն, միևնույն է, հրամանատարությանն այս ամենը չէր բավարարում: Նրանց հարկավոր էր օդային մարտի կազմակերպող: Նման ինքնարիոններից առաջինն էր ամերիկյան «EC-121 Warning Star»-ը, որը ստեղծվել էր «Constellation» թեռնատարի հիման վրա, այն սպառազինության մեջ էր ընդունվել 1953թ.<sup>50</sup>: Ինքնարիոն իր վրա կրում էր ռազմական հորորդության կայան վեց տոննա ընդհանուր ռազմական հորորդությունում: Ըստով ստեղծվում են նաև ամերիկյան «E-1 Tracer»<sup>51</sup> և արտասահմանյան այլ համանանա ինքնարիոններ, որոնցից էր նաև խորհրդային «Ty-126»-ը: Այն սպառազինության մեջ է ընդունվել 1961թ.:

Ռազմութախուզության ամենամասսայական պայքարը սկսվել է վիետնամական պատերազմից, որտեղ սկսեցին զանգվածաբար կիրառել գենիբային և այլ կառավարվող հրթիռները, հակահրթիռներն ու ճնշման ռազմասարքերը: 1964թ. ամերիկյան ծովային ավիացիայի համար սպառազինության մեջ ընդունվեց «E-2 Hawkeye» օդային հետախուզության և դեկավարման կետը, որն ուներ նշանակետերի հայտնաբերման նոտ 300 կմ հեռավորություն: Սակայն, բացի այս ամենից, «E-2 Hawkeye»-ը ոչ միայն հայտնաբերում էր, այլ նաև տարանջատում և ուղեկցում էր, կարող էր ուղղորդել բազում յուրային կործանիչների և տեղեկությունը փոխանցել այլ համալիրներին: Ի

<sup>50</sup> Gargus, John. The Son Tay Raid: American POWs in Vietnam Were Not Forgotten. College Station, TX: Texas A&M Press, 2007. pp. 87-182; Michel, Marshall L. Clashes: Air Combat Over North Vietnam 1965-1972 . Аннаполис, MD: Военно-морской институт прессы, 1997. p. 46-252.

<sup>51</sup> М. Шелехов. Авиация капиталистических государств. М., 1975, стр. 142-143.

տարբերություն ամերիկյան և խորհրդային նախորդ համանման համալիրների՝ «E-2 Hawkeye»-ը կարող էր հայտնաբերել նաև ցածրարության նշանակետեր: Սրանք համալիրի ոչ բոլոր արժանիքներն էին: «E-2 Hawkeye»-ի նման համալիրները լիովին փոխեցին օդային մարտի տեսությունը:

Մեկ տարի անց ամերիկյան Ω-ՕՌι-ի ապառագինության մեջ ընդունվեց վերգետնյա ռադիոհետախուզության «RC-135» համալիրը, որը մինչև օրս մշտապես կատարելագործվելով՝ մեծ ծառայություններ է մատուցել սեփական երկրին: Հետախուզական թվարկված ինքնարիններից զատ, հիմնականում վիետնամական պատերազմում ծնվեցին «OV-1 Mohawk», «OV-10 Bronco», «RF-4C» և «EA-6 Prowler» ռադիոհետախուզության և հակագրեցության ինքնարինները: Վիետնամական պատերազմում կիրառված ԶՀՀ-ի աշխատանքը խափանելու համար կիրառվեցին հզոր ալիքների հեռարձակողներ և այլ խաճարողներ, որոնք փակում էին Ω-ՏԿ-ների տեսադաշտը: Եվ այս պայքարը կրում էր մշտական բնույթ, սա արդեն կայծակնային պատերազմի խևական օրինակ էր, քանի որ հակամարտող կողմերի ուժերի հարաբերակցությունը և տեխնիկական զարգացումը փոփոխվում էր օրեցօր և անգամ՝ ժամ առ ժամ: Ամերիկյան հետախուզական ավիացիայի համար հատկապես հատկանշական է վիետնամական պատերազմից կատարած հետևողությունները: Ինչպես արդեն նշել ենք, այս պատերազմում լայն կիրառություն գտավ ռադիոհետախուզությունը, որի զարգացման համար էլ պատերազմից հետո միջոցներ չին խնայում: Այդ ուշադրությունից առաջին հերթին 1975թ. ծնվեց «EF-111 Raven» ռադիոհետախուզության և պայքարի ինքնարիոր, որը փոխարինելու էր նախորդ ինքնարիններին: Ինքնարիոր հետագայում մեծ հոջողությամբ կիրառվեց Լիբանանում, Իրաքում և Հարավսլավիայում:

Ամերիկյան հրամանատարությունը 1979թ. ստեղծեց օդային մարտի դեկավարման «Boeing E-3 Sentry» AWACS համակարգը, որն իր նշանակությամբ բացառիկ մի մեքենա է: (Տե՛ս նկար 19) Այն իրենից ներկայացնում է «E-2 Hawkeye»-ի հզորագված և բարելավված տարրերակը, որը մինչև օրս հավասարը չունի: «Sentry» համակարգի օգնությամբ ամերիկյան ավիացիան վերջին բոլոր պատերազմներում ունեցել է օդային գերազանցություն: AWACS համակարգի ինքնարիոր, հետախուզելով հակառակորդի օդային տարածքը, մինչև 600 կմ հեռավորության վրա կարող է հայտնաբերել հարյուրավոր նշանակետեր, տարանշատել իրարից և տասնյակ կործանչների մարտը դեկավարել մի քանի ժամ: Համակարգը բազմից կատարելագործվել է և անգամ առաքվել է դաշնակից այլ պետություններին:

1989թ. ամերիկյան Ω-ՕՌι-ի կազմում ընդգրկվեց «E-6 Mercury» ռազմավարական կապի ինքնարիոր, որը հիմնականում գործում է օվկիանոսային ավազաններում: Նման ինքնարիորներն ապահովում են հակայական նավատորմների կապն ու գործողությունները: 1991թ. ամերիկյան Ω-ՕՌι-ները սպառագինության մեջ ստացան «E-8 JSTARS» վերգետնյա հետախուզության, նշանադիտման և դեկավարման ինքնարիորը: Այս հետախույզն իրենից ներկայացնում է AWACS-ի այլ հարթության ապահովման վերգատնյա տարրերակը: «E-8»-ը հարյուրավոր կիլոմետր հեռավորության վրա հայտնաբերում է վերգետնյա բազում նշանակետեր, կատարում տեղանքի էլեկտրոնային քարտեզագրում, նշանակետերի բաժանում, համագործակցում է նաև այլ հետախույզների, արբանյակային համակարգերի, դեկավարման կետերի հետ, ինչպես AWACS-ը: Նման համակարգերով համագորային մարտի կազմակերպումը տասնյակ անգամներ բարձրացնում է գործողությունների արդյունավետությունը: Մենք այդ մասին նշել էինք նախորդ գլուխներում: Ամերիկյան ռադիոհետախուզության և Ω-ԷՊ-ի միջոցները զարգանում են շատ արագ: Ներկայումս ԱՄՆ-ում բազում նորագոյն նախագծերի հետ մեկտեղ փորձարկումներ են անցնում «B-52H» ծանր ռմբակոծիչի հիմնա վրա՝ «CCJ» ծրագրով ստեղծված Ω-ԷՊ-ի ինքնարիորները: Ծրագրի արժեքը կազմում է 3-4 մլրդ դոլար<sup>52</sup>: Մինչև 2015թ. ծովային ավիացիան կստանա 75 միավոր նոր «E-2D Advanced Hawkeye» ինքնարիորներ՝ հզորացված սարքավորումներով<sup>53</sup>: Հաջողությամբ իրականացվում է նոր սերնդի օդային հրամանատարական կետի՝ «E-10A MC2A» ստեղծման աշխատանքները, որը պետք է միաժամանակ փոխարինի «E-8 JSTARS», «E-3C Sentry» և «RC-135V/W Rivet Joint»

<sup>52</sup> А.Максименко. Основные программы BBC США по созданию средств РЭБ. ЗВО. 1/2010, стр. 54-58.

<sup>53</sup> Д.Риориков, О. Подражанец. Авианосные ударные ВМС США: Перспективы развития и боевого применения. ЗВО. 5/2010, стр. 65.

համակարգերին<sup>54</sup>: Այս համալիրները կիրառվելու են նոր սերնդի ցանցակենտրոն պատերազմների ժամանակ, որն ակտիվորեն առաջ է նղվում ԱՄՆ-ում<sup>55</sup>:

### 5.1. Եզրակացություններ

Ուազմական ոլորտում ԹՍ-ների կիրառմամբ նախ մարտական գործողությունները ընդգրկեցին տարածաշափական ուղղահայաց հարթությունը<sup>56</sup>: Հորիզոնական հարթության մեջ էլ մեծացան գորքերի հեռահարությունը, մարտական գործողությունների արագությունը և խորությունները, վերացավ անվտանգ թիկունքը<sup>57</sup>, բոլացավ գորքերի կախվածությունը հաղորդակցության երկար ուղիներից, և ի հայտ եկան մարտի այլ տեսակներ: Զորքերն այլս չեն կենտրոնացվում քնակավայրերում: ԹՍ-ների մարտական կիրառությունն ազդեց նաև բերդերում, ամրոցներում վարփող պաշտպանության վրա, զրահագնացքների կիրառության վրա, ինչպես նաև առաջին աշխարհամարտում ի հայտ եկած և հեռանկարային համարվող սուզանավերի գործողությունների վրա:

ԱՀՊ-ի ժամանակ սուզանավերի հիմնական կիրառող Գերմանիան ստեղծել էր 344 սուզանավ, որից 178-ը խորտակվել էր<sup>58</sup>: Իհարկե, նավերի այս տեսակը բավականին արդյունավետ էր գործել՝ շնորհիվ գերմանական ռազմական փայլուն մտքի: Յուրաքանչյուր խորտակված սուզանավ խորտակել էր 33,8 տարատեսակ նավ: Սակայն մեզ հետաքրքրում է այս նավի և ավիացիայի հակամարտությունը: Թվարկված քանակից ավիացիան խորտակել էր ընդամենը 6 սուզանավ, իիմնական խորտակողը եղել էին ծովային ականները՝ 44 սուզանավ<sup>59</sup>:

Այս պատերազմում ընդհանուր խորտակված սուզանավերի քանակը հասնում է 1178, ինչը կազմում է խորտակված հիմնական տեսակի ռազմական նավերի մոտ 60 %-ը<sup>60</sup>: Թիվը լավագույն արտահայտում է այս տեսակի նավերի կարևորությունը և բոլորովին ոչ բոլորունը: 1178 թվից 420 բաժին է ընկնում ավիացիային, ինչը կազմում է մոտ 35 %<sup>61</sup>:

Մրանք, ինչպես նշեցինք, առաջին աշխարհամարտի տվյալներն են, իսկ իիմա ներկայացնենք ԵՀՊ-ի տվյալները: Գերմանիան նորից հանդիսանում է այս տեսակի նավերի լավագույն արտադրողն ու, ամենակարևորը, հիմնական կիրառողը: Ամբողջ պատերազմի ընթացքում արտադրվել է 1175 գերմանական սուզանավ, որից 1130 մտել են սպառազինության մեջ: 1130-ից 768-ը խորտակվել է դաշնակիցների կողմից, խորհրդային քանակը խորտակել է 48 գերմանական սուզանավ<sup>62</sup>: Դաշնակիցների հակասուզանավային ուժերը հիմնականում բաղկացած էին ինքնարհիոններից, նույնիսկ նավերի շարասյունների մեջ գնալով գերակշռում էին ուղեկցող ավիակիրներն իրենց

<sup>54</sup> С.Паршин, Ю.Кожанов. Концепции сетецентрического боевого управления ВС США, Велиобритании и ОВС НАТО. Общее и различия. ЗВО. 4/2010, стр. 7-18.

<sup>55</sup> Network-Centric Warfare: Its Origins and Future. By Vice Admiral Arthur K. Cebrowski, US. Navy, and John J.Garstka. USNI Proceedings. January 1998.

<sup>56</sup> Ուղղահայաց հարթության մեջ գրեթե միաժամանակ հայտնվեցին նաև սուզանավերը: Սակայն վերջիններիս հնարավորությունները այս հարթության մեջ խուսանավելու համար շատ փոքր են՝ համեմատած ԹՍ-ների՝ մինչև մի քանի հարյուր մետր: Ներկայումս ԹՍ-ները մարտական խնդիրներ են կատարում սուզանավերի ստորջրյա խորություններից մինչև հազարարավոր կմ բարձրությամբ տիեզերական տարածություններում: Ընդ որում, եթե առաջին ԹՍ-ները միայն ինքնարհիոնն էին, որոնք տեղակայվում էին գետնի վրա և օդ բարձրանում այնտեղից, ապա այսօր իրավիճակը այլ է: Ներկայումս ԹՍ-ների արձակման հարթակները տարածված են բոլոր հարթություններում: ԹՍ-ները այսօր արձակվում են այլ ԹՍ-ներից, սուզանավերից նաև ստորջրյա իրադրությունից և անզամ տիեզերքից:

<sup>57</sup> С.Л. Печуров. Революция в военном деле: взгляд с Запада. Военная мысль. № 4. 1997, стр.78.

<sup>58</sup> А. Шталь. Малые Войны 1920-1930-х годов. М.,2003, стр. 13.

<sup>59</sup> Նոյն տեղում:

<sup>60</sup> И.М. Капитанец. Война на море 1939-1945. М.,2005, стр. 377.

<sup>61</sup> Նոյն տեղում:

<sup>62</sup> И.М. Капитанец. Война..., стр. 378-383.

ինքնարիոներով: Այսինքն՝ խորտակված սուզանավերի, որոնք կազմում են արտադրվածի 67 %-ը, զգալի մասը խորտակվել է ավիացիայի միջոցով: Եվ այստեղ հասուր նշենք, որ սուզանավերի կողմից ինքնարիոների խոցումը կրել է խորհրդանշական բնույթ, հայտնի են ընդամենը տասնյակին չհասնող դեպքեր: Դրան հակառակ՝ ինքնարիոները հաճախ սուզանավերին խոցում էին և շարունակում կատարել նաև այլ առաջադրանքներ, նրանք կարող էին մեկ բոհշքի ընթացքում կատարել մի քանի խնդիրներ: Այսինքն՝ ինչքան էլ որ սուզանավերն ահեղ միջոցներ էին, զգալի վնաս էին տալիս վերջրյանավերին և հատկապես անպաշտպան առևտրային նավերին, միևնույն է, ամենից շատ վախենում և կորուստներ էին կրում ավիացիայից:

Դեռ 20-րդ դարասկզբի պատերազմներում հատակորեն երևաց կրակային հարվածի գերակայող դերը: Ուստ մեծ զորավար Ա.Սուվորովի խոսքը՝ «Գնդակը հիմար է, սուրճ է կտրիճը», արդեն չեր համապատասխանում իրադրությանը: Վառողը վաղուց եր հայտնաբերվել, սակայն գնդացիրների և արագածից հրետանու միջոցով՝ կրակը հետ մնեց կենդանի ուժերով հարվածին:

Ներկայում համագորային մարտի հիմքը կազմում է հեռահար կրակային ներգործությունը: Ժամանակի ընթացքում կրակային հարվածի դերը գնալով ավելի մեծացավ, իսկ գնդացիրներից և հրետանուց առաջամարտիկի դերը վերցրեցին ՕՀՄ-ները: Դրանց ներգործության խորությունը միայն մարտավարական ՕՀՄ-ներով կազմում է մինչև 300 կմ, իսկ օպերատիվ մարտավարականով՝ մինչև 1000 կմ և ավելի<sup>63</sup>:

ԵՀՊ-ից հետո գրեթե բոլոր՝ քիչ թե շատ հավասար հակառակորդների միջև տեղի ունեցած դասական պատերազմներում հարթել են արևմտյան ռազմական միտքն ու տեխնոլոգիաները:

Մեզանում կա մի անհիմն, հիմնականում խորհրդային քարոզչական ու քաղաքական ծագում ունեցող ներադրություն, որ ԱՍԽ-ն ոչ մի պատերազմում չի հաղթել: Սա ավելի քան անհիմն և պարզամիտ արտահայտություն է: Վիետնամական պատերազմի մասին կա նույն ոգուն համապատասխանող մի տեսակետ, որ իր գերազանց զինված և արևմտյան չափորոշիչներով առաջնորդվող հարավցիները պարտվեցին կիսապարտիզանական զորքերին, որոնք առաջնորդվում էին և զինված էին խորհրդա-չինական մողելով<sup>64</sup>: Որոշ մասնագետներ նույնափիսի եզրակացության եկան նաև 2008թ. ոուս-վրացական պատերազմից հետո: Նրանք իրենց «փառավոր» հաղթանակը վրացական բանակի նկատմամբ դարձրել են նոր հիմնավորում: Պնդում են, որ արևմտյան չափորոշիչներով չափազանց տարված վրացիներն արագ բարոյալվեցին:

Նման պնդումներն անհիմն են, ավելին՝ չեն փայլում մեծ փորձագիտական համոզմունքով: Նախ՝ ցանկացած պատերազմում կարենոր է մոտիվը, դրդապատճառը, կողմերի վերաբերմունքն այդ պատերազմին: Հետո՝ մենք նշեցինք, որ այս առումով կան դասական և ոչ դասական պատերազմներ, վերջիններիս մենք անվանում ենք «քաղաքական կեղտու պատերազմներ», որոնցում տարած հաղթանակները կամ կրած պարտությունները շատ հարաբերական են և ոչ հստակ: Այս առումով սխալ է հիմնվել նշված պատերազմների օրինակի վրա և փորձել ապացուցել ոուսական ռազմական չափանիշների առավելությունն արևմտյան չափանիշների նկատմամբ:

Առանձին անդրադառնանք նշված դեպքերին: Հյուսիսային վիետնամցիները քեկուզ իրենց կենսամակարդակով զիջում էին հարավցիներին, սակայն ռազմական աջակցություն ստանալու մակարդակով ոչ միայն չէին զիջում, այլ որոշ հարցերում նաև գերազանցում էին առաջններին: Խորհրդային և չինական ռազմական օգնությունը հսկայական էր, իսկ հյուսիսցիների մարտական փորձը բարձր մակարդակի վրա էր:

2008թ. վրացական բանակը ոուսական բանակի հետ համեմատելը ընդհանրապես անհերետություն է: Չնայած նրան, որ հակամարտության գոտում, երկու բանակների ընդհանուր թվաքանակը կարող է լինել մոտիկ, ոուսական բանակն ի հաշիվ տեխնիկական գործոնի, անհամեմատելի է վրացական բանակի հետ: Սի շաբթ արևմտյան խորհրդատուների և գեներերի առկայությունը վրացական բանակում չէր նշանակում, որ դեռ մի քանի տարի առաջ լիովին խորհրդային մողելով կառուցված բանակը, տասնամյակներ ոուսական արժեհամակարգով ապրած մարդկանցով, մի երկու տարում հիմնովին փոխվեց և արևմտյան չափորոշիչներ է կրում: Չնայած դրան՝ վրացիների կողմից որոշակի արևմտյան տեխնոլոգիաների և փորձի կիրառությունը ոուսական բանակի վրա բանկ նստեց:

<sup>63</sup> Г.А. Арбатов, К.Н.Брутенц, Э.А.Иванян, Е.М.Примаков....Современные..., стр. 351; [militera.lib.ru/science/tactic/index.html](http://militera.lib.ru/science/tactic/index.html); Тактика, стр. 152.

<sup>64</sup> Mikhail Barabanov. The August War between Russia and Georgia. Moscow Defense Brief, N3(13), 2008, p. 11.

Կասկածից դուրս է, որ արևմտյան ռազմական չափորոշիչներն ավելի առաջադեմ են, որ ամերիկյան նորամուծություններն են շարժում ոլորտի զարգացումը:

Բոլոր ամերիկյան նորամուծությունների մեջ հատկապես հստակ ուրվագծվել են պատերազմից պատերազմ աճող ՌՕՌ-ի և ՕՀՄ-ների կիրառության մասշտաբներն ու ձևաչափը: ՕՀՄ-ների գերակայությանը ծառայող տեխնիկական բոլոր նորամուծությունները, որոնք քիչ չեն, իմանականում ի հայտ են եկել ԱՄՆ-ում:

ԹՄ-ների և ՕՀՄ-ների ների մեծացման ֆոնի վրա հետաքրքրական է ներկայացնել զարգացած երկրների ԶՈՒ-ում ՌՕՌ-ի տեսակարար կշիռ՝ քանակական առումով: Ըստ 2008-2010թթ. տվյալների՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իսրայելի և Ֆրանսիայի ԶՈՒ-ներում այն անցնում է 20%-ից, Ռուսաստանի, Չինաստանի և Հնդկաստանի ԶՈՒ-ում չի կազմում 20%: Միայն ԱՄՆ-ի ՌՕՌ-ն է կազմում ԶՈՒ-ի 32%<sup>65</sup>: Ըստ որում, հատուկ նշենք, որ ամերիկյան ՌՕՌ-ները տեխնիկապես առավել զինվածն ու հագեցածն են, որը, բացի զորատեսակի հզորությունից, ևս մեկ բան է նշանակում՝ այդ 32%-ը շատ ավելի բարձր է, եթե համեմատենք այլ պետությունների չափանիշներով: Այն խնդիրը, որն ամերիկյան ՌՕՌ-ներում կատարում են 5 զինծառայող, այլ ՌՕՌ-ներում կատարում են 7-10-ը: Ամերիկյան ՌՕՌ-ի կազմի մեջ ի սկզբանե մտել են նաև բալիստիկ ռազմավարական հրթիռները, այսինքն՝ ամենաահեղ ՕՀՄ-ները: Ամերիկյան ԶՈՒ-ները զինված են աշխարհում ամենաարդիական և հզոր ԹՄ-ների ամենամեծ քանակով: Այդ սարքերը կիրառվում և սպասարկվում են աշխարհի ամենազարգացած տեխնոլոգիաներով: Ոչ մի քանակում գոյություն չունեն այդքան և այդպիսի կառավարման, հետախուզման, կապի, վերալիցքավորման և այլ համակարգեր, ինչպիսիք օգտագործվում են ԱՄՆ-ի ԶՈՒ-ներում: Նշվածին հակառակ ցամաքային զորքերը ԱՄՆ-ի ընդհանուր ԶՈՒ-ների մեջ մեջ զբաղեցնում են 46%, այն դեպքում երբ գերմանիայում՝ 69% է, իսկ չինաստանում 70%<sup>66</sup>:

ՀՕՊ-ն ավիացիայի ճնշման տակ մարտական ապահովման տեսակից ժամանակի ընթացքում վերածվեց մարտատեսակի: Որոշ մասնագետների կարծիքով՝ մարտական ապահովման տեսակից մարտատեսակի է վերածվում նաև ՌԵՊ-ը: Տարեցտարի ԹՄ-ների հնարավորություններն ավելի են մեծանում: Այստեղ մի փոքր կանգ առնենք հենց ՀՕՊ-ի և ՌԵՊ մարտատեսակի վերածման և ՕՀՄ-ների հետ համագործակցելու խնդիրի վրա:

Ամերիկյան ՕՀՄ-ների կիրառության փորձի մեջ հստակ երևում են հակառակորդի ՀՕՊ-ի հաղթահարմանը, լինի այն զուտ ցամաքային, թե միացյալ, հատկացված մեծ ուժերը: Ուժերը շատ են հատկապես զորությունների սկզբում, քանի ուն ՀՕՊ-ը չի չեղործացվել կամ ցանկալի մակարդակով քուլացվել: Օրինակ՝ 1999թ. Հարավսլավիային հասցրած հարվածների նախնական փուլում, որը տևեց մարտի 24-27-ը, հակառակորդի ՀՕՊ-ին և ավիացիային ուղղված հարվածները կազմում էին ընդհանուր հասցվածների 80%-ը<sup>67</sup>: Հետագա օրերին էլ, երբ առաջադրված նախնական խնդիրը մեծապես լուծված էր, նույն խնդիրի համար հատկացվում էին հարվածների մինչև 40-50%-ը<sup>68</sup>:

Հակառակորդի ՀՕՊ ուժերին հասցվող հարվածների ժամանակ մեծ դերակատարություն ունեն ՌԵՊ-ի միջոցները: Հարվածային խմբերն առանց այս ուժերի չեն գործում: Ինչպես մենք նշեցինք, 1986թ. ապրիլի 14-15-ի գիշերն ամերիկացիները «Կանյոն Էլլորադո» ռազմագործողության շրջանակներում հարվածեցին Լիբիային: Նշված ժամին ՌԵՊ-ի ինքնարիոնները ստեղծեցին խանգարումներ և հարվածներ հասցրեցին ԶՀՀ-ներին: Անզիայից օդ բարձրանալով և օդում լիցքավորվելով՝ Զիրբալիքարի վրայով Լիբիայի թիկունքն անցած 15 ինքնարիոններից 13-ը հարվածային էին, 2-ը՝ ՌԵՊ-ի: Փաստորեն, յուրաքանչյուր 5-6 հարվածային ինքնարիոններին բաժին էին ընկառում մեկական ՌԵՊ-ի ինքնարիոններ: Հետագայում ամերիկացիները ՀՕՊ պատճեններն ավելի կատարեն անցնելու համար կիրառել են նաև այս տարրերակը՝ մեկ ՌԵՊ-ի ինքնարիոն երկու հարվածային ինքնարիոններին: Ավիացիոն ստորաբաժանումներում ինքնարիոնների 30%-ը ամերիկացիներն արդեն դարձնում են ՌԵՊ-ի ինքնարիոններ՝ չհաշված մեծ ստորաբաժանումներին

<sup>65</sup> Վերլուծությունը կատարված է ըստ՝ Զարубежное Военное Обозрение. 2008, № 7, стр. 76-110, 2010, № 7, стр. 66-111. ամսագրի The Military Balance 2007-2010, The Middle East Strategic Balance 2007-2010 պարբերականների, «Jane's» և այլ տեղեկատունների.

<sup>66</sup> И.Н. Воробьев, В.А. Киселев. Переход Сухопутных войск на бригадную структуру как этап повышения их маневроспособности. Военная Мысль. 2/2010, стр. 19.

<sup>67</sup> И.М. Капитанец. Флот в войнах..., стр. 132.

<sup>68</sup> Նույն տեղում:

տրված հզոր միջոցները<sup>69</sup>: Ըստ որում, Ω-Π-ի մեքենաներ են դարձնում լավագույն ինքնաթիռները, օրինակ, վերջերս որոշում է կայացվել այդպիսին դարձնել 176 «F-15» կործանիչներ, որոնք իրենց տեղը զիջում են նորագույն «F-22»-երին<sup>70</sup>:

20-րդ դարի վերջին ունեցած մարտական գործողություններից կատարած գլխավոր հետևողությունները հետևյալն են՝

- ✓ Ամենահզոր զորատեսակը Ω-ՕՈՒ-ներն են, քանի որ դրանք նախ զինված են սպառազինությունների այնպիսի տեսականիով, որ կարող են պայքարել գրեթե ցանկացած զորատեսակի դեմ ամենաբազմազան ձևերով: Երկրորդ դրանք շատ ճկուն են, տեղափոխման, կիրառության, հակագրեցության և այլոց հետ համագործակցելու հարցերում, ինչը նոր դարաշրջանի արագընթաց մարտերում որոշիչ է:
- ✓ Վերջ է դրվում ΖΟՊ-ի դասական ձևին, որն արմատավորվել էր խորհրդային-ռուսական հիմնավորմամբ: ΖΟՊ-ի միայն վերգետնյա բաղադրիչներով, որոնք ակտիվ ռադիոալիքներ հեռարձակող ԶՀՀ-ներ են և անգամ ընդունակ են տեղադիրքն արագ փոխել, հնարավոր չեն հասնել հաջողության: Կենսունակ է միայն կործանիչներին փոխարացնող և օգնող ΖΟՊ-ը:

Նույնիսկ ամենազարգացած ԶՀՀ-ները, որոնք համագործակցում են բազում այլ, ոչ Θ-Մ-ներին պատկանող համակարգերի հետ, չեն ապահովում մեծ հաջողություն ΟՀՄ-ների մասսայական կիրառության ժամանակ: Վերը բերված բազում օրինակներին ավելացնենք ևս մեկը: Մինչև օրս լավագույն ցուցանիշն ապահոված ամերիկյան «Patriot» ԶՀՀ-ն Իրաքում յուրաքանչյուր խոցված Θ-Մ համար ծախսել է 1-3,5 հրթիռ<sup>71</sup>: Իհարկե, տվյալը հիմնականում վերաբերվում է բայխատիկ հրթիռների խոցմանը, ինքնաթիռները խոցվել են ավելի լավ ցուցանիշներով, սակայն կիրառությունը մասսայական չի եղել, իսկ հակառակորդը՝ ոչ այնքան հզոր: Ըստ որում, առաջին պատերազմում խոցվել են արձակած հրթիռների մոտ 49 %-ը և միայն երկրորդում բոլոր վնաս ներկայացնող հրթիռները<sup>72</sup>: (Տե՛ս նկար 24)

- ✓ Միայն պաշտպանական մարտավարությամբ հնարավոր չեն հասնել հաջողության:

Վիետնամական, արարա-խարայելական մի քանի պատերազմներում և մի քանի այլ հակամարտություններում տեղի ունեցավ օդուժի և ΖΟՊ-ի կիրառության ամերիկյան և խորհրդային

<sup>69</sup> А. Васильев. Радиоэлектронная борьба в воздушных операциях ВВС США. ЗВО №1 1991, стр. 41-44

<sup>70</sup> <http://www.meta.kz/158309-vvs-ssha-prevratyat-istrebiteli-f-15-v-samolety.html>,

<http://www.flightglobal.com/articles/2010/07/09/344274/f-15-silent-eagle-scores-two-firsts-with-export-license-flight.html>

<sup>71</sup> Д. Галкин. Боевое применение зенитных пакетных комплексов Пэтриот в вооруженных конфликтах. ЗВО, 10.2006, стр. 26-32.

<sup>72</sup> 1991թ. «Patriot» ԶՀՀ-ի և «Scud-B» բայխատիկ հրթիռների միջև տեղի ունեցած մենամարտի մասին շատ է գրվել: (Տես նկար 32) Սա պատմության մեջ առաջին նման մենամարտն էր, որի ժամանակ տարրեր տվյալներով արձակվել է 91-98 «Scud-B» հրթիռ կամ դրանց իրաքյան՝ «Al-Hussein», «Al-Abbas» տարրերակները: Որոշ տվյալներով՝ արձակվածներից խոցվել է ընդամենը 35-50 %-ը: Սակայն քանի որ հրթիռներն իրենք անհոսավի են և շատ ժամանակ առանց որևէ միջամտության տեղ չեն հասնում, դժվար է ասել, թե իրականում «Patriot» բանիսին է խոցել, կամ փորձել խոցել: Տարրեր աղբյուրներում նշվում է, որ յուրաքանչյուր «Scud-B»-ի վրա արձակվել է մինչև մի քանի տասնյակ «MIM-104» հրթիռ: Կարծում ենք՝ սա չափազանցուրյուն է, քանի որ նախ ԶՀՀ-ը շատ կարծ ժամանակ ունի դրանք խոցելու համար, իսկ նոյնի հրթիռի վրա արձակելու առավելագույն հնարավորությունը 3 հրթիռ է: Այնուամենայնիվ, առաջին հրթիռային մենամարտը շատ հետաքրի առանձնահատկություններ ի հայտ բերեց: Դրանցից մեկն էլ այն էր, որ մեծ արագությունների պայմաններում նույնիսկ 90 կգ-անոց մարտական մասի պայքարունք կարող է լուրջ վնաս չափանառել մյուս հրթիռին: Չատ խոցված համարվող հրթիռներ իրականում շեղվում են, սակայն տեղ էլին հասնում: Հենց այս ժամանակ եղավ դեպք, երբ խոցված համարվող, սակայն իրականում ընդամենը ուղեղիծը փոխանց, «Scud-B»-ը ընկավ գրունտով մեջ, և շատ մարդիկ զոհվեցին: Այդ պատճառով ամերիկյան մասնագետները ԶՀՀ-ները կատարելագործելիս և նորերը ստեղծելիս հրթիռները խոցելու համար գնացին ավելի դժվար ճանապարհով, որը, սակայն, ավելի հուսալի է: Բանը նրանում է, որ կամ պետք էր շատ մեծացնել հրթիռների մարտական մասերը՝ մինչև 150-200 կգ և ավելի, կամ ստեղծել կինետիկ հարվածող փոքր մարտական մասեր: Առաջին տարրերակը նրանց համար անընդունելի էր, քանի որ ամերիկյան զենիթային հրթիռները՝ շնորհիվ արդիական տեխնոլոգիաների, ստեղծվում էին բավականին փոքր: Օրինակ՝ «ERINT» հրթիռների ընդհանուր քաշը հազիկ է հասնում 320 կգ.: Այդ պատճառով նրանք ներկայում հիմնականում հրթիռներին օդում խոցում են ուղիղ հարվածով, որը, իհարկե, տեխնիկապես դժվար է, սակայն ավելի հուսալի է, ոչնչացնում նշանակետին:

մողելների բախում, որում ցայտուն երևաց վերջինիս «վիժումը»: Նույնիսկ ամենահազեցած ՀՕՊ-ը, որի գիշավոր դերակատարը վերգետնյա բաղկացուցիչն է, ի վիճակի չեղած հաջողությամբ պայքարել կազմակերպված և հզոր ՕՀՄ-ների դեմ:

Ժամանակակից ՕՀՄ-ների մասսայական կիրառմամբ հենց մարտական գործողությունների սկզբից հնարավոր է հաղթանակ տանել: Կիրառության մասսայականությունն աննախադեպ է<sup>73</sup>: Ամերիկացիներն այդ մասսայականությամբ, ամբողջ թատերաբեմի մշտական տեսանելիությամբ ու կառավարելիությամբ, խոցման միջոցների ամենակարողությամբ և այլ բաղադրիչներով վերացնում են առաջին, երկրորդ էշելոններ հասկացողությունը կամ ռեզերվը: Բացի դրանից, առաջին էշելոնի գործերըն այնքան արագ են շարքից դուրս գալիս, որ երկրորդ էշելոնը կամ ռեզերվը չեն հասցնում միջամտել<sup>74</sup>: Խրամատային ամուր, պասիվ պաշտպանությունը, որը կարծրատիպ է դարձել, արդեն չի կարող ապահովել հուսալի պաշտպանություն<sup>75</sup>: Հարձակողական դատողությունը հակամարտության ժամանակ դառնում է գերակայող<sup>76</sup>:

Ժամանակին Արևմտություն ճիշտ հասկացան աշխարհին տիրելու գործիքի և միջավայրի փոխարինման պահը: Կար ժամանակ, երբ Սեծ Քրիտանիան, տիրելով օվկիանոսներին, տիրում էր աշխարհին: ԱՄՆ-ում ժամանակին հասկացան, որ եկել է ժամանակը, երբ հարկավոր է տիրել երկնքին, որպեսզի տիրել օվկիանոսներին, հետևաբար՝ աշխարհին: Միտումը շարունակվելով բարձրանում է տիեզերք, որտեղից կարելի է տիրել ողջ մոլորակին և ոչ միայն:

Չորատեսակներից ավիացիայի որոշիչ դերի մասին դեռ ԵՀՊ-ի վերջում շատ դիպուկ նկատել է գերմանացի գեներալ Կ. Կոլերը:

«Յանկացած զինվոր սովորաբար մտածում է իր գորատեսակի գործողության հեռավորությամբ և սեփական գենքի տեղաշարժման արագությամբ: Այդ պլատֆորմով ծովային սպաները շատ ժամանակ չեն կարողանա ({իսկ բանակային սպաները երրեք} հասնել դատողության և աշխարհանկալաման այն մասշտաբին, որին այս կամ այն չափ տիրապետում են գրեթե բոլոր բանակների Ո-ՕՌ-ների սպաները: Ի՞նչ է բանակային կորպուսը գետնի վրա. 50 000 մարդ, հազար միավոր տեխնիկա և հրետանու մի խումբ՝ հսկայական հրամանատարական համակարգով: Եվ այդ բոլորը պատերազմում են 15-20 կմ ճակատի վրա: Հսկայական մի հրեց, սակայն նրան հետաքրքրում են միայն հարևանները՝ աջց և ձախցից: Միևնույն ժամանակ Ո-ՕՌ-ի սպան մտածում է զգալիորեն ավելի լայն և խորը: Նա այլ կերպ է այդ ամենը պատկերացնում: Ի՞նչ է այդ կորպուսի ճակատը մի լեյտենանտի համար, ով պետք է կատարի հեռավոր հետախուզության թոփչը. քարտեզի մի հատված, որն ունի մի մատի լայնք, եթե ոչ ավելի քիչ»<sup>77</sup>:

Ամերիկացիները ճիշտ և ժամանակին հասկացան այս հրամայականը: Աշխարհում մինչ օրս արտադրված ընդհանուր բոլոր ինքնարթուների մոտ 50-60 %-ն արտադրել է ԱՄՆ-ն: Միայն ԱՄՆ-ում են Ո-ՕՌ-ի բարձրաստիճան սպաներն այդքան հաճախ գրադեցնում ընդհանուր բանակի հրամանատարությունը: ԱՄՆ-ն միակ պետությունն է աշխարհում, որը զինված է գերճշգրիտ գենքերի մեծ տեսականիով՝ սկսած փոքր արկերից, մինչև բախտիկ և ԹՀ-ներ: ԱՄՆ-ի ռազմավարական, հարձակողական սովորական գենքերը գերազանցում են ռազմավարական հարձակողական միջուկային գենքերի բանակին: Վերջին հանգանաքը նոր երևույթ է և որոշիչ առավելություն այլ միջուկային տերությունների նկատմամբ: Այստեղ դիպուկ է նաև այն տեսակետը, ըստ որի ամերիկյան սովորական գերճշգրիտ ՕՀՄ-ներով կարելի է հարթել ցանկացած պետության, նույնիսկ Ո-Դ-ին<sup>78</sup>: Ծեշտենք, որ այս տեսակետը և անհանգստությունը ռուս մասնագետներին է:

2010թ. փետրվարին հրապարակված տվյալների համաձայն՝ ԱՄՆ-ում սկսվել են նոր սերնդի կործանիչների և ռազմավարական ռմբակոծիչների տվյալների հաստատմանն ուղղված գիտափորձնական աշխատանքները: Ամերիկյան մասնագետները կարծում են, որ մոտ առաջայում ՕՀՄ-ների մոտ կեսն արդեն կլինեն ԱԹՍ-ների հիման վրա ստեղծված մոդելներ և համալիրներ, որոնք կկարողանան գործել ապագայի ցանցակենտրոն պատերազմներում և դրանցից դուրս:

<sup>73</sup> А.Н. Захаров. Операция «Лис пустыни»...

<sup>74</sup> В.А. Вахрушев. Локальные войны..., стр. 28.

<sup>75</sup> И.Н. Воробьев. Какие войны грозят нам в будущем веке?. Военная мысль. №2. 1997, стр. 18-24.

<sup>76</sup> С.Л. Печуров. Революция в военном деле: взгляд с Запада. Военная мысль. №4. 1997, стр. 73-80.

<sup>77</sup> Т. Элмхерст. Подлинная история..., стр. 580.

<sup>78</sup> Ю.В. Криницкий, В.Н. Тикшаев. Проблемы организации ПВО подвижных объектов государственного значения. Военная Мысль. 6/2010, стр. 41-46.

դրանց քանակը բանակում պետք է կազմի 800-ից ոչ պակաս<sup>79</sup>: Ամերիկյան հայտնի ռազմական տեսարան Զոն Վերդենը կարծում է, որ 2025թ. ամերիկյան ՌՕՌ-ի մոտ 90%-ը կկազմեն ԱԹՄ-ները<sup>80</sup>:

ԱՄՆ-ում ներկայումս արտադրվում են գերճշգրիտ հարվածային միջոցներ, որոնց քանակը մոտակա տաս տարում կարող է հասնել 150 000-ի, ստեղծվում են նաև դրանց կրողները: Օրինակ՝ «Ohio SSBN/SSGN» տեսակի ատոմային ռազմավարական սուզանավերը վերածվել են գերճշգրիտ ԹՀ-ներ կրողների, որոնց վրա տեղադրվում է 154 թշ<sup>81</sup>:

Հարկավոր է ճիշտ գնահատել ԹՄ-ների և ՕՀՄ աճող դերն ու նշանակությունն ապագայի պատերազմներում, որոնք մարտավարական և ռազմատեխնիկական կատարելագործումների հետևանքով կվերածվեն գերճշգրիտ խոցման միջոցների:

## ԳԼՈՒԽ 6. ԴԱՍԵՐ ՄԵՋ ՀԱՄԱՐ

### 6.1. Օրինակներ մեր պատմությունից

Ցամաքային ՀՕՊ-ի կիրառության դեպքերը, որոնց օրինակով մենք ապացուցեցինք դրանց անպիտանելիությունը, բավականին շատ են: Սակայն տվյալ ժամանակաշրջացրում կա մեկ բացառություն, երբ առանց կործանիչների, միայն ցանաքային ՀՕՊ-ի միջոցներով պատերազմում տարվել է հաղթանակ: Այդ բացառիկ և փայլուն օրինակը պատկանում է մեզ՝ հայերիս:

Արցախյան գոյամարտը բացառիկ էր նաև ՕՀՄ-ների և ընդհանրապես ԹՄ-ների կիրառության կողմերի հնարավորություններով: Հազվադեպ են եղել այնպիսի մարտական գործողությունները, երբ պատերազմող կողմերից մեկը տիրապետի բավականին հզոր ՌՕՌ-ների՝ բազմաքանակ ԹՄ-ներով և փորձառու օդաչուներով, իսկ մյուս կողմը ոչ միայն չունենա համարժեք սարքեր, այլ նաև զրկված լինի տարրական ՀՕՊ-ի միջոցներից:

ԽՍՀՄ-ը փլուզման պահին Անդրկովկասում ուներ մի քանի ռազմական օդանավակայան, որոնք մտնում էին ՀՕՊ-ի 19-րդ առանձին բանակի և 34-րդ օդային բանակի կազմի մեջ: Վրաստանի տարածքում կար 9-ը, իսկ Աղբեջանի տարածքում՝ 5 ռազմական օդանավակայան<sup>82</sup>: Դրանցից էին Սիտալ-Չայում տեղակայված խորհրդային 80-րդ «Cy-25» գրոհիչների առաջին ավիագունդը, Նասոսնիում՝ ՀՕՊ-ի 82-րդ կործանիչային ավիագունդը՝ զինված «ՄիГ-25» կործանիչներով, Քյուրդամիրում՝ 976-րդ ռմբակոծիչային ավիագունդը՝ «Cy-24» ինքնարիոններով, և Դալյարում՝ 882-րդ հետախուզական ավիագունդը՝ «ՄիГ-25РБ» և «Cy-24MP» ինքնարիոններով: Աղբեջանը զանկացած զնով ձեռք էր բերում այդ ինքնարիոններից, չնայած որ Ռուսաստանը փորձում էր դուրս բերել դրանք<sup>83</sup>: Նույնիսկ դեպք է եղել, երբ բոխքից առաջ ինքնարիոնի անիվները ծակվել են, այլ համակարգեր խափանվել են, միայն թե ինքնարիոնը բոխք չկատարեր: Աղբեջանի տարածքից հանվող մարտավարական միջուկային սպառազինությունն անզամ քիչ էր մնում բաժին ընկներ ծայրահեղականների ձեռքը<sup>84</sup>:

### 6.4. Կործամիջները և ՀՕՊ-ի այլ սպառազինություններ

Հայկական ՌՕՌ-ի համար լավագույն տարբերակը, եթե չհաշվենք գումարային խնդիրները, ամերիկյան նորագույն «F-35»-ն է: Այս կործանին աշխարհում միակն է, որն ունի մեկ շարժիք:

<sup>79</sup> В. Щербаков. Пентагон составил тридцатилетний план развития авиации, Минобороны США отдает приоритет многофункциональным и беспилотным летательным аппаратам, Независимое военное обозрение, 2010-03-05.

<sup>80</sup> U.S. Հովակիմյան: Ռազմական բնագավառի նորույթներ: Հայկական Բանակ, № 3(33), 2002, Էջ 100-103:

<sup>81</sup> И. Капитанец. Флот в войнах..., стр. 244.

<sup>82</sup> М.Пядушкин. Вооружая Кавказ: Нечаянное наследство Москвы//Кавказ: вооружен и разобшен/ Под редакцией Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ: Лондон-М., Февраль 2004, стр. 164-167.

<sup>83</sup> Y.Aliyev. Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol. 1, Issue 2, Summer 2004, p.47.

<sup>84</sup> Ядерное нераспространение / Под ред. Орлова В.А. Т.1.ПИР-Центр: М., 2002, т.1, стр. 211.

միաժամանակ ուղղահայաց թռիչք-վայրէջքի հնարավորություն և այլն: Այն նույնիսկ երկշարժիչանի կործանիչներին գրեթե ոչ մի տվյալներով չի զիջում: Հենց նման հատկանիշներն են, որ այն մեզ համար դառնում է անփոխարինելի: ՀՀ-ում օդանավակայանային ցանցի սակավության պատճառով «F-35»-ի ՈւթՎ-ի հնարավորությունն ուղղակի անփոխարինելի է մեզ համար: Ընդ որում, «F-35»-ի ավանդական մարտավարատեխնիկական տվյալները խորհրդանշական չեն, ինչպես «Harrier»-ի և «Як-38»-ի մոտ, որոնք, որպես մարտավարական կործանիչ-ինքնարիոն, շատ թույլ տվյալներ ունեն: Հինգերորդ սերնդի ամերիկյան այս կործանիշն ունի շատ տեխնիկական հնարավորություններ, առանց որոնց հնարավոր չեն պատկերացնել ապագա պատերազմները: Ապագայում այս կործանիչը լինելու է ամենամասսայականը, ինչը շատ կարևոր է նրա շահագործման համար:

Հարմար տարբերակներ են ամերիկյան «F-16C», «F-15E» ֆրանսիական «Mirage 2000-5», «Rafale C-1» և ռուսական «Су-30» կործանիչները: Շատ արդյունավետ կինդի առաջինը, որն ունի մեկ շարժիչ, ինչը շահագործողի համար ավելի կարևոր է: «F-16C»-ն աշխարհի ամենատարածված կործանիչ-ինքնարիոն է, որը ևս կարևոր է հետագա շահագործման ծախսերի համար: Այն լիարժեք բազմաֆունկցիոնալ է, օժտված է լայն հնարավորություններով: Ֆրանսիական կործանիչները ևս շատ հարմար են: Առաջինը «F-16C»-ի նման ունի մեկ շարժիչ և լավ է իրեն դրսորում օդային մարտերում: Երկրորդը երկշարժիչանի է, ունի հինանալի տվյալներ և բազմաֆունկցիոնալ է:

Սակայն, հաշվի առնելով քաղաքական իրադրությունը, հայ օդաչուների մասնագիտական պատրաստության հիմնախնդիրները և ինքնարիոնների նախնական գինը՝ հավանաբար, լավագույն տարրերակը հենց ռուսական «Су-30» կործանիչն է: Վերջինս ունի մինչև 8 տոննա ռմբատարողություն և թռիչքի բավականին մեծ հեռահարություն: Կործանիչը հաջողությամբ կարող է խոցել և օդային, և վերգետնյա նշանակետներ: Կատարելով օդային գերազանցության ավահովման խնդիր՝ կարող է ինտերված լինել ՀՕՊ-ի հետ և միաժամանակ հեռահար հարվածներ հասցնել կարևոր վերգետնյա նշանակետներին: Երկու խնդիրների կատարման համար այն կարող է զինվել մինչև 100 կմ և ավելի հեռահարության ճշգրիտ հրթիռներով (X-28, X-31, X-35, X-58, X-59, P-27, P-77 և այլն)<sup>85</sup>: Այսինքն՝ կործանիչը, գտնվելով ՀՀ օդային տարածքում, կարող է խնդիրներ կատարել L-Ղ-ի և նույնիսկ Աղբբեցանի տարածքում: Վերգետնյա նշանակետներին հարվածելու համար «Су-30»-ը կրում է նաև գերճշգրիտ ռումբեր: «Су-30»-ը, բոլոր խնդիրների լուծման հետ միաժամանակ, այլ միջոցների համար հանդիսանում է օդային հրամանատարական կետ: Օդային հարվածներ հասցնելու ժամանակ այն կարող է կազմակերպել ամբողջ մարտը՝ և հարվածել, և օգնել այլ ԹՍ-ներին կատարել ճշգրիտ հարվածներ, և միաժամանակ պաշտպանել այդ սարքերին օդային հակառակորդից<sup>86</sup>: Կործանիչը դեկավարում է երկու օդաչու, ինչը շատ կարևոր է նախատիպ խնդիրների համալիր լուծման համար: «Су-30»-ը, լեռնային տեղանքում վերգետնյա նշանակետներին հարվածներ հասցնելու ժամանակ, մի քանի տվյալներով զիջում է «Су-24»-ին և «Су-25»-ին (ցածր թռչելու հնարավորություն, զրահապատ քաղաքանասեր)<sup>87</sup>: Սակայն նշվածներին գերազանցում է այլ, ոչ պակաս կարևոր տվյալներով (թռիչքի հեռահարություն, տարատեսակ սպառազինություններ կրելու հնարավորություն և այլն): Այն միաժամանակ օդային մարտի բոլոր ձևերում գերազանցում է դրանց ու «МиГ-29»-ին<sup>88</sup>: «Су-30»-ն աղբբեցանական «МиГ»-երին գերազանցում է թռիչքի հեռավորությամբ, ինչը հատկապես շատ կարևոր է մարտերը հակառակորդի տարածք տեղափոխելու տեսանկյունից:

Եթե նույնիսկ այսօր հայկական ԶՈՒ-երը ձեռք բերեն «МиГ-29» կործանիչներ, և վերջապես ստեղծվի կործանիչ ավիացիա, միևնույն է, դա լինելու է կարճաժամկետ լուծում՝ ի պատասխան աղբբեցանական նախաձեռնությանը, որն անբույլատրելի է Հայաստանի համար: Աղբբեցանի կողմից «Су-30»-ների կամ համարժեք այլ ինքնարիոնների ձեռք բերման դեպքում հայկական ՌՕՈՒ-ն նորից կհայտնի դժվար կացության մեջ<sup>89</sup>: Մենք նրանց նախաձեռնությանը ոչ թե պիտի պատասխանենք,

<sup>85</sup> В. Марковский, К. Перов. Советские..., стр. 47.

<sup>86</sup> В. Беляев, В. Ильин. Российская..., стр.156-157; <http://www.ausairpower.net/flanker.html>

<sup>87</sup> М. Архипова. Реактивные самолеты вооруженных сил СССР и России, М.-Минск. 2002, стр. 32-33.

<sup>88</sup> Բացի ակնհայտ մարտավարատեխնիկական տվյալներից, ասվածի լավագույն ապացույցը հանդիսացան օդային մարտերը Եթովպական «Су-27»-երի, որոնք հանդիսանում են «Су-30»-ի նախատիպը, և Երիթթեյական «МиГ-29»-երի միջև: Մարտերը գրեթե բացարձակապես ավարտվեցին առաջինի հաղթանակներով: <http://www.aviaport.ru/news/2009/03/26/169637.html>

<sup>89</sup> «Су-30» կործանիչը մոտակա 20 տարում կարող է դառնալ աշխարհի ամենամասսայական կործանիչներից մեկը: Բանն այն է, որ լինելով 4-րդ սերնդի լավագույն կործանիչներից մեկը և ներկայումս լավագույն

այլ նախաձեռնությունը մեր ձեռքը վերցնենք: «Cy-25»-երի որոշ քանակություն ՀՀ-ն ունի, իսկ «Cy-30»-ը ՀՀ-ի համար կարող է լուծել ուազմավարական խնդիրներ: Նման ինքնաթիռների անգամ փոքր քանակը՝ 10-12 միավոր, կարող է մեծ քան փոխել ուժերի հարաբերակցության հարցում: Դրանք իրենց զապողական դերը կատարած կլինեն անգամ հակառակորդի կողմից համանման ինքնաթիռների մեծ քանակի առկայության պայմաններում: Հարձակողական սպառազինության այս նվազագույն տեսակներն ու քանակն առնվազն խիստ անհրաժեշտ են՝ այսօր և ոչ հեռավոր ապագայուն հավասարակշռությունը պահելու համար: Գալիք պատերազմը դատապարտված է ընթանալ արցախյան լեռներից այն կողմէ: Հատկապես հետաքրքիր է Ըուռ-արաքսյան ջրային սահմանը, որի կամուրջների համար առանձնակի մարտեր կրնաման: Սա պատմական Հայոց սահմաններն են, որոնք բացի պատմական արժեքից, իրենցից ներկայացնում են նաև հզոր բնական սահմաններ: Այդ մարտերում հայկական ՌՕՌ-ն ստիպված է ունենալ գերճշգրիտ հարվածային միջոցներ և կործանիչներ, որոնք պիտի պահպանեն գրոհից ու ուղղաթիռային ավիացիային<sup>90</sup>:

Այստեղ կուգենայի մեջքերել ևս մի հանգանանք, որը մեր քննարկումն ավելի խորն ու հասցեական կղարձնի: Վերջերս հրապարակվեցին տեղեկություններ ՌԴ-ի կողմից Արքեջանին «C-300ՊՄՅ-2 Փավորիտ» տեսակի երկու զենիքահրթիռային համակարգերի (այս գենքերի յուրաքանչյուր դիլիզիոնը կարող է կազմել հենց մեկ համակարգ)<sup>91</sup> մատակարարման մասին: Այն մեկնարանությունները, որ նման համակարգերը զուտ պաշտպանական զենք են և ՀՀ-ի ու ԼՂ-ի անվտանգությանը չեն սպառնում, առնվազն անհիմն են և միամտություն: Նման համակարգերը որակապես մի քանի աստիճան տարբերվում են մինչ այժմ մեր տարածաշրջան ներմուծած զենքերից: Այս համակարգը հայտնի «C-400 Տրիոմֆ»-ի նախատիպն է և ավելի իրական հնարավորություններով է օժտված<sup>92</sup>: «C-300 ՊՄՅ-2» համակարգը հզոր հակառակային միջոց է, որը կարող է պայքարել տարատեսակ ԹՍ-ների, այդ թվում նաև՝ տարատեսակ հրթիռների դեմ: Ինքնաթիռներին և ուղղաթիռներին միջին բարձրությունների վրա այն կարող է խցել մինչև 200 կմ հեռավորության վրա, իսկ մարտավարական և օվերատիվ մարտավարական բախստիկ հրթիռներին՝ մինչև 40 կմ հեռավորության վրա: Ընդ որում, համակարգի տարբերակում, երբ համալիրին բազում օգնական միջոցների հետ տրված է նաև «54K6E2» մարտական դեկավարման կետը, այն կարող է միաժամանակ կրակ բացել 36 նշանակետերի վրա՝ արձակելով 72 հրթիռ<sup>93</sup>: Իհարկե, «48H6E» տեսակի հրթիռների դեպքում երկու դիվիզիոնները միասին մարտապաշտում այդքան հրթիռ չունեն: Իսկ «9M96» հրթիռների կամ երկու տեսակի հրթիռների համատեղ առկայության դեպքում մարտապաշտում զգալիորեն մեծ է: Երկրորդ տեսակի հրթիռը չափերով փոքր է, սակայն սովորական ԹՍ-ների խոցման հեռավորությունն այս հրթիռներով կազմում է առավելագույնը 120 կմ:

ոուսականը՝ այն քավականին էժան է, ինչի համար էլ ձեռք է բերվում մի շարք երկրների կողմից: Այս կործանիչի իիմնական թերությունները՝ վատ ուղիոսարքավորումներ, սպառազինություն և այլն, կարելի է որոշակիորեն շտկել: Հենց այս ճանապարհվ կարող են զնալ Չինաստանը և Հնդկաստանը, որոնք պլանավորում են մեծ քանակությամբ նման կործանիչներ ունենալ: 10-20 տարի հետո արևելքում այս կործանիչները կարող են լուրջ բախումների մեջ լինել ամերիկյան կործանիչների հետ: Չինաստանը, Հնդկաստանը և Ինդոնեզիան կունենան մեծ քանակությամբ նման կործանիչներ, որոնց հետ շահերի բախում կարող են ունենալ ամերիկյան կործանիչներով զինված ճապոնիան և Ավստրալիան: Այս տեսանկյունից էլ շահավետ է նման կործանիչների ձեռքբերումը:

<sup>90</sup> Այս մասին հանգանանայից տես՝ Գարեgin Վարданյան ՕԲՈРОНА ИЛИ НАСТУПЛЕНИЕ?

Օ ПЛАНЕ ВЕДЕНИЯ ВОЙНЫ С АЗЕРБАЙДЖАНОМ, [www.mitq.org](http://www.mitq.org), <http://www.noravank.am/ru/>

<sup>91</sup> Չնայած նրան, որ մատակարարման մանրամասների մասին պաշտոնապես ոչ մի տեղեկություն չի հաստատվել, սակայն այս դեպքերում «C-300 ՊՄՅ-2» տեսակի ԶՀՀ-ները մատակարարվում են այլ համալիրների հետ համագործակցելու ու տարատեսակ լրացնուցիչ սարքավորումներով, ուղիղութեղորշման կայաններով և դեկավարման կետերով, որոնց հետ միասին կազմում են համակարգ: Երկու դիվիզիոնների կազմում ստացվելու է 16 արձակման կայան: Ցուրաքանչյուր արձակման կայանի վրա կարող են տեղադրվել չորսական «48H6E» կամ տասնվեցական «9M96» հրթիռներ:

<sup>92</sup> «C-400 Տրիոմֆ» ԶՀՀ-ի սպառազինության մեջ մտնելու և իրական հնարավորությունների մասին այնքան իրարամերժ տեղեկություններ կան, որ այդ համալիրի հետ մեծ հոլյուստ կապելլ առայժմ անիրական է: 2000ր.

6-7 անգամ հետաձգվել է համալիրի սպառազինության մեջ ընդունելու ժամկետները, իսկ հրթիռների մասին մինչև օրս լուրջում է:

<sup>93</sup> Василин Н.Я., Гуринович А.Л. Зенитные..., стр. 258-264.

Աղբեջանական բանակում վաղուց սպառազինության մեջ գտնվում են «C-200» համալիրներ, որոնք կատարելագործվելով կարող են մտնել «C-300 ՊՄԿ-2» համակարգի մեջ և դեկավարվել մի կենտրոնից: Սրանք ևս գումարվում են համակարգի հնարավորությունների վրա: Իհարկե, լեռնային տեղանքում տեխնիկական հնարավորությունները մի փոքր կամաց կամականքի սակայն մեզ առավելապես պետք է հետաքրքրեն հատկապես համակարգի կողմից հրթիռների դեմ պայքարի հնարավորությունները:

Հին տեսակի նմանատիպ օդային հարձակման միջոցները (*բայիստիկ հրթիռներ, որոնց հեռահարությունը չի անցնում 500 կմ-ը, իսկ անկման արագությունը կազմում է մինչև 4-5.5 կմ/վ*) այս համակարգերի կողմից կիրառվեն<sup>94</sup>, մասնավորապես, եթե դրանց քանակը փոքր է, և դրանք չեն կարող կիրառվել այլ օդային հարձակման միջոցների հետ մասսայական արձակումներով:

Ինչպես տեսանք, երկու համակարգերը միայնակ կարող են միանագմից խոցել 72 օդային նշանակետեր՝ յուրաքանչյուրի խոցման համար արձակելով համապատասխանարար երկու հրթիռ: Սա այն դեպքում, եթե հրթիռների խոցումն ավելի դյուրին է՝ ելեւով նրանց կանխատեսելի հետազծից: Այս համակարգերը լուրջ անհավասարակշռություն են առաջացնելու տարածաշրջանում: «C-300 ՊՄԿ-2» համակարգերը մեծ հնարավորություններ ունեն այլ համանման գենքերի հետ համագործակցելու և պաշտպանական մեկ դաշտ կազմելու գործում: Դրանք կարող են համակարգային կիրառմանը մեծ տարածքներ պաշտպանել՝ համագործակցելով նաև կործանիչ ինքնարթիռների հետ: Հեռանկարում տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը պահպանելու համար հարկավոր կիմնեն նոր սերնդի ամենաարդիական ԹՍ-ներ, որոնք գենքի մրցավազքը բոլորովին այլ մակարդակի կրաքարացնեն: «C-300 ՊՄԿ-2» համակարգերը ստեղծվում են «Ալմա-Անտեй» կոնցերնի կողմից, որի նախագահն է ծնունդով բարվեցի<sup>95</sup> Իգոր Ռատոֆի Աշուրբեյլին: Վերջերս մի աղմկահարույց գործ բացվեց՝ կապված «C-400» համակարգի ստեղծման ծրագրի գումարների միաման (մի քանի միլիարդ ռուբլի) հետ, որի հեղինակը նույն Աշուրբեյլին էր: Նա վերևուներում, իր ծանոքությունների շնորհիվ, ոչ միայն «ջրից չոր դուրս եկավ», այլ նաև շարունակում է աշխատել և մեծ ծառայություններ մատուցել իր հայրենիքին: Մինչև վերջերս ՌԴ-ում Աղբեջանի Հանրապետության քաղաքացիներ չեն ստվրում, սակայն Տվերի օդատիեզերական պաշտպանության ակադեմիայում նրանց ստվրելու փաստն արդեն ապացուցում է, որ նրանք պատրաստվում են ճեռք բերել այդ համակարգերը: Նման համակարգերի հայտնվելը շատ մեծ քան է փոխում ՕՀՍ-ների ճեռքբերման մեր ծրագրերում: Աղբեջանը ՀՕՊ համալիրներ է ցանկանում ճեռք բերել նաև Ուկրաինայից, վերջիններս ևս կարող են միացվել «C-300 ՊՄԿ-2»-ի ցանցին: Մենք պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնենք նաև ՕՀՍ-ների հրթիռային տեսակներին, որոնց մասին կնշվի առանձին:

Ահա այս տեսանկյունից է նաև անհրաժեշտ դիտել ժամանակակից ՕՀՍ-ներ և կործանիչներ ունենալու իմաստիվը:

Այստեղ կարևոր ենք համարում նաև անդրադառնալ ՀՕՊ-ի սպառազինությանը, քանի որ այս երկու գորատեսակների միավորումն անխոտավելի է: Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ի այդ գորատեսակը զինված է խորհրդային սպառազինությամբ: Բարեփոխումներով ՀՕՊ-ն ավելի մարտունակ դարձնելու համար պետք է նախ վերագինել՝ միավորման ոգուն համապատասխան: Պատերազմի անցած փոլում աղբեջանական օրուժի և հայկական ՀՕՊ-ի հակամարտությունը լրացնում է հայոց փառավոր հաղթանակների ցանկը: Առանց հայկական կործանիչ ավիացիայի աղբեջանը մոտ 150 քոչող սարքերից կորցրել է 30-ը: Հայ հակառաջայնների հաջողության հիմնական գրավականը մասնագիտական ունակություններն են: Նրանք, եղած միջոցների շարժունակությունն օգտագործելով, արագ խուսափարում են: Կարծում ենք, որ ապագայում էլ նախատակահարմար կիմնի հայկական ՀՕՊ-ը կառուցել հիմնականում նման համալիրներով: Անշարժ կամ դանդաղաշարժ («C-300», «C-125» և «Kryg») մեծ համալիրներն ապահովում են խոցման հարթություն, սակայն մեր պայմաններում փոքր և լավ խուսափարող համալիրներն ավելի արդյունավետ են: Թվարկված համալիրներից վերջին երկուսը փաղուց արդեն հնացել են և իրենց առաջ դրված խնդիրները շատ դժվարությամբ կարող են լուծել: Տվյալ հեռավորությունների և բարձրությունների պաշտպանությունը

<sup>94</sup> Իհարկե, այս դասակարգման տակ են նաև ՀՀ ԶՈՒ-երի սպառազինության մեջ եղած «P-17» (проект 8К14, SS-1c Scud-B комплекс 9К72 Р-300 Эльбрус), օպերատիվ-մարտավարական հրթիռները:

<sup>95</sup> [http://old.vko.ru/article.asp?pr\\_sign=archive.2002.6.0206\\_01](http://old.vko.ru/article.asp?pr_sign=archive.2002.6.0206_01), <http://www.azeri.ru/pages/annonce/717/>, <http://www.raspletin.ru/company/officials/topdirector/>

հաջողությամբ կարող են իրականացնել ռուսական «С-300ПМУ-1,2», «С-300ВМ» և «БУК-М1-2» ԶՀՀ-ները, որոնց քանակը կարող է լինել մինչև 5-7 միավոր: Իսկ հիմնական ցամաքային ՀՕՊ-ը պետք է ապահովի ավելի փոքր ենուահարություն և բարձրություն, սակայն մեծ շարժումակություն և ունենա բազմանպատակայնություն ունեցող համալիրներ, ինպիսիք են՝ «Տօր Մ»-ը, «Տոնգուսկա Մ»-ն ու «Պանզիր-С1»-ը: Նման համալիրներ ՀՀ ԶՈՒ-ին հարկավոր են ավելի շատ: Եղած համարժեք «Օսա-ԱԿՄ» ԶՀՀ-ն ևս հնացել է և մոտ ժամանակներս առհասարակ չի համապատասխանի տրված պահանջներին: Նշված միջոցներից բացի շատ կարևոր են նաև կրովի ԶՀՀ-ները՝ «Իրլա»-ները, որոնց քանակը պետք է շատ լինի: Բոլոր այս համալիրների արդյունավետ աշխատանքի համար նախ հարկավոր է բոլոր ուժերի համատերում և կենտրոնական դեկավարում, շարժական հրամանատարական կետեր, որոնք տեղեկություններ կստանան մի քանի իրարից անկախ միջոցներից՝ օդային հետախուզության և դեկավարման կետերից, կործանիչներից, հետախուզական ԱԹՍ-ներից և այլն:

#### 6.5. Օդուժի բարեկոխումների այլ հարցեր

Ներկայումս առաջատար երկրներում ընթանում են զորատեսակների կիրառության մարտավարական սկզբունքների, ձևաչափերի և տեսակարար կշիռների վերանայման հիմնարար գործընթացներ:

Ցավով պետք է արձանագրել, որ այսօր ՀՀ ԶՈՒ-ում օդուժը չունի ոչ զգայի տեսակարար կշիռ, ոչ համապատասխան տեխնիկական հագեցվածություն: Իսկ կործանիչ ավիացիան առհասարակ բացակայում է:

Նախորդ ենթավերնագրում մենք անդրադարձանք կործանիչների հարցերին: Այժմ քննարկենք ԹՍ-ների այլ տեսակները:

Մենք արդեն նշեցինք բազմազան ԹՍ-ներ ունեցող մեր հարևանին: Հայաստանի համար աղբբեցանական օրինակն անքույլատրելի «շրեղություն» է՝ հատկապես նոյն քանակով:

Այսօր պետք է մեծ զարկ տալ ուղղաթիռային ավիացիային հատկապես տրանսպորտային: Ներկայումս Հայաստանին անհրաժեշտ է 30-40 տրանսպորտային ուղղաթիռ, որպեսզի երկու առանձին էսկարդիլիայի կազմով կարողանան, թեկուզ լարված, աշխատել առնվազն երկու ուղղությամբ: Ամենալավ տարրերակները ունական՝ մեզ արդեն լավ ծանոր «Ми-8» ուղղաթիռների նոր տարրերակներն են՝ «Ми-8 АМТШ», «Ми-171»: Վերջիններս օժտված են բարձր լեռնային տեղանքներում, բարդ օդերևութաբանական պայմաններում թոփշ կատարելու, տարատեսակ սպառազնությունների կիրառման հնարավորությամբ: Մարտական ուղղաթիռների քանակը կարող է լինել քիչ ավելի պակաս: Նախ, քանի որ կան պարտավորություններ ընդհանուր ավիատեխնիկայի քանակի վերաբերյալ, և, բացի այդ, վերը նշված ռազմատրանսպորտային ուղղաթիռները կարող են անհրաժեշտության դեպքում ներգրավել նաև հարվածային գործողություններին: Չնայած նման հարցերն ավելի յուրահատուկ են լուծվում՝ ուստի տրանսպորտային ուղղաթիռները գրանցվում են շինծու ընկերությունների վրա, իսկ թույլատրելի քանակը հիմնականում լրացվում են մարտական ուղղաթիռներով:

ՕՀՄ-ների և առհասարակ ավիացիայի դերը գնահատելու համար պարտադիր չէ անդրադարձանալ միայն ամերիկյան և արևմտյան փորձին: Մենք մեր ոչ հեռակա անցյալից և պետք է դասեր քաղենք: Հայ ժողովուրդն Արցախյան գոյամարտի ընթացքում ևս շատ օգտվեց ԹՍ-ների օգնությունից, որոնք ցամաքային սահմանի բացակայության պայմաններում հայ ժողովուրդի համար հանդիսացան ռազմավարական փոխադրամիջոցներ:

Սինչ և Լաշինի միջանցքի բացվելը հայկական կողմից տրանսպորտային բոլոր փոխադրումները կատարվել են ավիացիայի միջոցով: Առանց վարանելու պետք է փաստել, որ ավիացիան թույլ չտվեց հակառակորդին հայարավել Արցախը: Պատմությանը հայտնի են մի քանի դեպքեր, երբ տրանսպորտային ավիացիան որոշիչ դեր է խաղացել այս կամ այն հակամարտության ժամանակ, մասնավորապես 1940-1945թթ. Չինաստանի փրկության համար կազմակերպված կյանքի ճանապարհ՝ «Գորբը», որն անցնում էր Հնդկաստանի ջունգիների վրայով: 600 տրանսպորտային ինքնաթիռներն ամսական Չինաստան էին հասցնում մոտ 30 000 տոննա բեռ, և դրանցով պայքարը ճապոնացիների դեմ շարունակվեց մինչև հաղթական ավարտ<sup>96</sup>:

<sup>96</sup> К. Ли Ченнолт. Путь бойца. М., 2006, стр. 460.

Սյուս պատմությունը հայտնի է որպես Բեռլինի «Փրկության կամուրջ», որը 1948թ. մարտին ստեղծեցին ամերիկյան բեռնատար ինքնարթիոները: Խորհրդային ղեկավարությունը շրջափակել էր Գերմանիայի մայրաքաղաքը՝ նպատակ ունենալով տնտեսապես խեղդել վերջիններիս: Ամերիկյան ղեկավարությունն օրական 4500 տոննա բեռների փոխադրման ծավալներով մի կերպ փորկեց քաղաքի արևմտյան մասը սովահարությունից ու ցրտից<sup>97</sup>: Գործողությունը տևել է մոտ մեկ տարի:

Նման մի կամուրջ էին ստեղծել հայ օդաչուներն Արցախի համար: Եվ, եթե ավիացիան ունենար ոչ թե 7-8, այլ 30-40 տրանսպորտային ուղղաթիռ և ինքնարթիռ, ապա թերևս հնարավոր կիխներ նաև հայաբափումից փրկել Շահումյանը: Բացի դրանից, հայկական կողմից ձեռնարկված հիմնական հարձակողական գործողությունների նյութական պաշարների նախապատրաստական աշխատանքները կատարել ե ավիացիան: Սա բացառիկ դեպք է, եթե պատմության մեջ Թ-Ա-ները մարտական ապահովման ժամանակ ավելի շատ են կիրառվում, քան` մարտական խնդիրներ կատարելիս: Սա համաշխարհային ավիացիայի հայկական հետքն է: Գոյամարտի փորձից պետք է կատարել ճիշտ եզրակացություններ:

Հարվածային լավագույն ուղղաթիռները, որոնք կարող են մարտական խնդիրներ կատարել լեռնային տեղանքում, ամերիկյան «AH-1Z Viper» և «AH-64D Apache Longbow» ուղղաթիռներն են<sup>98</sup>: Սակայն, ելնելով քաղաքական, տնտեսական և ռազմատեխնիկական խնդիրներից, կարելի է ձեռք բերել նաև իտալական «A-129» և եվրոպական «Tiger» ուղղաթիռներ, որոնք ունեն լավ մարտավարաբառեխնիկական տվյալներ<sup>99</sup>: Ուստական «Mi-28» հարվածային ուղղաթիռը, ինչպես նաև իրենից բավականին հետաքրքիր լուծում ներկայացնող «Mi-35» ուղղաթիռը<sup>100</sup> լավ տարրերակներ են, սակայն դրանք գգալիրեն զիջում են վերը նշվածներին, իսկ իրենց ավանդական հիվանդություններից լիովին ազատված չեն: Լեռնային տեղանքում հարվածային ուղղաթիռների դերը գգալիրեն մեծ է, դրանք մարտավարական խորությունում կարող են լուծել գրոհիչ ինքնարթիռների խնդիրներ: Ամերիկյան ուղղաթիռները լավ զինված են, ունեն անհրաժեշտ բոիչքի հեռահարություն, բարձրություն, ինչը կարևոր է մեզ հանար: Դրանք ինտեգրված են բազում համակարգերի հետ, որը շատ է օգնում ցանքային հրամանատարին:

Ինքնարթիռների այլ տեսակների մասին նշելիս կուգենայինք առանձին ուշադրություն դարձնել գրոհիչներին, որոնք իրենց բնութագրերով ավելի կիրառելի են մեզանում, և դրա փորձն էլ արդեն կա: Ինչպես զիտենք, և հայկական, և ադրբեջանական ՌՕՌ-ներում կա «Cy-25» գրոհիչ ինքնարթիռը, որն անցել է լավ մարտական կիրառություն:

Գրոհիչ ինքնարթիռների ստեղծման պատմության մասին մենք արդեն հակիրճ նշել ենք գերճշգրիտ գեներերին անդրադառնալիս: Մարտական ինքնարթիռների այս տեսակի առջև ի սկզբանե դրվեց մի պահանջ՝ ուսմբերի փոքր քանակով հասնել մեծ արդյունավետության: Շատ դեպքերում, որպեսզի օդաչուն կարողանար դիպուկ ոմքահարել, ստիպված էր բավականին ցած իջնել: Քայլը, ինչ խոսք, տախու էր ցանկալի արդյունք, սակայն վտանգավոր էր: Ինքնարթիռը, վայր իջնելով, ՀՕՊ-ի միջոցների համար դառնում էր ավելի դյուրախտց, իսկ մեծ ինքնարթիռը չէր կարող շատ վայր իջնել և արագ գործել: Նշված և այլ մարտավարական պահանջները ձևավորեցին նոր տեսակի ինքնարթիռի կառուցվածքային առանձնահատկությունները: Գրոհիչ կոչվող ինքնարթիռը պետք է լիներ չափսերով փոքր, քանի որ նշանառու ոմքակոծությունը թույլ էր տախու չկրել ուսմբերի մեծ պաշար: Սուր անկյուններով գրոհումը և այլ խուսափարությունները, որոնք հասանելի չեն սովորական ոմքակոծիչներին, այս տեսակի ինքնարթիռներին դարձնում էին փոքր և լավ խուսափարող: Գրոհիչ ինքնարթիռները մարտական դիրքերի շրջանում, կրակային հակագդեցության պայմաններում մշտական գործողությունների համար պետք է ունենային լավ կենսունակություն: Այսինքն՝ դրանք

<sup>97</sup> Дж. Хелферс. ВМФ США. М., 2004, стр. 271.

<sup>98</sup> Ружицкий Е. И. Зарубежные вертолёты. — М.: ACT; Астрель, 2002, стр. 382; Jane's All The World's Aircraft 2004-2005 / Paul Jackson. — Jane's Information Group, 2004, p. 575-597; Пономарев А. Н. и др. Боевой вертолёт огневой поддержки наземных войск АН-64А Апач (США). — М.: Военное издательство, 1986, стр. 39.

<sup>99</sup> Flight International, v. 147 (1995), N 4461, p. 28-31; Gunston B. An Illustrated Guide to Military Helicopters. London: Salamander Books, 1981, p. 24; <http://www.oruzie.su/helicopters/221-udar>.

<sup>100</sup> Այն մեծապես ազատվել է իր նախատիպի՝ «Mi-24»-ի թերություններից (մեծ թևեր, ծանր պտուտակներ և փոխանցող սարք, վատ սպառազինություն, ծալովի անիվներ և այլն) և ստացել բավականին ժամանակակից սարքավորություններ ու սպառազինություն: Այն իր վրա կրում է շատ դետալներ «Mi-28»-ից: Իհարկե, սա ևս կարծամկետ լուծում է, սակայան բավականին էժան է:

պետք է լինեին զրահապատ: Զրահապատության կարիք ունեին հատկապես օդաչուի նստատեղը, ուժային կայանքը, վառելիքային մատակարարման և դեկավարման համակարգերը: Իհարկե, այս բոլոր պահանջները և մոտեցումները միանգամից ի հայտ չեկան: Ինչպես ցանկացած զինատեսակ, գրոհիչները ևս անցել են զարգացման երկար ճանապարհ: ԱՀՊ-ի ժամանակ փոքրիկ ինքնարիոներով ոմբակոծման փորձերը բերեցին այն բոլոր իմանախնդիրները, որոնց մասին մենք արդեն նշեցինք: Անգլիական «Camel TF.1» և «5F.1» կործանիչների հիման վրա ստեղծվել էին գրոհիչներ, որոնք ընդամենը կարող էին ուսում կրել և ունեին զրահաթիթեղներ օդաչուների համար<sup>101</sup>: Ժամանակի ընթացքում գրոհիչի երազարքը ձևավորվում էր ավելի հստակ: Մարտական այս ինքնարիոների կյանքում շրջադարձային եղավ խավանական պատերազմը: Գերմանացիները, ամերիկյան խոյրնքաց ոմբակոծության յուրացումից հետո, իրենց «Ju-87» գրոհիչնով 1939թ. առաջին անգամ զարմացրին աշխարհը: Նրանց մարտավարական մոտեցումները հեղափոխական էին: Այդ մոտեցումներն ու կիրառության բացարձակ վարպետությունը բիհցկրիկի նախնական փուլում ապահովեցին ցանող արդյունքները<sup>102</sup>: Խորհրդային գրոհիչների կատարելության հասկացողությունը հաստատվեց «Ил-2»-ով<sup>103</sup>: Գրոհիչների ամենամեծ դերակատարությունն եղավ այն, որ նրանք դարձան զրահատեխնիկայի և կենդանի ուժի ամենաահեղ թշնամիներից մեկը, այսինքն՝ ՅԶ-ի հիմնական հարձակման միջոցների ամենաահեղ թշնամիները: Հետագայում բոլոր տեսակի պատերազմներում գրոհիչները սկսեցին ավելի ու ավելի մեծ պահանջարկ վայելել: Սիայն ռեակտիվ ավիացիայի դարաշրջանում մասնագետները, հրապուրվելով մեծ արագություններով և միջուկային զենքերով, ուշադրությունից բաց բողեցին գրոհիչներին ներկայացվող հիմնական պահանջները: Գրոհիչ կոչվածները բազմանպատակ ինքնարիոներ էին: Սակայն Վիետնամական պատերազմը ստիպեց անդրադառնալ մոռացված շատ հարցերի:

Նոր մոտեցումներին, իին պահանջներին ու արդիական համակարգերին համապատասխան՝ առաջին գրոհիչը՝ «A-10»-ը, 1976թ. հայտնվեց ամերիկյան Ω-ՕՌι-ի ապառազինության մեջ<sup>104</sup>: Չորս տարի անց խորհրդային Ω-ՕՌι-ն ևս զինվեց նման գրոհիչով: Խորհրդային ինքնարիոնը կոչվում էր «Су-25»: Ստացվեց այնպես, որ այս գրոհիչի փորձարկումները միանգամից մարտում անցավ: Աֆղանստանում, որտեղ տեղի էին ունենում մարտական գործողություններ խորհրդային գրոհիչով՝ «Ромб» ծածկանվամբ, դեռ սպառազինության մեջ չնտած, 1980թ. ապրիլ ամսին անցկացվեց հասուկ փորձնական գործողություն<sup>105</sup>: Սպառազինության ընդունումը երկար չտևեց: Դրանից հետո այս գրոհիչների մեկ էսկադրիլիան, որը ընթացքում դարձավ մեկ ավիագրունդ, մշտապես գտնվում էր Աֆղանստանում և մասնակցում էր մարտական գործողություններին: Կիրառության ընթացքում մարտական պայմաններում ծագած ամեն մի խնդիր լուծում էին միանգամից կոնստրուկտորական բյուրոյի մասնագետները: Ընդհանուր առմամբ, նաև ակտուացության հենց առաջին դեպքերը ցույց տվեցին այս ինքնարիոների բարձր հուսալիությունը, կենսունակությունը և արդյունավետությունը: Ըստ ուսուական մամուլի բազմաքանակ տեղեկությունների՝ «Су-25» գրոհիչներով աֆղանական պատերազմի ընթացքում կատարվել է ավելի քան 60 000 մարտական բոիչը: Օդուժը գրեթե ինը տարվա շահագրծման ընթացքում, մարտական պայմաններում կորցրել է ընդամենը 23 գրոհիչ<sup>106</sup>: Կան ուսուական մասնագետներ, որոնք իրական կորուստները զնահատում են 34-35<sup>107</sup>: Այնուամենայնիվ, «Су-25» գրոհիչների կիրառության փորձն աֆղանական պատերազմում հաջողված էր<sup>108</sup>: Նույն սցենարն ապացուցվեց նաև իրան-իրաքյան, արցախյան և բազում այլ տեղային

<sup>101</sup> «Camel TF.1» և «5F.1» տարբերակները՝ В. Обухович, А. Никифоров. Самолеты первой мировой войны. Минск.2003, стр. 80-87.

<sup>102</sup> М. Зефиров. Асы Люфтваффе-штурмовая авиация. М.,2005, стр. 6-52.

<sup>103</sup> А. Кутепов, А.Макаревский, А.Минаев. Ученый и конструктор С.В.Ильин. М.,1978, стр. 51-74.

<sup>104</sup> В. Антонов, А. Карапулин, Американский штурмовик А-10А, ЗВО, № 11/1978, стр.53-59.

<sup>105</sup> И. Бедретдинов. Штурмовик Су-25 и его модификации. — Издание 2-е. — М., 2002, стр. 73-400.

<sup>106</sup> Г.Н. Дмитриев. Послевоенные ударные самолеты. Ретроспектива и современность. Ч. 2. М., 1997, стр. 32. <http://www.airwar.ru/history/locwar/afgan/su25/su25.htm>

<sup>107</sup> И. Бедретдинов. Штурмовик Су-25..., стр. 10-187. Марковский В. Штурмовик Су-25 в Афганистане. Экспринт, 2006.

<sup>108</sup> Արդյունավետությունը չափվում է այսպիս ցուցանիշով՝ յուրաքանչյուր խոցված ինքնարիոնին բաժին է ընկնում մոտ 1700 բոիչ:

պատերազմներում<sup>109</sup>: Սակայն «Cy-25»-ի վերջին կիրառությունն երկու չեղենական և վրաց-օսական պատերազմներում բավականին անհաջող էր: Ընդհանուր առմամբ, կատարելով աֆղանական պատերազմից մի քանի անգամ պակաս մարտական թոփքներ՝ ոռուական ՌՕՌ-ն կորցրել է մոտ 15 գրոհի<sup>110</sup>: Ինքնարիոները բավականին կենսունակ են, շատերը վայրէջք են կատարել լուրջ վնասվածքներով, ինչն ապացուցում է ինքնարիոնի բարձր կենսունակությունը: (Տե՛ս նկար 25)

«A-10» գրոհին առաջին անգամ մարտական գործողության մասնակցել է 1991թ. Իրաքում «Փոքրիկ անապատում» ռազմագործողության ժամանակ: Ըստ արտասահմանյան մամուլի՝ ամերիկյան գրոհիչները կատարել են ավելի քան 8000 մարտական թոփք<sup>111</sup>: Գործողությանը մասնակցել են ընդամենը 120 նման ինքնարիոն: Տեխնիկական (մարտական պատրաստականություն) պատրաստությունը կազմել է 95,7 %, ինչը, նկատենք, բավականին բարձր ցուցանիշ է: Մի քանի անգամ գրոհիչները մարտական առաջադրանքներից վերադարձել են լուրջ վնասվածքներով, ինչը խոսում է ինքնարիոնի բարձր կենսունակության մասին: Ըստ մամուլի տվյալների՝ ամերիկացիները կորցրել են նման 5-6 ինքնարիոն<sup>112</sup>: Ամերիկյան գրոհիչները բացի ավանդական մարտական առաջադրանքներից օդում խոցել են նաև երկու իրաքյան ուղղարիոն<sup>113</sup>: «A-10 Thunderbolt II»-ը հետագայում մասնակցել է նաև հարավսկավական և իրաքյան երկրորդ պատերազմներին: Եվ այդ մարտական գործողությունների ժամանակ այս տեսակի գրոհիչները կորուստներ չեն կրել: Մի քանի անգամ «A-10 Thunderbolt II»-ը վնասվել է, սակայն վերադարձել շարք: 1999թ. մայիսի 2-ին գրոհիչը (արտադրական համարը 81-0967) մարտական թոփքից վերադարձնում է մակեղոնական Սկոպյե քաղաք մեկ շարժիչով<sup>114</sup>: «A-10»-ը հետագայում մասնակցեց նաև իրաքյան 2003թ. պատերազմին, որտեղ ևս ապացուցեց իր բարձր վարկանիշը՝ մեկ կորուստ և մեկ վնասվածքով վայրէջք: (Տե՛ս նկար 26, 27) Այստեղ ևս դեպքերից մեկի ժամանակ գրոհիչը վայրէջք էր կատարել մեկ վնասված շարժիչով:

«A-10» գրոհիչը գրահապատված է գրեթե նույնան և նույն կերպ, որքան «Cy-25»-ը: «A-10»-ն իր արտաքինով, կառուցվածքով և մի շարք այլ հատկանիշներով գերազանցում է խորհրդային մրցակցին: Ինքնարիոնի շարժիչները ներկայիս համազորային մարտում ավելի խոցելի են, քանի որ գրոհիչը, գործելով ցածր բարձրությունների վրա, հայտնվում է ջերմային ինքնուղղորդվող հրթիռների գոտում: Այդ հրթիռների ամենամեծ թիրախը շարժիչներն են: Նման բարձրությունների վրա մեծ արդյունավետությամբ են գործում զենիթային հրանորներն ու զննացիրները, իսկ շարժիչներն ավելի խոցելի են, քան` այլ համակարգեր: «Cy-25»-ը շարժիչներին վերաբերվող ցանկացած առումով զիջում է «A-10»-ին: Սկսակ առավելությունը, որ ունի խորհրդային գրոհիչի շարժիչը, դիգելային վառելիքի օգտագործման հնարավորությունն է:

«A-10»-ի շարժիչները տեղադրված են ավելի բարձր և ազատ: Այս հանգամանքը թույլ է տալիս անհրաժեշտության դեպքում ինքնարիոնի շարժիչները վերանորոգել ավելի արագ կամ փոխարինել մեկ

<sup>109</sup> <http://www.aviaport.ru/news/2007/01/17/114407.html>;

<http://www.airwar.ru/history/locwar/xussr/abkhazia/abkhazia.html>

<sup>110</sup> Журнал «Авиапарк». - № 4 (специвыпуск). — 2008, стр. 10., М. Барабанов, А. Лавров, В. Целуйко. Танки августа. М., Центр анализа стратегий и технологий, 2009, стр. 110;

[http://foxbatavia.narod.ru/article/chech/cech\\_7.htm](http://foxbatavia.narod.ru/article/chech/cech_7.htm), <http://www.memo.ru/hr/hotpoints/N-Caucas/ch99/010616/k0616e.htm>, <http://rg.ru/2008/08/09/samolety2-anons.html>,

<http://www.rb.ru/news/politics/2008/08/11/132621.html>, <http://kp.ru/daily/24147/364095/>,

<http://www.vesti.ru/doc.html?id=221668>

<sup>111</sup> 2007 USAF Almanac-Equipment. Air Force Magazine Journal, volume 90, issue 5, May 2007, p. 62;

<http://www.flightglobal.com/articles/2007/08/29/216249/us-air-force-may-extend-fairchild-a-10-life-beyond-2028.html>;

[http://specialist.neonet.lv/big\\_gun.htm](http://specialist.neonet.lv/big_gun.htm)

<sup>112</sup> Նման կորուստների պարագայում ստացվում է 1350 թոփք յուրաքանչյուր խոցված ինքնարիոնի համար, սակայն այստեղ պետք է հաշվի առնել իրաքյան և աֆղանական ՀՕՊ-ի տարրերությունը: Աֆղանական ՀՕՊ-ը պարզագույնն էր: Բացի այդ, խորհրդային կոնստրուկտորները ժամանակի ընթացքում հնարավորություն ունեցան ավելի կատարելազորները «Cy-25»-ը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սխալ: Աֆղանական պատերազմին մասնակցած գրոհիչներն անցել են կատարելազորներում մի քանի փուլ: Յուրաքանչյուր փուլի կիրառումից հետո արվում էին հետևողաբար և ձեռք էին առնվում համապատասխան միջոցներ: Մոտավորապես հավասար ՀՕՊ-ի հակագրեցության պայմաններում «Cy-25»-ն ունեցել է կորուստ՝ 1000-ից պակաս թոփքներով:

<sup>113</sup> В.Е. Ильин, М.А. Левин. Истребители..., стр.175.

<sup>114</sup> [http://ru.wikipedia.org/wiki/Fairchild\\_Republic\\_A-10\\_Thunderbolt\\_II](http://ru.wikipedia.org/wiki/Fairchild_Republic_A-10_Thunderbolt_II)

այլ տեսակով՝ առանց ինքնարթիոի լուրջ կատարելագործման: Դաշտային պայմաններում ավելի է հեշտանում սպասարկումն ու վերանորոգումը: Դաշտային օդանավակայաններից ավելի դյուրին է կատարվում բոխըն ու վայրէջքը: «A-10»-ի շարժիչների և հորիզոնական դեկերի տեղադրությունն այնքան հաջողված է, որ երկու դեկերը պահում են շարժիչների խոցումն ու ավելի հուսալի են, քան մեկը՝ «Cy-25»-ի մոտ: Ներքեւից նման շարժիչներն ավելի դժվար թիրախներ են գենիքային հրանորների և զնդագիրների համար: Շարժիչների խոցման բնական խոշընդուն են համարվում թևերը՝ առջևի կիսադաշտից ներքեւից խոցելու համար:

Երկու գրոհիչներն ել լավ սպառազինված են: Երկու գրոհիչներն ել ունեն միատեսակ ոմբային և հրբիռային սպառազինություն կրելու հնարավորություն: Գրեթե նույն են նաև կիրառության համակարգերը, չնայած որ այժմ «Cy-39»-ը և «A-10»-ի կատարելագործված տարրերակները հանդերձավորված են ավելի արդիական դեկավարման և կիրառման համակարգերով: Ամերիկյան ինքնարթիո սպառազինության քանակը զգալիորեն ավելին է: Ոճքատարողությունը կազմում է ավելի քան 7000 կգ՝ ուսական ինքնարթիո 4500-ի դիմաց: «Cy-25»-ն ունի երկու 30 մմ-ոց ավտոմատ հրանոր՝ զնդագմենը 250 արկ պաշարով<sup>115</sup>: Իսկ «A-10»-ի հրանորն ունի նույն տրամաչափը, սակայն արագածիք է: Այն ունի 1300-ից ավելի արկ և 7 փող<sup>116</sup>: Գրոհիչի համար, որը շատ դեպքերում ստիպված է միշտ գործել ՑԶ-ի շրջանում, նույն նշանակետի նոտակայրում աշխատել մի քանի րոպե, այս ամենն ավելի կարևոր է: Նույնիսկ մեկ կամ երկու գրոհի ընթացքում շատ ուժուր կարելի է նետել և ավելի շատ վնաս տալ: Նույն ժամանակամիջոցում արագածիք հրանորը, ունենալով արկի մեծ պաշար, մեծ վնաս կալատճարի նշանակետին, ինչը հայտնաբերելու համար «A-10»-ի օդաչուի տեսադաշտը՝ առջև, կողք, ներքև, զգալիորեն ավելի լավն է:

«Cy-25»-ն առավելագույն բոխչային զանգվածների դեպքում ունի ավելի մեծ խուսափարություն: Իսկ նորմալ բոխչային զանգվածների դեպքում այդ առավելությունը կորչում է: «Cy-25»-ն ունի նաև առավելագույն մեծ արագություն: Իհարկե, խուսափարությունն ու արագությունն ինքնարթիոի համար շատ կարևոր հատկանիշներ են, սակայն գրոհիչի համար՝ ոչ ամենակարևորը: «A-10»-ի թերի մակերեսի փրա, սահմանային ավելի փոքր ազդեցության հաշվին, հնարավոր է դառնում ավելի հեշտ կազմակերպել ցածրաթուշք գրոհները՝ օդաչուին կրկնակի գրոհների ժամանակ թողնելով, ինչն էլ թույլ է տալիս, որ նշանակետն առավել լավ ուսումնասիրվի (316կգ/մ<sup>2</sup> 485կգ/մ<sup>2</sup>-ի դիմաց): «A-10»-ի ընդիանուր շահագործման պաշարը նույնական մեծ է, իսկ բոխչքի հեռավորությամբ խորհրդային մրցակիցը շատ հեռու է մնում: «A-10»-ը կարող է օրում վերալիցքավորվել: Այն 5 տոննա ավելի ծանր լինելով՝ սպառազինության քաշով երկու, իսկ բոխչքի հեռավորությամբ ավելի քան երկու անգամ գերազանցում է «Cy-25»-ին<sup>117</sup>: Նոր «Cy-39»-ից «A-10»-ը ծանր է ընդագմենը 3 տոննայով և ունի գրեթե նույն առավելությունները:

Սիա աշխարհի ամենալավ գրոհիչների համեմատությունները, որոնք մեր Ո-ՕՌ-ում առանցքային տեղ ունեն:

Վերը նշված բազմաֆունկցիոնալ կործանիչների հետ մեկտեղ նման գրոհիչները լիովին բավարար են՝ հայկական Ո-ՕՌ-ի անհրաժեշտ հզրությունը և մարտունակությունը ինքնարթիոային մասով ապահովելու համար: Լավագույն տարրերակներից կիրառելու 20 միավոր «Cy-30», 50 միավոր «F-35» և 30 միավոր «A-10» հարաբերակցությունը: Ընդ որում, առաջին կործանիչները, որոնք իրենց շափերով և որոշակի կատարվելիք խնդիրներով առաջին տերում ախտի լինեն, հարկավոր է, որ համապատասխան ամերիկյան շափանիշներին: «Cy-30»-ը կարող է հագեցվել ամերիկյան էլեկտրոսարքավորումներով և անգամ սպառազինությամբ, հրթիռներով, ինչը կմեծացնի նաև նշված այլ ինքնարթիոների հետ համագործակցելու հնարավորությունները:

Իհարկե, թվարկված ավիացիոն և ՀՕՊ տեխնիկայի ձեռքբերումը կախված է ահռելի նյութական միջոցների հետ: Սակայն, եթե համապատասխան մասնագետներն ուսումնասիրեն խնդրի ամբողջ կարևորությունը և հասցնեն երկու դեկավարությանը, լուծումներ կգտնվեն: Նախ՝ Ո-ուսաստանը և այլ տերությունները մեզ նման տեխնիկան կմատակարարեն ներքին գներով, որոնք մոտ 20-30 տոկոս էժան են շուկայական գներից: Հետո՝ իր նորագույն ավիատեխնիկայի վաճառքի համար

<sup>115</sup> И. Бедретдинов. Штурмовик Су-25..., стр. 20-180.

<sup>116</sup> Зарубежное военное обозрение, № 11/1978, капитан В.Антонов, А. Караулин, Американский штурмовик A-10A, стр. 53-59.

<sup>117</sup> И. Бедретдинов. Штурмовик Су-25..., стр. 20-180; Зарубежное военное обозрение, № 11/1978, капитан В.Антонов, А. Караулин, Американский штурмовик A-10A, стр. 53-59.

Ուստահամը տրամադրում է արտոնյալ վարկեր: Այսինքն՝ տեխնիկան կարելի է գնել ապառիկ: Մենք պետական, հասարակական և այլ ոլորտներում տարատեսակ զարգացումների գործում միշտ սիրում ենք օրինակ թերել իրականում շատ բաներով մեզ նման Խրայելին:

ԵՀՊ-ից հետո հրեաները պատերազմների մեջ դնում էին իրենց հազարամյակներով կորցրած պետականության հիմքերը: Այդ դժվարին ժամանակներում, եթե ամեն ինչ կախված էր օդում, պայքարի առաջամարտիկները, ճիշտ հասկանալով խնդրի կարևորությունը, հրեական սփյուռքին խնդրեցին աշխարհի ցանկացած ծայրերից ներդրում ունենալ՝ դեռ նույնիսկ չստեղծված պետության ՌՕՌ-ի կայացման գործում: Տարբեր չափերի գումարների տրամադրումից զատ, շատ հրեաներ գնում էին ամենատարբեր ինքնարիոններ և անօրինական ճանապարհներով հասցնում Խրայել<sup>118</sup>: Արդի աշխարհում մրցակցության գրավականն առաջին հերթին մտավոր-ինտելեկտուալ միջոցների լարումն է: Մենք այսօր կանգնած ենք լինել-չլինելու և ոչ թե գուտ մրցակցության պայմանների առաջ: Խնդիրը մեր ընկալումն է, համազգային գիտակցությունն այդ վտանգների նկատմամբ: Եթե երկրի անվտանգության ապահովման խնդիրը նույն կերպ է ընկալվում ազգային ընտրանու և բոլոր խավերի կողմից, ապա ցանկացած խնդիրը լուծելի է: Տարբեր գնահատականներով՝ աշխարհում հայկական ընդհանուր կապիտալը կազմում է մոտ 450 մլրդ դրամ (այսինքն՝ բյուրքալեզու երկու պետությունների ամբողջ կարողության շափ)<sup>119</sup>): Նման կապիտալի միայն տոկոսներով համապատասխան ազգային գաղափարախոսության դեպքում կարելի է մեծապես իրականացնել ազգային նպատակները:

## 6.6. Այլ ՕՀՄ-ներ

2008թ. հունիսի 26-ին Բարվում անցկացված գորահանդեսի ժամանակ Ադրբեյջանը ցուցադրեց մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա և սպառազինություն: Մասնավորապես աչքի էին ընկնում Ռուսական գնական «ՄիԴ-29» կործանիչները<sup>120</sup>, մարտավարական հրթիռային «Տոչկա-Ս (9K79-1)» համալիրները<sup>121</sup>, «Սմերչ (9K58)» և «Լունք» ՀԿՈՀ-ները:

«Տոչկա-Ս» համալիրն ինքնազմաց մեքենայի վրա ունի մեկ հրթիռ (9M79-1K կամ 9M79-1Փ), որի մարտավարական մասը կազմում է ավելի քան 400 կգ, և կարող է նշանակետեր խոցել մինչև 120 կմ հեռավորության վրա: Առավելագույն հեռավորության վրա հրթիռի սխալվելու չափը կազմում է մոտ 200-300 մ<sup>122</sup>: Համալիրների քանակը սուսոյզ հայտնի չէ, սակայն, եթե այն մոտենում է մեկ տասնյակի, արդեն լուրջ խնդիր է: Իհարկե, ադրբեյջանական համալիրները կարող են լինել ոչ թե «Տոչկա-Ս», այլ՝ «Տոչկա», որի տվյալները մի փոքր թույլ են, սակայն դա շատ բան չի փոխում: Դրանք Նախիջևանից կարող են հարվածներ հասցնել Արարատյան դաշտավայրին:

Մեծ ուշադրության է արժանի գորահանդեսին ցուցադրված խրայելական ՀԿՈՀ-ն: «Լունք»-ն ունի մի քանի տեսակի հրթիռների՝ հատկապես մեծ հզորությամբ և հեռահարությամբ օժտված «EXTRA» հրթիռի, որոնք գերճշգրիտ, մարտավարական հրթիռներ են, ինչպես նաև ԱԹՄ-ների արձակման հնարավորություն<sup>123</sup>: Չնայած վերջերս այս տեսակի ՀԿՈՀ-ների և «EXTRA» հրթիռների հետ կապված որոշակի խնդիրներ ծագեցին<sup>124</sup>:

<sup>118</sup> Жирохов М.А., История BBC..., стр. 6-7.

<sup>119</sup>Գ. Տեր-Հարությունյան: ՀՀ-Թուրքիա հարաբերությունների համատեքստը: Գլոբուս ազգային ամվանգություն, 5/2009թ., էջ 9:

<sup>120</sup> Н. Зубаиров. Чем занимается украинский ОПК// Известия, 19.02.2007.

<sup>121</sup> The Military Balance 2010, p. 176-177.

<sup>122</sup> А.Широкорад. Атомный таран ХХ века. М.,2005, стр. 225-228.

<sup>123</sup> С.В. Гуров. Боеприпасы реактивной артиллерии // Боеприпасы и высокоенергетические конденсированные системы. Научно-технический журнал. Выпуск №4, – 2008, стр. 6-13.

<sup>124</sup> 2004-2009թթ. Ադրբեյջանն Խրայելից գնել է «Լունք» տեսակի ՀԿՈՀ 6 արձակման կայաններ: Հիշյալ ՀԿՈՀ-ները հնարավորություն ունեն հարվածել հրթիռների՝ երեք տեսակով, (122 մմ, 160 մմ, 300 մմ «Extra») և օժտված են խոցելու բավականին բարձր դիպուկությամբ: Գնվել է 300 մմ «Extra» տեսակի 50 հրթիռ, սակայն դրանց հաջող փորձարկումների մասին տվյալներ չկան: Հատկանշական է, որ «Ղազախստանում» («Նայզա» անվանում ստացած) համանման ՀԿՈՀ դիվիզիոնը 300 մմ հրթիռներով հանդերձ գնելու կապակցությամբ առաջացրել է մեծ դժգոհություն: Ձերբակալվել են այդ երկրի պաշտպանության նախարարության մի շարք բարձրաստիճան աշխատակիցներ: Պարզվել է, որ խրայելական Israel Military Industries – Soltam Systems LTD ընկերությունների արտադրած հիշյալ ՀԿՈՀ-ները և հրեատեսային համակարգերը փորձարկման ժամանակ դրսերել են էական կառուցվածքային և տեխնոլոգիական թերություններ և թերմշակվածություններ: Մանրամասն տես՝

Աղբեջանն այսօր բացի նրանից, որ զինվում է ԱԹՍ-ներով, ցանկանում է խրայելական ընկերությունների հետ համատեղ արտադրել սովորական ու անգամ մարտական ԱԹՍ-ներ<sup>125</sup>:

Մեզ համար անծանոք չեն աղբեջանական մեթոդները: Նրանք մինչև հրադադարի կնքումը խաղաղ բնակչության նկատմամբ մեծ ոգևորությամբ կիրառում էին «Գրադ» ՀԿՈՀ-ներ, 500 կգ-անոց և ավելի ծանր ամենատարբեր ոռումքեր և այլն<sup>126</sup>: Սիսումները նույնն են. այսօր զնվում են հզոր ՕՀՍ-ներ, որոնց դերակատարությունը վերջին տեղային պատերազմներում զգալիորեն աճել է<sup>127</sup>: Եթե ուշադրություն դարձնենք, ներկայում ակտիվորեն զնվող սպառազինությունը զգալիորեն տարբերվում է նախկինում կիրառվածից՝ իր ավերող հատկանիշներով, հեռահարությամբ, դիպուկությամբ և հատկապես քանակով: Նախկինում հիմնական ՕՀՍ-ները խորհրդային սովորական սպառազինություն կիրառող ինքնարիոններն ու ուղղարիոններն էին, որոնց հետ պայքարում հայկական կողմը ցուցաբերեց հիանալի արդյունքներ, իսկ «Գրադ»-ի հրթիռների դիպուկությունը շատ ցածր է, մարտական մասն էլ մոտ է 20 կգ-ին<sup>128</sup>:

Այսօր պատկերը մի փոքր այլ է: Ասպարեզ են մտնում մեծ ՀԿՈՀ-ներն իրենց մի քանի հարյուր կիլոգրամ հրթիռներով, որոնց մարտական մասերն անցնում են 100-150 կգ-ից և ունեն նաև կասետային մարտական մասեր: Ի հայտ են զալիս նաև մարտավարական հրթիռները, որոնց դիպուկությունը շատ բարձր է, իսկ նրանց հետ պայքարը շատ դժվար է<sup>129</sup>: Վերջերս զնված հրանորդային հրետանային համալիրները և հրանորդները ևս աշքի են ընկնում իրենց հեռահարությամբ և հզորությամբ (203,2մմ տրամաչափի «2C7 Պիոն», 152 մմ տրամաչափի «2A36 Գնացինտ-Բ» և 130մմ տրամաչափի «M-46» հրետանային համալիրները)<sup>130</sup>: Նման միջոցներով անակնկալ հարվածի դեպքում թշնամին կարող է զգայի վնասներ պատճառել կարևորագույն նշանակետերին, որոնց տեղադիրքը վաղուց ուսումնասիրել են հետախուզության ամենատարբեր միջոցներով: Հարձակողական այս միջոցները, գրեթե լիովին դուրս գտնվելով մեր համապատասխան միջոցների հակահարվածներից, կարող են ոմբակոծել հայկական քաղաքներն ու կարևորագույն հաղորդակցության ուղիները: Համակարգային կիրառությունից բացի, համազորային մարտի ժամանակ դրանք կարող են կիրառվել նաև այլ ձևով: Խոսքն, իհարկե, զնում է հայկական բնակավայրերի և տնտեսական ունեցվածքի մասին, որոնք կարող են ենթարկվել տոստալ ոմբակոծության՝ անգամ աղբեջանական ԶՈՒ-ի անհաջողության դեպքում: Այսինքն՝ նրանց մարտավարությունը նույնն է, ինչ նախորդ անգամ, սակայն այս անգամ ծավալներն ու վնասներն են ավելի մեծ լինելու: «Տոչկա-Յ»-ն, «Ըմերգ»-ը, «Lynx»-ը, «2C7 Պիոն»-ը, «M-46»-ը և այլ համակարգերը զգայի վնաս կարող են հասցնել հայոց տնտեսական և նյութական կարողություններին, կարևորագույն հաղորդակցության ուղիներին, կամուրջներին, բնակավայրերին և այլն: Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ (1980-1988 թթ.) մենք նշեցինք այսպես կոչված «քաղաքների պատերազմ»-ի մասին, որն ինչ-որ կերպ դարձել է պատերազմի նոր տեսակ: Աղբեջանը պատերազմի նախորդ փուլում այս քայլը կատարում էր մեծ հիացմունքով, սակայն մենք հակահարված չէինք տախի: Նրանք այս անգամ դա կանեն ավելի մեծ հնարավորություններով և կարող են մնալ անպատիծ, եթե համապատասխան միջոցներ ձեռք չառնվեն:

Հայաստանի ԶՈՒ-ի ունեցած և որոշ լրատվամիջոցներում արծարծվող «P-17 (проект 8К14, SS-1c Scud-B комплекс 9К72 Р-300 Эльбрус)», օպերատիվ-մարտավարական հրթիռները, իհարկե, հզոր հարձակողական միջոցներ են: Այս հրթիռն իր տեսակի մեջ աշխարհում ամենատարածվածն է ու շատ կիրառվածը: Սակայն պետք է նշել, որ այս հրթիռներն ունեն մի քանի թերություններ: Առաջինը, իհարկե, դրանց խոցման ճշտությունն է: Կիրառության փորձը Մերձավոր Արևելքի մի քանի

---

Коновалов, Т. Кучуков, «Вызвал огонь на себя, Время», 14.04.2009(<http://www.time.kz/index.php?newsid=9969>); Сделка с казахами заморожена-израильский производитель военной техники увольняет работников, <http://izrus.co.il/dvuhstoronka/article/2009-03-30/4159.html>, 03.30.2009.

<sup>125</sup> <http://news.bakililar.az/news-azerbayjan-i-izrail-36377.html>

<sup>126</sup> М. Агаджанян, Э. Асатрян, С.Минасян. Азербайджан ...стр.103.

<sup>127</sup> Այս մասին տես՝ Ա.Հովհաննիսյան: Սի քանի հարցեր ավիացիայից: Եր., 2009թ.:

<sup>128</sup> В. Князев. Боевая техника. М., 1986, стр. 99.

<sup>129</sup> Կան ընդամենք մի քանի դեպքեր, երբ ամերիկյան կամ ռուսական ամենաարդիական համալիրները խոցել են նման հրթիռներ:

<sup>130</sup> <http://www.day.az/news/politics/166000.html>, <http://noravank.am/ru/?page=analitics&nid=510>

պատերազմներում և Աֆղանստանում ցույց է տվել, որ «Р-17»-ի խոցման ճշտությունը փոքր է<sup>131</sup>: Բացի դրանից, այս հրթիռները տարեցտարի հնամում են և չեն համապատասխանում նոր պահանջներին: Խնդիրն առանձնապես վերաբերում է շարժիչներին և հեղուկ վառելիքին: Իսկ եթե Աղրթեցանը գնի «С-300 ՊՄУ-2» ԶՀՀ-ները, ինչը, կարծես թե, արդեն անխուսափելի է, ապա այս հրթիռները նշանակետներին կարող են չհասնել: Ուստի, ժամանակն է մտածել այս հրթիռների փոխարինման մասին՝ հատկապես «քաղաքների պատերազմնում»<sup>132</sup> պարտություն չկրելու համար: Այս անգամ նրանք պետք է ստանան արժանի հակահարված, որպեսզի այլևս չհամարձակվեն ոմբակոծել խաղաղ բնակչությանը:

Իհարկե, ՀՀ-ն չի կարող մեծ քանակությամբ սպառագինություն գնել, և չկա նաև դրա անհրաժեշտությունը: Ինչպես մարտական գործողությունների ժամանակ, այնպես էլ հիմա, հայկական բանակը հիմնական շեշտը պետք է դնի որակի և ոչ անորակ քանակի վրա: Առաջնորդվելով նվազագույն քանակի, նպատակային ծախսերի և արդյունավետության հիմունքներով՝ մեզ հարկավոր է ձեռք բերել որոշակի հարձակողական միջոցներ: Միջոցներ, որոնք հիմնականում իրենց զարդարական դերը կվատարեն Աղրթեցանի ուազմավարական օրյեկտներին հասցվող վտանգի առումով: Արժեք-արդյունավետություն-բազմաֆունկցիոնալություն տեսանկյունից ելնելով՝ ներկայում հայկական բանակին անհրաժեշտ է օդային հարձակման այնպիսի միջոց, որն ունենա օպերատիվ մարտավարական հեռահարություն՝ հակառակորդի կարևորագույն նպատակակետներին հասնելու համար: Այն պետք է լինի հուսալի և սպասարկման համար քիչ ծախսեր պահանջի, իսկ հզորությունը պետք է լինի բավարար և վախեցնելու, և իրականում խոցելու համար:

Որպես այդպիսին հարմար է ձեռք բերել օպերատիվ մարտավարական հրթիռներ: Ամենաինեպահական տարրերակը, իհարկե, կլիներ խորհրդային «Օկա Ս (OTP-23Ս, 9K714Ս)» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրը, որն ուներ 400-450 կմ հեռահարություն և խոցման բարձր ճշտություն: Սակայն, ցավոր, այս համալիրը ոչնչացված է և ներկայում չի արտադրվում: Լավ տարրերակ է ոռուական արտադրության «Իսկանդեր-Է (9K723)» օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրը: Վերջինս արձակման մեքենայի վրա ունի երկու հրթիռ, ինչը շատ կարեոր հանգամանք է: Համալիրի հրթիռներն ինքնակառավարվող են, ունեն 280 կմ հեռահարություն և 480 կգ մարտական մաս<sup>133</sup>: Հրթիռներն օժտված են բարձր դիագունավորությամբ: Համալիրը սպասարկման մեծ ծախսեր չի պահանջում և շատ հուսալի է: Տարբերակներ շատ կան, սա եզակի հնարավորություն չէ:

Ավելի լավ տարբերակ է ամերիկյան 240 մմ-ոց «MLRS» բազմաֆունկցիոնալ ՀԿՌՀ-ն, որն ունի մի քանի տեսակի՝ մինչև 30-40 կմ հեռահարություն ապահովող, չղեկավարվող, մեծ մարտական մասերով մինչև 12 հրթիռների (M-26) արձակման հնարավորություն: Բացի դրանից, այս համալիրի արձակման կայանից կարելի է արձակել երկու «ATACMS» հրթիռներ (MGM-140 և MGM-164 իրենց մարտավարական և օպերատիվ մարտավարական տարրերակներով)<sup>134</sup>: (Տես նկար 28) Այս հրթիռների տարատեսակները հարմարեցված են ամենատարեր պայմաններում կիրառելու համար, ունեն նաև կասետային մասեր (Տես նկար 29): «MLRS»-ն ունի բրուրավոր արձակման շարժական կայան: Փաստորեն, «MLRS» բազմաֆունկցիոնալ ՀԿՌՀ-ն փոխարինում է ոռուական «Смерч (9К58)» ՀԿՌՀ-ներին, «Տոչկա-Ս (9К79-1)» մարտավարական և «Իսկանդեր-Է (9K723)» օպերատիվ-մարտավարական հրթիռներին միաժամանակ: Մեկ ԱԿ-ով երեք տեսակի ՕՀՄ ունենալը լավ հնարավորություն է, որն ավելի նպատակահարմար է նաև մեզ համար:

Չատ լավ հնարավորություն կա նաև արդին ձեռք բերված չինական 273 մմ-ոց «WM-80» ՀԿՌՀ-ն զարգացնել՝ ավելացնելով նաև քանակը: Վերջերս չինացի մասնագետները կատարել են այդ համալիրի հրթիռների կատարելագործում: Նույն տրամաչափի նոր հրթիռները կարող են արձակվել մինչև 120 կմ: Իսկ ավելի կատարելագործված «Guardian-2» հրթիռները, որոնք մեծացվել են մինչև 406 մմ-ի, կարող են նպատակակետեր խոցել մինչև 280 կմ հեռավորության վրա և դեկավարվում են

<sup>131</sup> А. Широкорад. Атомный таран XX века. М., 2005, стр. 240-241.

<sup>132</sup> Այս տերմինի տակ հասկացվում է տոտալ այն հարվածները, որոնք ուղղված են լինելու հիմնականում ոչ ուազմական նշանակետներին:

<sup>133</sup> <http://9k72.ru/user.php?id=191>, А.Широкорад. Указ. Соч, стр. 255.

<sup>134</sup> В. Пакков, "Работы по совершенствованию системы АТАCMS". Зарубежное Военное Обозрение 3/2000

արբանյակային նշանառությամբ<sup>135</sup>: Վերջին հրթիռներով, իհարկե, արձակման կայանի վրա արդեն տեղադրվում է ոչ թե ութ, այլ երեք հրթիռ, սակայն տվյալների փոփոխությունն ուղղակի զարմացնում է: Այն ևս «MLRS»-ի նման բազմանպատակ է: Մարտական տարրեր պայմաններում, որ տարրերակի հրթիռները հարկավոր են, կարող են տեղադրել և արձակել:

Ընդհանրապես մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեծ ՀԿՌՀ-ների նոր զարգացումները: Հայաստանի համար ևս անարդյունավետ և անիմաստ է ունենալ սովորական «Սմերֆ» կամ նրան համարժեք այլ համալիր: ԱՄՆ-ն անգամ չունի փոքր և միջին տրամաչափի ՀԿՌՀ-ներ<sup>136</sup>: Ամբողջ աշխարհում շատ քիչ պետություններ կան, որոնք բանակում կիրառում են միանգամից մի քանի տեսակի ՀԿՌՀ-ներ: Դրանք, որպես կանոն, բոլորն եւ կրում են ուսավան ռազմական դպրոցի հետքը: Այդ գեներերը չունեն մեծ ճշգրտություն, իսկ նրանց գինամբերքի ծախսն ահուելի է, որպեսզի լրացնի ճշտությունը<sup>137</sup>: Նման գեներերի կիրառությունը պահանջում է մեծ ծախսեր՝ ապահովելով շատ ցածր արդյունավետություն<sup>138</sup>: Ներկայում աշխարհում որոշ երկրներ առհասարակ հրաժարվում են միջին և փոքր տրամաչափի նման հրթիռային համակարգերից: Մեծ տրամաչափերի համակարգերում, բարձրացնելով հրթիռների խոցման ճշտությունը և հզորությունը, դրանք մոտեցնում են մարտավարական հրթիռային համալիրների տվյալներին՝ զգալիորեն նվազեցնելով զինամբերքի ծախսը (Ամերիկյան «MLRS» ՀԿՌՀ-ի հրթիռների ճշգրտությունն ապահովում է արբանյակային ուղղորդումը, իսկ նոր հրթիռների անկման անկյունը հասցվել է գրեթե 90°-ի, որպեսզի շառաջացնի ավելնորդ ավերածություններ): Այսինքն՝ նման գեներերը, հանդիսանալով քանակական գրեթության ներկայացուցիչ, տեղ չունեն ժամանակակից պատերազմներում: Ուստատանում արդեն մի քանի տասնամյակ է սպառազինության մեջ կա նման համակարգերի երեք տեսակ<sup>139</sup>: Երեք տեսակները հանդիսանում են փոքր, միջին և մեծ տրամաչափի ներկայացուցիչներ, և ցանկություն էլ չկա դրանցից որևէ մեկը հանել սպառազինությունից: Ոչ մի պետություն չի կարող իրեն քոյլ տալ այդքան մեծ, կասկածելի օգտակարությամբ հրթիռային հարվածներ: Չինաստանը, ժամանակին հետևելով խորհրդային ռազմական մոդելին, ևս ստեղծել էր նման գեներերի մի քանի օրինակ, սակայն այսօր դրանցից հիմնականում հրաժարվում է՝ մեծ տեղ տալով միայն մեծ համակարգերին: ԱՄՆ-ում միշտ եղել է ընդամենը մեկ տեսակ՝ մեծ տրամաչափի, որը մի քանի անգամ կատարելազործվում է՝ ամեն անգամ ավելի մեծացնելով հարվածների դիպուկությունը:

Վերջին ժամանակներու հրթիռային տեխնոլոգիաների և միկրոէլեկտրոնիկայի զարգացումը քոյլ տվեց մեծ համալիրները կատարելազործել այն աստիճան, որ մի փոքր մեծացվելով՝ դրանք վերածվում են գրեթե մարտավարական հրթիռների: Նշված «MLRS», «Սմերֆ», «WM-80», ինչպես նաև չինական «WS-1B», խրայելական «LAR-160», «MAR-290» և այլ համալիրները կատարելազործվելով վերածվել են «մինի» մարտավարական հրթիռային համալիրների և արձակում են ոչ թե մեկ, այլ երկուսից չորս նման հրթիռներ: Հրթիռների դիպուկությունը՝ հիմնականում արբանյակային նշանառմամբ, աճել է մի քանի տասնյակ անգամ: Իհարկե, հրթիռների մեծացմամբ արձակման կայանների վրա նախկին 8-12-ի փոխարեն այսօր տեղադրվում են 2-4 հրթիռ, սակայն դա դառնում է անգամ առավելություն: Նմանատիպ հրթիռների կիրառության գործում մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես ԱԹՍ-ները, որոնք, բազում մարտավարական խնդիրներից զատ, կարող են նաև հանդիսանալ մարտավարական հրթիռային համալիրների նշանառման համակարգեր: ԱԹՍ-ների ճիշտ կիրառությամբ կարելի է հասնել զգալի տեղեկատվական առավելության, որն էլ ներկայում որոշիչ է համագորային մարտում<sup>140</sup>: ՀԿՌՀ-ները, սովորական մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռներին զիշելով իրենց մարտական մասի հզորությամբ, ունեն նաև որոշակի առավելություն: Հակահրթիռային ԶՀՀ-ները, սովորական մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռներին, իրենց շափերից ելնելով,

<sup>135</sup> С.В. Гуров. Реактивные системы залпового огня. Тула. 2006, стр. 432; <http://www.sinodefence.com/army/artillery/mlrs/273.asp>

<sup>136</sup> ЗВО 10.2000, стр. 26.

<sup>137</sup> Նման համակարգերով կրակելու դեպքում սեփական գորքերի անվտանգ հեռավորությունը կազմում է մոտ մեկ կմ այն դեպքում, երբ հրանորդային հրետանու համար այդ հեռավորությունը կազմում է մինչև 250-300 մետր:

<sup>138</sup> А.Н. Латвухин. Современная артиллериya. М., 1970, стр. 212.

<sup>139</sup> Խորը գնում է դեռ խորհրդային ժամանակներից սպառազինության մեջ գտնվող 122 մմ-ոց 40 փողանի «9К51 Գրադ», 220 մմ-ոց 16 փողանի «9К57 Որագ» և 300մմ-ոց 12 փողանի «9К58 Սմերֆ» համակարգերի մասին:

<sup>140</sup> Այս մասին տես՝ ԱՀովհաննիսյան: Սի քանի հարցեր.. էջ 3-74:

ավելի շուտ են հայտնաբերում և, որպես արդյունք, հեշտությամբ կարող են խոցել: ՀԿՈՀ-ների հրթիռները նախ չափերով փոքր են, և համազարկով արձակումները լրջորեն փորբացնում են դրանց հայտնաբերումը, ուղեկցումը և խոցումը: Մեզ համար սա շատ կարևոր է, քանի որ Աղբբեջանը ցանկանում է ձեռք բերել «С-300 ПМУ-2» ԶՀՀ-ներ: Լեռնային տեղանքում նման համալիրների համար դժվար է հայտնաբերել իր չափերով փոքր, սակայն օպերատիվ-մարտավարական հրթիռների հեռահարություն ունեցող ՀԿՈՀ-ի հրթիռին, որը հագեցած է նաև կասետային գերճշգրիտ մարտական մասով: Օրինակ՝ «WM-80»-ի վերջին հրթիռը կարող է ունենալ նման հեռահարություն և մարտական մաս, որը դուրս գտնվելով ԶՀՀ-ի խոցման դաշտից՝ կարող է ոչնչացնել կամ լուրջ վնաս պատճառել վերջինիս:

Նման մոտ երկու տասնյակ համալիրներ կարող են տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը փոխել՝ ապահովելով երկարաժամկետ անվտանգություն: Եթե անգամ հայկական ուժերը նույնանման համալիրների քանակով զիջեն հակառակորդին, ապա դրանց առկայությունը բավականին կզարտացնի վերջինիս: Ռազմավարական օբյեկտների նկատմամբ հարվածի մտավախությունը<sup>141</sup> ինքնաբերաբար այս գենքերը կվերածի զավողական միջոցների:

Կիրառության դեպքում քանակի սակավությունը որոշիչ դեր չի խաղա: Կարենը խելամիտ խուսափարելով կիրառելի է և հրթիռների պահեստային քանակը: Վաղուց ժամանակն է ձեռնարկել հիմնավոր քայլեր նման համալիրների հրթիռների արտադրության հարցում: Ինչպես ցույց է տալիս հրթիռների զարգացման պատմությունը, դժվար չէ ստեղծել փոքր հեռահարության չղեկավարվող հրթիռներ: Նման հրթիռների ստեղծման տեխնոլոգիաներին տիրապեսող որոշ երկրների համար դժվար չի լինում անցում կատարել միանգամից մարտավարական և անգամ օպերատիվ-մարտավարական հրթիռների ստեղծմանը: Ներկայումս հենց այդ ճանապարհով շատ երկրների կողքին բավականին առաջ են գնացել նաև լիտվացի մասնագետները<sup>142</sup>: Շատ հետաքրքիր տարբերակներ կան տարբեր երկրների հետ համատեղ նախագծերի իրականացման համար: Հրթիռաշինություն այն ոլորտն է, որը գիտատեխնիկական առաջընթացի և անվտանգության ապահովման տեսանկյուններից չափազանց մեծ կարևորություն է ներկայացնում մեզ համար: Այս ոլորտում, ստեղծելով թեկուզ փոքր կազմակերպություն, կարելի է լայնորեն հանագործակցել ոռուսական, ամերիկյան, չինական, հնդկական և այլ ընկերությունների հետ: Մեզ համար հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում ֆրանսիական հրթիռաշինությունը, որի հետ անհրաժեշտ է համագործակցել՝ ենթելով հայ-ֆրանսիական լավ կապերից: Ընդհանրապես ուսումնական ուսուցման և արտադրության ոլորտում ֆրանսիական կողմի հետ համագործակցությունը շատ հեռանկարային է: Հարկավոր է լավ կապեր զարգացնել հատկապես օրեցօր զարգացող հնդկական ուսումնարդյունաբերության հետ:

Հրետանու հրանորդային (փողային հրետանի) սպառազինության տեսակների մեջ ևս անհրաժեշտ է ստեղծել հակալշիո: Ներկայումս աղբբեջանական քանակի սպառազինության մեջ գտնվող 203,2նմ «2С7 Պիօն» հրետանային համալիրը բավականին հզոր հարձակման միջոց է: Համալիրի «2А44» հրանորդ սպառական արկերով կարող է խոցել թիրախներ 37,5 կմ հեռավորության վրա, ակտիվ ռեակտիվ արկերով՝ մինչև 55 կմ հեռավորության վրա, իսկ արկերը մոտ երկու անգամ ծանր են 152նմ արկերից<sup>143</sup>: Նման համալիրները պատերազմի ժամանակ կիրառվում են սահմանափակ դեպքերում և հատուկ թիրախների նկատմամբ: Դրանք, իրենց հեռահարության հաշվին, հականարտկոցային մենամարտերից դուրս են:

Նշված առավելություններով հանդերձ՝ նման մեծ հզորության հրանորդա-հրետանային համալիրներն ունեն լուրջ թերություններ: Դրանք ծանր են, կրակի արագաձգությունը մեծ չէ, իսկ տվյալ համալիրի հրանորդի բարձրացման անկյունը չի անցնում  $60^{\circ}$ -ից<sup>144</sup>: Փաստորեն, համալիրի ծանրությունը և հրանորդի բարձրացման փոքր անկյունն այն մեր տարածաշրջանի համար դարձնում է անարդյունավետ:

Դրա փոխարեն կարող է կիրառվել նույնական խորհրդային արտադրության 240 մմ «2С4 Տիոլյան» ինքնազմաց ականանետը: Վերջինս նախորդին զիջում է միայն կրակի հեռահարությամբ, սակայն դա

<sup>141</sup> Նավահանման և մշակման ոլորտի ներակառուցվածքներ, մեծ քաղաքներ և այլն:

<sup>142</sup> Независимое военное обозрение. 2009. № 30(581), стр. 2.

<sup>143</sup> С.В. Ломаченко, О.Г. Булатов, С.В. Гаврилович. Артиллерия большой мощности: история и перспективы развития. Военная мысль. Март-апрель. 2001, стр. 4.

<sup>144</sup> <http://worldweapon.ru/tank/pion.php>, <http://rkkawic.bestclan.ru/text/pion.html>

բնական է, քանի որ ականանետը երբեք հրանորին հեռահարությամբ մրցակից չի եղել: Ընդհանուր համալիրը «2C7 Պիօն»-ից թերև է մոտ երկու անգամ, արկերը ծանր են, հետևաբար հզոր է 1.1-2.2 անգամ, իսկ կրակի դիպուկությունը բարձր է 10-30%-ով<sup>145</sup>: «2C4 Տիոլպան» ականանետը հաջողությամբ պայքարում է երկարքետոնե ամրաշինական կառույցների դեմ, կարող է կրակ բացել մինչև 80° բարձրացված հրանորով: Ականանետու ունի հատուկ, ուղղորդվող արկեր՝ «Смельчак», որոնց կիրառությունն Աֆղանստանում և Չեչնիայում ապացուցեց դրանց արդյունավետությունը: Թիրախները ընդամենը 2-4 արկերով ոչնչացվում էին 80% արդյունավետությամբ, իսկ սովորական արկերով խնդիրը կատարվում էր 4-6 արկերով<sup>146</sup>: Այս ամենը լեռնային տեղանքում «2C4 Տիոլպան» ականանետը դարձնում է հզոր միջոց: Նման ականանետերը կարող են լուրջ հնարավորություն տալ համազրային մարտում, դրանք արդյունավետ են նաև առանձին խնդիրների լուծման ժամանակ:

Աղբեջանական ԶՈՒ-երը մինչև հրադադարը ոմբակոծությունների համար լայնորեն կիրառում էին ինքնարիոններ, սակայն դրանք հիմնականում կիրառում էին սովորական ուսումնական չուկավարվող հրիոններ: Ներկայումս նրանք փորձում են գնել ինքնարիոններից կիրառվող ճշգրիտ, հեռահար սպառագինություն, ԱԹ-Ս-ների կիրառման փորձ են ձեռք բերում, որոնց հետ պայքարը պահանջում է ՀՕՊ-ի բոլորովին այլ ճարտարապետություն<sup>147</sup>: Այսօր դեռ ոչինչ, մի քանի հետախուզական ԱԹ-Ս-ները մեծ դեր չեն խաղում, սակայն մի քանի տարի անց նրանք կարող են սովորական և մարտական ԱԹ-Ս-ներով մեծ վճառ հասցնել հայկական ՀՕՊ-ին և ուսումնական օրյեկտներին: Աղբեջանական միջոցները կարող են ճշգրիտ հարվածներ հասցնել հայկական հանգուցային կենտրոններին: Նախկինում հայկական կողմը չուներ մարտական ինքնարիոններ, իսկ մարտական ուղղարիոնների կիրառությունը կրել է խորհրդանշական բնույթ<sup>148</sup>:

Հետևելով աղբեջանական բանակի զինման ներկայիս տեմպերին, ձեռք բերվող զենքերի տեսակներին, նրանց դեկավարության մշտական ուսումնական հայտարարություններին՝ տեղին ենք համարում համեմատականներ անցկացնել 1967-1970թթ. արարա-իսրայելական հակամարտությունից:

1967թ. «վեցօրյա պատերազմում» Իսրայելի տարած հաղթանակից մեկ ամիս անց Գ.Ա. Նասսերը, հիմնվելով Եզիպտոսի նավթագազային եկամուտների և Իսրայելի հետ համեմատած մեծ մարդկային քանակի, հրետանային և այլ միջոցների գերակայության վրա, նախաձեռնեց «հյուծման պատերազմ» Իսրայելի նկատմամբ<sup>149</sup>: Ֆիշտ Է՛ բացահայտ այդ մասին հայտարարվեց միայն 1969թ. մարտի 8-ին<sup>150</sup> (այլ տվյալներով՝ հունիսի 23-ին), սակայն երկու տարի անընդեզ Սուեզի ջրանցքի երկու կողմերից շարունակվում էին հրետանային մենամարտերը, ավիացիոն հարվածները և հետախուզադիվերսիոն գործողությունները: Հյուծման պատերազմը ընթանում էր հենց «նասերական» սցենարով: Իսրայելը ստիպված էր մնալ միշտ լարված վիճակում, զորահավաքի տակ պահել մեծ ուժեր, ծախսել զգալի քանակությամբ զինամքերք և այլն, ինչը հսկայական ծախսերի հետ էր կապված: Բացի դրանց իսրայելական հասարակությունն ավելի զգայուն էր զրիերի նկատմամբ: Նասերի հաշվարկով այս ամենը կատարվեր Իսրայելին բանակցությունների ժամանակ ավելի զիջող լինել: Կարծում ենք այս ամենը շատ նման է աղբեջանական հաշվարկներին:

1968թ. սեպտեմբերի 8-ին եզիպտական հրետանին ամրող ջրանցքի երկայնքով համազարկային կրակ բացեց, որը տևեց 6 ժամ: Արձակվեց 10 000 հրետանային տարատեսակ արկ<sup>151</sup>: Սակայն հրետանային կրակից իսրայելական կորուստները շատ մեծ չեղան՝ զոհվեց 10 և վիրավորվեց 18 զինծառայող<sup>152</sup>: Հաջորդ հզոր հրետանային կրակը տեղի ունեցավ հոկտեմբերի 26-ին, որը նույնպես տևեց մի քանի ժամ, զոհվեց իսրայելցի 13 զինծառայող, 34-ը՝ վիրավորվեց: Այս իրադարձությունները

<sup>145</sup> С.В. Ломаченко, О.Г. Булатов, С.В. Гаврилович. Артиллерия большой мощности: история и перспективы развития. Военная мысль. Март-апрель. 2001, стр. 4-6.

<sup>146</sup> Г. Н. Трошев. Чеченский излом: Дневники и воспоминания. 2-е изд. М., 2009, стр. 325; С.В.Ломаченко, О.Г.Булатов, С.В. Гаврилович. Артиллерия большой мощности: история и перспективы развития. Военная мысль. Март-апрель. 2001, стр. 5.

<sup>147</sup> Ա.Հովհաննիսյան: Մի քանի հարցեր... էջ 7-74:

<sup>148</sup> Ա.Հովհաննիսյան: Ավիացիան՝ Արցախյան գոյամարտում: Եր., 2006, էջ 40:

<sup>149</sup> М.А. Жирохов. История BBC..., стр. 180. <http://lifeinsilico.wordpress.com/category/general/page/2/>

<sup>150</sup> М.А. Жирохов. История BBC..., стр. 180.

<sup>151</sup> [http://www.waronline.org/IDF/Articles/attrition\\_war.htm](http://www.waronline.org/IDF/Articles/attrition_war.htm).

<sup>152</sup> М.А. Жирохов. История BBC..., стр. 179. [http://www.waronline.org/IDF/Articles/attrition\\_war.htm](http://www.waronline.org/IDF/Articles/attrition_war.htm), <http://militera.lib.ru/h/20c2/17.html>

ստացան «սև շաբաթ» անունը<sup>153</sup>: Հաշվի առնելով Եգիպտական հրետանու ծախսերը՝ արդյունքները մեծ չեն, սակայն Խրայելում դրանց դեմ հակաքայլեր ձեռնարկելու ուղղությամբ լրջորեն նտածում էին: Չորս ամիսների ընթացքում պաշտպանական ամրաշինական կառույցներն ամրացվեցին, բարձրացվեցին մինչև 25 մետր, և լայնքը հասցեց 200 մետրի: 160 կմ երկարությամբ պաշտպանական «Բար լեվի» բնագիծն անառիկ էր թվում: Արդյունքներն երկար սպասել չուվեցին: 1969թ. մարտի 8-ին տեղի ունեցած հրետանային կրակի ժամանակ ոչ մի մարդ չմահացավ, իսկ հարձակող Եգիպտական ինքնարքուներին օդում խոցեցին խրայելական կործանիչները<sup>154</sup>: Եգիպտոսը շարունակում էր իր ընտրած մարտավարության իրականացումը: Մարտ և ապրիլ ամիսներին տեղի ունեցած նի քանի հրետանային մենամարտեր, որոնց ընթացքում երկու կողմից էլ լինում էին կորուստներ: Եգիպտոսն անտեսում էր դրանք, իսկ Խրայելը չէր կարող:

Այս առումով առկա են ընդհանուր համեմատականներ Ազրբեջանի տոտալ պատերազմի ռազմավարության վրա հիմնված մոտեցումների ու արարա-խրայելական վերոնշյալ ռազմական բախումներ:

Խրայելը շուտով հասկանալով այս ամենի կործանարար արդյունքները՝ հրաժարվեց Եգիպտական կանոններով խաղաղ և մշակեց սեփական գործողությունների մարտավարություն: Որպես կրակային հզորություն՝ Խրայելը կիրառեց իր ավիացիան, որով մեծ հաջողությամբ նախ ոչնչացրեց մեկ նավթամշակման գործարան, հետո՝ վնասազերծեց Եգիպտական հրետանին<sup>155</sup>: 1969թ. մայիսից մինչև նոյեմբեր Եգիպտական ավիացիան կորցրեց մոտ 50 ինքնարքու, իսկ խրայելական ավիացիան՝ մոտավորապես 10-ը<sup>156</sup>: Եգիպտական ամրող ՀՕՊ-ը շարքից հանված էր: Մինչև դեկտեմբեր Եգիպտական քանակի իրական և բարոյական կորուստներն ահուելի չափերի հասան: Տարբեր տվյալներով՝ Եգիպտական մարդկային կորուստները «Հյուծման պատերազմում» 3-5 անգամ ավելի մեծ էին խրայելականից<sup>157</sup>: Եթե չինեին խորհրդային անվերջանալի օգնությունները, Եգիպտական քանակը վաղուց կմնար առանց գենքի, սակայն Նասսերն իր մտադրություններից չէր հրաժարվում: Այստեղ Եգիպտական և ազրբեջանական մոտեցումների առկա նմանությունները հստակորեն բացատրվում են ռազմական տեսարան Կ. ֆոն Կլաուզեվիցի խոսքերով՝ «սովորաբար պարտություն կրած կողմը հեշտ չի հաշտվում այդ մտքի հետ և միշտ հարմար առիթ է որոնում սկսելու ռևանշային իր պատերազմը»<sup>158</sup>: Այսօր դժվար է գտնել մի ազրբեջանական զինվորականի կամ քաղաքական գործչի, որը չեղտադրի նավթաղոլարների հաշվին մոտ ապագայում հաղբանակ տանելու հեռանկարի մասին: ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախազահ, ոռոսաստանյան դիվանագետների ասոցիացիայի փոխնախազահ Վաղիմիր Կազիմիրովի խոսքերով՝ «ներկայումս գոյություն ունեցող որևէ այլ հակամարտության մեջ չկա նման ուժային ռևանշի տրամադրվածություն»: Շիման գծում չկան այսքան միջադեպեր, սարքանքներ, չկա ռազմական բյուջեների նման անհամատելիություն<sup>159</sup>:

Եգիպտոսին իր մտադրություններից հրաժարվել ստիպեց միայն հերթական՝ 1973թ. «Դատաստանի օր» պատերազմում կրած բացահայտ պարտությունը:

Ակնհայտորեն տեսնելով նմանություններ Ազրբեջանի որդեգրած ռազմավարության և արարա-խրայելական պատերազմների ժամանակ Եգիպտոսի ընտրած պետական ռազմական ուղեգծի միջև՝ կարող ենք եզրակացնել, որ հատկապես 21-րդ դարի տեխնոլոգիաների վրա հիմնված պատերազմների դարաշրջանում ապառազինության քանակի ու ֆինանսական միջոցների վրա հույս դնելն ուղղակի նման է ինքնախարկանքի:

Վաղուց ժամանակն է, որ մենք մեր միայն պաշտպանվողի դերից դուրս գանք. մենք կամավոր պաշտպանվող ենք դարձել, իսկ հակառակորդը չի թարցնում, որ պատրաստվում է հարձակման:

<sup>153</sup> М.А. Жирохов. История BBC..., стр. 179.

<sup>154</sup> <http://jewish.in.ua/index.php?newsid=977>, <http://anubis.ucoz.ua/>

<sup>155</sup> Shlomo Aloni. Arab-Israeli Air Wars 1947-82. Osprey Publishing/Combat Aircraft, выпуск № 23, 2001. С. 69.

<sup>156</sup> М.А. Жирохов. История BBC..., стр. 189-190.

<sup>157</sup> Cohen, Eliezer. “Israel's Best Defense”. New York: Orion Books, 1993. [http://www.waronline.org/IDF/Articles/attrition\\_war3.htm](http://www.waronline.org/IDF/Articles/attrition_war3.htm), <http://www.jewishvirtuallibrary.org/jsource/myths/mf8.html>, <http://users.erols.com/mwhite28/warstat4.htm>.

<sup>158</sup> К. Клаузևиц. О войне. М.-СПб, 2007. стр. 27.

<sup>159</sup> «Նովոստի-Առմենիա» միջազգային տեղեկատվական գործակալությանը 25.03.2008. տված բացառիկ հարցազրույց:

Միայն պաշտպանվելով ոչ մեկը դեռ հաղթանակ չի տարել: Մեզանում կա ուժերի հարաբերակցության պահպանման խորհրդային վատ սովորութիւն շարունակություն: Մենք միշտ փորձում ենք միայն պատասխանել նրանց նախաձեռնությանը, ինչը վտանգավոր է: Ժամանակակից ՕՀՍ-ների մասսայական կիրառմամբ հենց մարտական գործողությունների սկզբից հնարավոր է հաղթանակ տանել: Կիրառության մասսայականությունն անախաղեավ է<sup>160</sup>:

## 6.7. ԱԹՍ-ները մեզանում

ԱԹՍ-ների՝ որպես ապագա պատերազմների լավագույն մեքենաներից մեկի մասին մենք բավականին մանրամասն նշեցինք՝ ԱՍՆ-ում նրանց դերը քննարկելիս: Այժմ նշենք, թե այս հետաքրքիր ԹՍ-ներն ինչ հեռանկար ունեն մեզանում:

Հարկավոր է նախ հասկանալ նրանց կիրառման մարտավարական սահմանները և ֆորմատները, կիրառության առանձնահատկությունները մեր տեղանքում:

Խնդիրը հատկապես կարևոր է այլ գորատեսակների՝ լեռներում վարած մարտական գործողությունների առանձնահատկությունների հետ կապված (վերջին հանգամանքն ավելի մեծ նշանակություն ունի ավիացիայի համար, քանզի ավիացիոն ստորաբաժանումները հիմնականում գործում են համազորային ստորաբաժանումների հետ համատեղ, նպաստում են նրանց խնդիրների բարեհաջող կատարմանը, և իմշրան էլ որ հզոր են, հակառակորդին հաղթելու վերջնական խնդիրն ինքնուրույն չեն կարող լուծել):

Սկզբի համար նշենք ԱԹՍ-ների դասակարգման մասին:

Սին օրս մասնագետների կողմից դեռ հստակ հաստատված չեն ԱԹՍ-ների դասակարգումը և նրանց ներկայացվող պահանջները: Ընդհանուր առմամբ, դրանք բաժանվում են երեք խմբի՝ ուղղմավարական, մարտավարական և հատուկ նշանակության: Յուրաքանչյուր խումբն իր հերթին բաժանվում է ենթախմբերի՝ ըստ քաշի, բորբոքման հետապնդության, հեռավորության և ժամանակի:

Մարտավարական նշանակության ԱԹՍ-ներն են՝

- ✓ «Սիկրո» (մինչև 10 կգ ընդհանուր քաշ, 1 կմ թռիչքի բարձրություն, 1-ժամյա թռիչք)
- ✓ «Սինի» (մինչև 50 կգ ընդհանուր քաշ, 3-5 կմ թռիչքի բարձրություն, մի քանի ժամյա թռիչք)
- ✓ «Սիդի» (մինչև 1000 կգ ընդհանուր քաշ, 9-10 կմ թռիչքի բարձրություն, 10-12-ժամյա թռիչք)
- ✓ «Ծանր» (մինչև 20կմ թռիչքի բարձրություն, մինչև 24-ժամյա թռիչք)

Սակայն տրված դասակարգումը լիարժեք չի արտահայտում ներկայումս գոյություն ունեցող բոլոր տեսակները: Գոյություն ունեցող ԱԹՍ-ներն այնքան բազմազան են, որ որոշների այս կամ հատկանիշը գերզարգացած է և դուրս ամեն տեսակի դասակարգումից: Ընդհանուր առմամբ, ԱԹՍ-ները կարելի է մոտավորապես դասակարգել հետևյալ կերպ:

1. Ըստ նախատեսվածության՝

- Հետախուզական
- Մարտական
- Ապահովման

2. Ըստ կիրառության մասշտաբների և տեխնիկական չափանիշների՝

- Ուղղմավարական
- Օպերատիվ-մարտավարական
- Մարտավարական
- Տեղայնական
- Սեծ
- Սիջին
- Փորք
- Գերփորք
- Փորրագույն

<sup>160</sup> А.Н. Захаров. Операция «Лис пустыни»..., стр. 70.

- Բազմակի կիրառման  
➤ Սիանգամյա օգտագործման

3. Ըստ աէրողինամիկ սխեմայի՝

- Ինքնաթիռային տիպի
- Ուղղաթիռային տիպի
- Այլ թռչող սարքերի հիման վրա

4. Ըստ արձակման և վայրէջքի տեսակի՝

- Կատապուլտային
- Ձեռքից արձակվող
- Թոփքուղուց կամ հարթակից թռչող
- Թոփքուղու, հարթակի վրա վայրէջք կատարողներ
- Անկարգելով վայրէջք կատարողներ
- Հատուկ հարմարանքներով իշնողներ

5. Ըստ դեկավարման սկզբունքի՝

- Ինքնուրույն ծրագրով դեկավարվողներ՝ մասնակի միջամտությամբ
- Ինքնուրույն ծրագրով դեկավարվողներ՝ առանց միջամտության
- Օպերատորի կողմից դեկավարվողներ

6. Ըստ տեղակայման վայրի՝

- Վերգետնյա
- Օդային
- Ծովային

7. Ըստ կիրառման բարձրությունների, հեռավորությունների և ժամանակի՝

- Գերցածք բարձրություններում թռչողներ
- Ցածր թռչողներ
- Սիջին բարձրության վրա թռչողներ
- Մեծ բարձրության վրա թռչողներ
- Թոփքի գերփոքը հեռավորությունների
- Թոփքի փոքր հեռավորությունների
- Սիջին հեռավորությունների
- Մեծ հեռավորությունների
- Թոփքի գերփոքը ժամանակ ունեցողներ
- Թոփքի փոքր ժամանակ ունեցողներ
- Թոփքի միջին ժամանակ ունեցողներ
- Թոփքի մեծ ժամանակ ունեցողներ

8. Ըստ հետախուզական սարքավորումների և տվյալների հաղորդման ժամանակի՝

- Լուսանկարչական հետախուզության
- Տեսահետախուզության
- Ուղիղիկանական հետախուզության
- Զերմահետախուզության
- Եղանակային հետախուզության
- Քիմիական, մանրէաբանական հետախուզության և այլն
- Ժամանակի իրական ընթացքում
- Որոշակի ֆիքսված ժամանակաբնագրում
- Վայրէջքից հետո

Դասակարգումը պայմանական է. այն հեղինակի տեսակետն է և արտահայտում է աշխարհում գոյություն ունեցող հիմնական ԱԹ-Ս-ների ընդհանուր պատկերը:

Մինչ օրս ԱԹ-Ս-ների բավականին լայն կիրառությունը հիմնականում հարուստ է հետախուզական կենսագրությամբ: Ի դեպ, սովորական Թ-Ս-ները ևս առաջին անգամ կիրառվել են որպես հետախուզական կենսագրությամբ<sup>161</sup>: Որոշ մարտական գործողությունների ժամանակ ԱԹ-Ս-ների կատարած հետախուզության մասշտաբները նույնիսկ գերազանցում են սովորական ինքնարդիոնների և անգամ արբանյակների կատարած հետախուզության մասշտաբներին: Ինչպես վերը նշեցինք, հետախուզական տեղեկատվության մասշտաբները ներկայում այնքան մեծ են, որ խնդիրներ են ի հայտ գալիս նոյնիսկ դրանք մշակելու հետ: Որպեսզի պատկերացնենք, թե ինչ տարրերություն կա ԱԹ-Ս-ների և այլ միջոցներով կատարվող հետախուզության մեջ, պետք է նախ հասկանանք, թե առհասարակ հ՞նչ է ավիացիոն հետախուզությունը, ինչպես է այն վարդում, ինչպես կարելի է ավելի լավ վարել, հ՞նչ է տալիս հետախուզությունը և այլն:

Օդային հետախուզությունը սովորական հետախուզությունից տարբերվում է նախ նրանով, որ այն ընդգրկում է ավելի մեծ տարածություններ: Հետախուզման խորությունը և լայնությունը պետք է ապահովեն իրադրության պատկերը մարտական գործողությունների ամբողջ դաշտի վրա և հնարավորություն ստեղծեն այդ տարածքների վրա գտնվող առավել կարևոր նպատակակետերի հուսալի խոցման համար:

Հետախուզվող տարածքներում ավելի մեծ է հակառակորդի կարևորագույն գենքերի ու դիրքերի, թիկունքային կարևորագույն միջոցների հայտնարերման հնարավորությունը: Ստացված տեղեկատվության ճիշտ մշակման և արագ փոխանցման արդյունքում հայտնարերման նշանականությունը հնարավոր է բաշխել համապատասխան խոցման միջոցների մեջ՝ խուսափելով սխալներից, ավելորդ ծախսերից, կորուստներից և այլն:

Հետևաբար, ավելի մեծ է անգամ մարտավարական հետախուզությամբ հակառակորդի ուազմավարական նպատակների հայտնարերման հավանականությունը: Սակայն լեռնային տեղանքում օդային հետախուզությունը ևս ունի իր բարդությունները: Լեռնային խիստ կտրտված տեղանքում հակառակորդը, իր մտադրությունները բարցնելու համար, ավելի շատ բնական օգնականներ ունի: Իր բոլոր գործողությունները և տեղաշարժերը քողարկելու համար կարող է օգտվել տեղանքի ընձեռած բավականին մեծ հնարավորությունից:

Օդային հետախուզությունն առհասարակ ամենաբարդ մարտական խնդիրներից է՝ նախ նրանով, որ օդային հետախուզության միջոցները, ի տարբերություն հետախուզության այլ տեսակների, չեն բարնվում՝ ավելի վտանգելով իրենց: Սակայն հակառակն է անում՝ ձեռք առնելով բազում կազմակերպչական և տեխնիկական միջոցներ՝ ներառյալ նաև կրակային հակագեցությունը՝ իր դիրքերը, նպատակները և միջոցները բարցնելու համար: Այսպիսի հետախուզության վարումը հատկապես վտանգավոր է մարտական գործողությունների նախնական փուլում, եթե դեռ հայտնարերման չեն հակառակորդի բոլոր կրակային միջոցները, իսկ հայտնարերման համար ուղարկվում է օդաչուն, և լրջորեն վտանգվում է նրա կյանքը (նշենք, որ աշխարհի գրեթե բոլոր բանակներում ամենաբարձր ռազմական մասնագետն օդաչուն է): ԱԹ-Ս-ների ավանդական առավելություններն այստեղ ակնհայտ տալիս են որոշակի շոշափելի արդյունքներ: Մի քանի տասնամյակ առաջ, երբ օդային հետախուզություն էին կատարում բոլոր տեսակի Թ-Ս-ները, լրտանկարչական սարքավորումները, որոնք կատարում էին այդ հետախուզությունը, զինված էին ժապավենների ծանր բեռով, իսկ նկարահանված տեղեկությունը պահանջվում էր հասցնել հասցեատիրոջը: Այդ պատճառով անգամ հետախուզական արբանյակներն անհրաժեշտ էր տիեզերքից վայր բերել, և ժապավենները վերծանել: Նման սարքերը կշռում էին մի քանի հարյուր կիլոգրամ: Սակայն միկրոէլեկտրոնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության գիտատեխնիկական զարգացումը ներկայում բույլ է տալիս նկարահանված տվյալները թվային ձևաչափով անմիջապես ուղարկել հազարավոր կիլոմետր հեռավորության վրա, և ստացողն այն միանգամից տեսնում է իրական ժամանակում: Լուսանկարչական հետախուզության արդիական սարքերը կշռում են մի քանի կիլոգրամ, և արդեմ հնարավոր է նրանց տեղադրումը փոքր Թ-Ս-ների վրա:

<sup>161</sup> И.А. Андреев. Боеевые Самолеты. М., 1992, стр. 19-20.

Ժամանակակից պայմաններում ԱԹՍ-ների կիրառությունը հետախուզական նպատակներով ավելի ու ավելի պահանջված է դառնում: Մի քանի տասնամյակների ընթացքում այդ նպատակի համար ԱԹՍ-ների լայնածավալ կիրառման արդյունքում արդեն հստակ ձևավորվել է ԱԹՍ-ների հետախուզության տեսությունը, որը նոտավորապես կարելի է արտահայտել հետևյալ կերպ:

ԱԹՍ-ները կարող են կատարել հետախուզության տարատեսակները՝ հակառակորդի մասին օպտիկական, տեսածայնային և այլ տեղեկությունների հավաքում ժամանակի իրական ընթացքում, փոխանցում համապատասխան մարմիններին, հակառակորդի հայտնաբերած նշանակետերի վրա սեփական հրետանու, ավիացիայի և խոցման այլ միջոցների կրակի ուղղորդում, նշանառում<sup>162</sup>: Ընդունեք, որ միայն այս խնդիրների հստակ իրականացումը հսկայական նշանակություն կարող է ունենալ մարտական գործողությունների ելքի վրա:

Օդյային հետախուզությունը պետք է կատարվի ցանկացած կլիմայական պայմաններում, պետք է լինի անընդհատ, բազմատեսակ և ընդգրկի հնարավորինս ավելի մեծ տարածություն ու ժամանակ: Հետախուզությունը պետք է ստացվի իրարից նույնիսկ շատ տարբերվող, փոքր ու մեծ ստորաբաժանումների (սարքերի) կողմից, տեղեկությունը մշակվի շատ արագ, ճշգրիտ, կենտրոնացված և օպերատիվ: ԱԹՍ-ների կողմից տրամադրված հետախուզական տվյալների ստացումը և մշակումը դեռ խնդրի մի մասն է: Համազորային մարտի ժամանակ այդ տեղեկատվությունն ունի հսկայական նշանակություն, բայց դա միայն ժամանակին, նպատակային և ճիշտ կիրառման դեպքում: ԵՀՊ-ի ժամանակ համազորային մարտի կազմակերպման համար եթե իրամանատարներն ունեն մոտ կես ամիս, ապա այսօր չնայած նրան, որ մարտի բազմակողմանի ապահովման միջոցառումները զգալիորեն ավելացել են, պատերազմը պահանջում է այդ բարդ ու մանրակրկիտ պլանավորումն ավարտել մի քանի ժամերի ընթացքում: Սահա թե որտեղ են անհրաժեշտ այդ օպերատիվ և ստույգ տվյալները:

Թվարկված պահանջները լինվին իրագործելու համար ԱԹՍ-ների կիրառությունը ժամանակի ընթացքում ստացել է բազմակի ձևեր ու երանգներ: Հատկապես ի հայտ է զայս ԱԹՍ-ների մասնակի և համակարգային կիրառության գաղափարը: Օրինակ՝ ԱԹՍ-ների՝ որպես հետախուզների, առաջին լայնածավալ կիրառությունը Վիետնամում մասնակի կիրառության օրինակ էր, քանի որ միաժամանակ կիրառվում էր սահմանափակ քանակությամբ ԱԹՍ-ներ՝ սահմանափակ զորատեսակների համար: Սակայն ԱԹՍ-ների կողմից ստացված տեղեկությունն օգտագործվում էր բոլոր իրամանատարությունների կողմից, քանի որ այն մեծ ծավալներ էր ընդգրկում, հետևաբար կրում էր համակարգային տարրեր: Խարայելա-արարական պատերազմների ժամանակ լայն կիրառում գտան և զարգացան ԱԹՍ-ների մասնակի կիրառությունները: ԱԹՍ-ները կիրառվում էին մեկ զորատեսակի և անգամ կոնկրետ ստորաբաժանումների համար: Այսպես օրինակ՝ 1973թ. պատերազմի ժամանակ առաջին անգամ ԱԹՍ-ները կիրառվեցին հատուկ ՑԶ-ի շահերի համար, իսկ հետագայում անգամ մեկ սարքն ապահովում էր հենց այս կամ այն գնդի հետախուզական տեղեկությունը: Մասնակի կիրառության օրինակներ եղան նաև իրաքյան առաջին պատերազմի ժամանակ: Դաշնակից պետությունների շատ հրետանային գնդեր ունեին իրենց առանձին ԱԹՍ-ները, որոնք մեծ ճշտուրյամբ ուղղորդում էին իրետանային կրակը: Նման խնդիր էր լուծում մասնավորապես ֆրանսիական «MART» ԱԹՍ-ը<sup>163</sup>: Իրաքյան վերջին՝ 2003թ. պատերազմի ժամանակ, ամերիկյան «Delta» հատուկ ստորաբաժանման զինվորներն իրենց պաշտպանական սաղավարտներին ամրացված էկրաններին անմիջապես տեսնում էին իրենց շրջակայրում տեղի ունեցող ամեն ինչ: Տեղեկությունը ստացվում էր «Dragon Eye» հետախուզական ԱԹՍ-ներից: Հատուկ ստորաբաժանման մարտիկները հետախուզական ԱԹՍ-ների հաղորդած տվյալներով հայտնաբերված «խոչընդոտները» վերացնելու համար կարող էին դիմել մարտական «MQ-1/RQ-1 Predator» ԱԹՍ-ներին: Վերջինս կիսաավտոմատ ռեժիմում խոցում էր հայտնաբերված թիրախը: Ոչնչացման ենթակա թիրախները կարող էին լինել մինչև անգամ առանձին դիպուկահարներ: Սա արդեն համակարգային կիրառության փոքրիկ տարբերակ է՝ սահմանափակ տարածքում սահմանափակ խնդիրների լուծման համար:

ԱԹՍ-ների մասնակի կիրառությունը սահմանափակ ստորաբաժանումների կամ ստորաբաժանման կողմից սահմանափակ տարածքում և ժամանակում կոնկրետ տեղեկատվություն ստանալու համար մեր փոքր տարածաշրջանում կարող է զգալիորեն բարձրացնել տվյալ

<sup>162</sup> Եստ Բինգ. Спрятаться негде. Популярная Механика. № 4. 2005, стр. 92–98.

<sup>163</sup> А. Стрелецкий. Беспилотная авиация сухопутных войск Франции. ЗВО. № 9. 2000, стр. 24–28.

ստորաբաժանման և անգամ ամբողջ զորամիավորման մարտական հնարավորությունները: Օրինակ՝ մեր տարածաշրջանում մեկ համագորային զորամիավորմանը տրված ԱԹ-Ս-ների ստորաբաժանումը կարող է այդ զորամիավորմանն ապահովել անընդհատ հետախուզական ստույգ տվյալներով՝ ռազմաճակատի ամբողջ երկայնքով և խորությամբ: Ներկայումս գոյություն ունեցող և բազմից կիրառված ԱԹ-Ս-ներն ապացուցել են այդ հնարավորությունները: Նրանք կարող են օդում մնալ մինչև 6-8 ժամ, կարող են թոշել մինչև 150-200 կմ: ԱԹ-Ս-ների նման ստորաբաժանման մեջ կան մի քանի Թ-Ս-ներ, և ստորաբաժանումը կարող է արագ տեղաշարժվել՝ հմտությամբ շարժվելով զորամիավորման ամբողջ ճակատով: ԱԹ-Ս-ների կիրառման մարտավարությունը ներկայումս կատարելագործվել և հրկվել է, այն առաջ է լեռանում: Ուստական «Տրոյ Պ» համալիրն իր կազմում ունի վեց «Պուլա» ԱԹ-Ս, և այդ ամենը տեղակայված է ԶՓ-ի (զրահապատ փոխադրիչ) հիմքի վրա, որն ունի մեծ անցունակություն: Համալիրի դեկավարման կետը տեղակայված է ամենազնաց «ԳԱՅ-66»-ի հիմքի վրա: Համալիրի մեջ մտնում են նաև տեխսապատճենման բաղադրամասերը, որոնք ևս տեղակայված են ամենազնաց մեկ-երկու մերենաների վրա: Ցանկացած տեղաշարժերից հետո համալիրը 20 րոպե անց կարող է պատրաստ լինել ԱԹ-Ս-ների արձակմանը<sup>164</sup>: Նման համալիրների անձնակազմը բաղկացած է 10-15 զինծառայողից: ԱԹ-Ս-ների՝ չնայած մասնակի, բայց վերը նշանակած բազմակողմանի կիրառմամբ զգալիորեն կրաքարացվի հետախուզության դերը: Արդյունքում համագորային հրամանատարները կարող են գործել ավելի ճիշտ և համարձակ: Ուզո՞մարդեալ պատմությունը վաղուց փաստել է, որ հետախուզական լավ տվյալները հաճախ կանխորոշում են պատերազմի ելքը:

Մարտական զործողությունների աճող արագությունը, տեխնիկական հագեցվածությունը և բազում այլ հանգամանքներ ավելի են բարձրացնում հետախուզական անընդհատ տվյալների նշանակությունը:

Սովորաբար անտառակեռնային տեղանքում ավիացիոն հետախուզության մարտավարական և օպերատիվ խորությունները դասականից փոքր են: Մարտական շիման համատարած գծերը հաճախ բացակայում են: Հատուկ դիվերսիոն ստորաբաժանումները մեծ նշանակություն ունեն, որոնց զործունեությունն ակտիվանում է նման տեղանքներում: Թվարկված պատճառներով անգամ 5-10 կմ խորության մանրամասն հետախուզությունը կարող է օպերատիվ նշանակություն ունենալ զորամիավորման կամ ուղղության համար: ԱԹ-Ս-ների կիրառության պատմությունն ավելի հարուստ է մասնակի դեպքերով: Մասնակի կիրառման լավ օրինակ կարող է հանդիսանալ նաև հասուն ԱԹ-Ս-ների կիրառումը՝ որպես նշանառու-խցող միջոցներ, այսպես ասած՝ «քիլերներ»: ԱԹ-Ս-ներին զինելով մեծ տրամաչափի դիպուկահար զենքերով՝ կարելի է ստանալ ցանկալի արդյունքներ: Նման խնդիրներ կատարելիս հնարավոր է, որ ԱԹ-Ս-ների մեկ համալիրը, անգամ մասնակի կիրառման ժամանակ, հասնի մեծ հաջողությունների: Այստեղ կարերվում են համալիրի և ԱԹ-Ս-ների տեխնիկական հնարավորությունները: Եթե համալիրում լինի մեկ-երկու հետախուզական ժամանակակից ԱԹ-Ս և մի քանի հարվածող, մեկանգամյա օգտագործման ԱԹ-Ս, ապա կարելի է առաջինների հաղորդած տվյալների հիման վրա վերջիններով կատարել մարտական հարվածներ: Անհրաժեշտ է, որ հետախուզական ԱԹ-Ս լինի հակառակորդի ՀՕՊ-ի ազդեցությունից դուրս, և երկու տեսակն էլ լինեն դժվարախոցելի: Մասնակի կիրառման փորձն ամբողջ աշխարհում, չնայած որոշակի բարորդություններին, զնահատվում է բավական բարձր:

Անօդաչուների կիրառության և կորուստների քանակային տվյալներն առաջին հայացքից կարող են թվականից՝ հատկապես ավանդական մարտական ավիացիայի տվյալների հետ համեմատած: Օրինակ՝ 1999թ. Հարավսլավիայի հետ պատերազմի ժամանակ ՆԱТО-ի դաշնակիցներն ընդհանուր առմամբ կորցրել են 47 ԱԹ-Ս, որից ամենաշատը բաժին է ընկնում ԱՄ-ի՝ 17 ԱԹ-Ս, Անգլիան՝ 14 ԱԹ-Ս, 7 սարք կորցրել է Գերմանիան, 5 սարք՝ Ֆրանսիան և այլն:

Կորցնելով նշանակությամբ ԱԹ-Ս-ներ՝ զորքերը բոլոր հրամանատարական օդակներում գրեթե ապահովված են տեղեկատվական ցանկալի բազայով: Ճիշտ է, պատերազմից հետո պարզվեց, որ այդ բազան հարկավոր է մեծացնել: Այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք, որ այս սարքերն ընդամենն արժեն մարտական ինքնաթիռների 10-50%-ը, որ առնվազն խնայվել է 40 օդաչուի կյանք, ապա կարելի է ընդունել, որ այս սարքերն իրոք լուծում են և ոչ ժամանակավոր: Կորուստները, ըստ պատճառների, բաժանվում են մի քանի խմբերի: Առաջին տեղում 37%-ով գտնվում են շարժիչ պատճառով տեղի ունեցած կորուստները, երկրորդ տեղում 25%-ով դեկավարման համակարգի

<sup>164</sup> Յո. Яնկевич. БЛА ОКБ имени А.С. Яковлева. Вестник Воздушного Флота. июль-август. 2006, стр. 38-43.

պատճառով կորուստներն են, երրորդ տեղում 17%-ով օպերատորական սխալների պատճառով գրանցված կորուստներն են: Հետո գալիս են կապի պատճառով եղածները՝ 11%-ը, և 10% բաժին է ընկնում այլ պատճառներով տեղի ունեցած կորուստներին<sup>165</sup>: Փաստորեն, ԱԹՍ-ների տեխնիկական վիճակը և հուսալիուրյունը ցանկալի մակարդակի վրա չէ, քանի որ կորուստների հիմնական մասը բաժին է ընկնում տեխնիկական գործոնի վրա: ԱԹՍ-ների զարգացման երկարամյա ծրագրերում այս խնդիրը դրված է մասնագետների ուշադրության կենտրոնում: Մարտական կորուստներն այնքան մեծ չեն, և դա լավագույնս ապացուցում են փաստերը: 1982թ. իրայելցիների կողմից ԱԹՍ-ների հաջող կիրառությունից հետո ԽՍՀՄ-ում կատարում են մի փորձարկում: «3СУ-23-4 Ռուկա»-յի փորձառու հաշվարքը կրակում է իրական ԱԹՍ-ների վրա և ոչ մի կերպ չի կարողանում խոցել այն: Մերբերը, օրինակ, ԱԹՍ-ների հետ պայքարի համար լայնորեն կիրառում էին սովորական ուղղաթիռներ, որոնք թռչում, արագությամբ հավասարվում էին վերջիններին և գնդացիրով ոչնչացնում ԱԹՍ-ներին, սակայն արդյունավետությունը նշանակալից չէր, քանի որ կորուստների ընդհանուր թվերը մեր ձեռքի տակ են: Ելնելով այս ամենից՝ փաստենք, որ ԱԹՍ-ների հետ պայքարն այնքան էլ դյուրին գործ չէ, բայց, այնուամենայնիվ, մասնագետների կարծիքով մարտական պայմաններում ԱԹՍ-ները նպատակահարմար է կիրառել 5000 և ավելի մետր բարձրությունների վրա: Նման բարձրության դեպքում գենիթարանորային միջոցները և ուղղաթիռներն այնքան արդյունավետ չեն գործում: Բացի այդ, միջին չափերի ԱԹՍ-ները նման բարձրություններում մարդու զգայարանների համար դառնում են անտեսանելի և անլենի: Մասնակի կիրառության աճող ծավալները հիմք են տալիս մասնագետներին ավելի լուրջ վերաբերվել ԱԹՍ-ների՝ որպես համակարգային և, որ ավելի կարևոր է, մարտական կիրառության հեռանկարին: Հիմա ԱԹՍ-ների հեռանկարայնությունն այլևս քննարկման ենքնակա չէ: Խնդիրը նրանց կիրառության մասշտաբների որոշման, կիրառման մարտավարական և ուղղմավարական նոտեցումների, նրանց շնորհիվ մարտն ավելի կազմակերպված դարձնելու մեջ է: Այսպես է արտահայտվում ԱԹՍ-ների մասնակի կիրառությունը, որը համարվում է ավելի բույլ մակարդակ, սակայն դեռ իրեն չի սպառել և որոշ դեպքերում կարող է բերել լուրջ հաջողություններ:

Ինչպես նշեցինք, ԱԹՍ-ների՝ որպես հետախույզների, մասնակի կիրառության ծավալները ընթացքում դեռ կածեն, սակայն ԱԹՍ-ներն իրենցից ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում համակարգային կիրառության դեպքում: Մենք մասնակի կիրառման մասին նշելիս ակնարկեցինք համակարգային կիրառության պարզ դեպքերի մասին:

Համակարգային կիրառության դեպքում ԱԹՍ-ն ընդհանուր տեղեկատվական դաշտի ապահովման կարևորագույն գործիքներից մեկն է: Այսինքն՝ մասնակի կիրառության ժամանակ ԱԹՍ-ն հանդես էր գալիս որպես ինքնուրույն միջոց՝ սահմանափակ խնդիրներով և հնարավորություններով: Համակարգայինի դեպքում ԱԹՍ-ն հետախուզական թոխքը կատարում է միաժամանակ մի քանի օղակների համար: Իր տված տեղեկատվությունը միաժամանակ ստանում են տարբեր համակարգեր ու գերատեսչություններ: Տեղեկատվության ստացման միջոցները կարող են լինել առանձին սարքեր՝ հանդիսանալով մեկ համակարգի բաղկացուցիչ մասնիկներ, և կարող են համագործակցել: Այդ համագործակցությունը կարող է մեծապես կախված լինել ԱԹՍ-ների հաղորդած տեղեկատվություններից: Օրինակ՝ ԱԹՍ-ները, հետախուզելով տեղանքը, տվյալները միանգամից հաղորդում են և կենտրոնակայան, և հարվածային ԹՎ-ներին:

Տեղային պատերազմների վերջին օրինակները ցույց են տվել, որ ՑԶ-ի համար ռազմական ավիացիայի կողմից կատարվող խնդիրների զգալի մասը լուծում է բանակային ավիացիան (այսինքն՝ գրոհիչները և ուղղաթիռները): Երևում է ավիացիայի զարգացման դինամիկան՝ դեպքի միջոցների փորբացում և հարվածների ծատություն: Մարտական ԱԹՍ-ներն, իրենց գերճշգրիտ հարվածային հնարավորություններով, կարող են այսպայում մասնակիորեն փոխարինել գրոհիչներին և ուղղաթիռներին: Պատերազմի առաջին փուլի օդային հարվածների ընթացքում չոչնչացված նշանակատերի չեղորացման համար ավիացիան հերթապահության ներողով ավանդաբար կիրառվում է օդանավակայաններում: Նորահայտ այդ միջոցների դեմ պայքարելիս մարտական ուղղաթիռները գործում են հիմնականում վերգետնյա ուղղորդողների տրված տվյալներով: Գործելու այս մեթոդը բավականին անարդյունավետ է: Ավելին՝ այն վաղու անցած է, ունի շատ բերություններ: Ամենամեծ խնդիրը, իհարկե, ժամանակն է: Հակառակորդին օդային հետախուզության միջոցներով

<sup>165</sup> В. Попов, Д. Федутинов. Пентагон оснащает войска беспилотниками. Независимое Военное Обозрение. № 49. 24 декабря 2004 – 13 января 2005.

հայտնաբերելուց հետո, օդանավակայանում հերթապահող միջոցներով խոցելու փոխարեն<sup>166</sup>, օդում հերթապահող միջոցներով խոցելու դեպքում ժամանակը կրճատվում է 2-3 անգամ<sup>167</sup>: Մեկ անգամ չե, որ ավիացիայի կանչերն ուշացել են, և սպասող սոորաբաժանումները գլխովին ջախջախվել են կամ կրել մեծ կորուստներ: Օդաչուին խնդիրը դնելուց հետո անգամ մինչև նա հասնի տվյալ տեղանաս, իրադրությունը կարող է փոփոխված լինել: Հետևաբար, կարենոր է նաև իրադրության ընթացիկ ճշտումը մինչև հարվածի պահը: Նշված բոլոր խնդիրներն արդյունավետ լուծում է ԱԹ-Ս-ն: Սակայն խնդիրը բնավ միայն ժամանակը չէ: Օդանավակայանում հերթապահող Թ-Ս-ի օդաչուն ստանում է կանչ այն տեղանասի մասին, որտեղ պետք է կատարի հարվածը: Նա պետք է ստանա լրացուցիչ հրահանգավորում: Նշված տեղանասում նախկինում արդեն հարվածներ հասցրած լինելու դեպքում օդաչուն, միենույն է, իրադրության կտրուկ փոփոխման պատճառով կարող է խճճվել՝ նոյն տեղանասում երկրորդ և ավելի անգամներ բռչելով: Այսինքն՝ անհրաժեշտ են անընդհատ հետախուզական ճշգրիտ տվյալներ: Եվ այս ամենն արվում է սովորական՝ ոչ ճշգրիտ խոցման միջոցներով: Բանակային ավիացիան հարվածներ հասցնելիս, խուսափելով հակառակորդի ՀՕՊ-ից, փորձում է որքան հնարավոր է բռչել ցածր և ընտրել բռիչքի այնպիսի ուղիներ, որոնք չեն վերահսկվում հակառակորդի կողմից: Այս դեպքում մարտական Թ-Ս-ների անձնակազմերը տեղանքը լավ չեն կարող դիտել, և նշանակետն ինքնուրույն հայտնաբերելը շատ դժվար է: Նրանք հիմնականում ապավինում են վերգետնյա ուղղորդողներին, որոնց հետ կապ են պահում՝ ինքնուրույն կամ հրամանատարական կետի միջոցով:

Հաճախակի չվատահելով ուղղորդողներին՝ անձնակազմը փորձում է ինքնուրույն որոնել նշանակետը: Վերջին երեսույթը, բնականաբար, բացասաբար է ազդում մարտական խնդրի բարեհաջող կատարման վրա: Մարտական խնդիրը կատարող օդաչուն այդ պահին երե հնարավորություն ունենա անընդհատ ստույգ տվյալներ ստանալ օդում գտնվող հետախուզական միջոցներից, ապա նրա գործողություններն ավելի արդյունավետ կլինեն, իսկ անձնակազմը կկենտրոնանա իր բռիչքի վրա: Գրոհի ավիացիոն նախապատրաստման ընթացքում և դրանից անմիջապես հետո յուրային ավիացիոն միջոցներին և ՅԶ-ին մեծ վտանգ են սպառնում նաև ՀՕՊ-ի միջոցներն ու այլ իրթիռային համալիրները, որոնք ունեն հակառակության փոքր ժամանակ (ընդհուպ մինչև մեկ-երկու տասնյակ վայրկյան): Նման համալիրների դեմ նախկին մեթոդներով պայքարելը գրեթե անհնար է: Այստեղ ևս հետախուզահարվածային համալիրների արագագործության և ճշտության առավելություններն իրենց խոսք են ասում:

Օդում նախապես ունենալով հերթապահ միջոցներ (համակարգային կիրառման հետախուզահարվածային միջոցներ), որոնք միաժամանակ կարող են հետախուզել՝ կարելի է մեծ ճշտությամբ հարվածներ հասցնել: Ավելին՝ նրանք ավելի շուտ կհայտնաբերեն հակառակորդի ՀՕՊ-ի և այլ միջոցները, քան այդ նորահայտ միջոցները կհասցնեն ինչ-որ շոշափելի գործ կատարել: Հետախուզահարվածային համալիրներն իրենց մեջ ներառում են ավիացիոն դասական միջոցների և գերճշգրիտ ավիացիոն սպառագինության համատեղում: Ավանդական բանակային ավիացիան հարվածները հասցնում է գրոհող սոորաբաժանումների մարտակարգերից առաջ՝ գործելով թերի հետևից կամ յուրային իրթիռային հետախուզանայն կրակի հետ համատեղ: Սովորաբար համազորային մարտի թեժ պահին քիչ հրամանատարներ են մտածում գլոբալ հետախուզության մասին, քանի որ թվում է, թե մարտում ներգրավված հիմնական ուժերի տեղը և քանակը մինչև մարտը որոշված է, և նոր ուժեր չկան: Նման պահերին նոր միջոցների անակնկալ ի հաս գալը կարող է ճակատագրական լինել մարտի ելքի համար: Նշված ներքությամբ ևս մեծանում է անընդհատ հետախուզության դերը, իսկ նման հնարավորություն ընձեռում են նաև ԱԹ-Ս-ները:

Գրոհի ավիացիոն նախապատրաստման և աջակցության ժամանակ կա ևս մեկ առանձնահատկություն: Հակառակորդի օպերատիվ և ուղղավարական նշանակության օրյեկտները և նշանակետերը պաշտպանված են ՀՕՊ-ի բազմաշերտ համակարգով: ՀՕՊ-ի նման հզոր համակարգը հաղթահարելու համար, անկախ նրա հեռավորությունից, անհրաժեշտ են մարտավարական կամ բանակային ավիացիայի կազմակերպված և խիս հարվածներ, որի համար կարող են պահանջվել բանակային ավիացիայի մի քանի հարյուր մարտական բռիչքներ: Դժվար չէ հասկանալ, որ մեր պարագայում դա, մեղմ ասած, շըեղություն է: Խնդիրն ավելի ճիշտ լուծելու

<sup>166</sup> Կործանիչներ, որոնք սպասում են օդանավակայանում և ոդ են բարձրանում կանչով:

<sup>167</sup> Տակտիկա, ստ.34.

տարբերակ է նման նշանակետերին ավիացիոն հարվածների հետ համատեղ հասցնել հզոր հրթիռահրետանային հարվածներ (ինչը ևս համակարգային կիրառության տարր է), որոնք պետք է լինեն ճշգրիտ և լավ կազմակերպված:

Բազմաշերտ և անվիճելիորեն արդյունավետ այդ հարվածների կազմակերպման և ճշտության ապահովման համար մեծ դեր կարող են խաղալ ԱԹՍ-ները, որոնք կկառավարեն հրթիռահրետանային կրակը և անհրաժեշտության դեպքում հակառակորդին կխոցեն սեփական հարվածներով (համատեղված ավիացիոն և հրթիռահրետանային հարվածներն իրենցից ներկայացնում են մի առանձին և հետաքրքիր բեմա): Այստեղ հաջողությամբ կարող է կիրառվել ուսական «P-90» ԱԹՍ-ն, որը տվյալներ հարորդելով իր արձակման կայանին՝ կուրրորդի «Սներչի» հեռահար կրակը: Հետախուզական բազմատեսակ համակարգերի և համալիրների կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ մարտական ԱԹՍ-ները հասցնում են հարվածներ: Մարտական ԱԹՍ-ներն ավելի օպերատիվ գործելու համար կարող են հետախուզման ընթացքում արդեն գտնվել օդում, տվյալ կամ նշված մոտակա շրջանում և նշանակետի մասին հրամանատարական կետի հետ միաժամանակ ստանալ համաժամանակյա տեղեկատվություն: Համակարգային կիրառությունը կտա ստացված հետախուզական տվյալների մշակումը և տարբեր ստորաբաժանումների համագործակցությանը միտքած գործողությունները մանրամասներ՝ կրճատելով ժամանակը, նվազեցնելով նաև կապից սպասվող արտահոսքի վտանգը: ԱԹՍ-ների մարտական այդպիսի կիրառությունը շահագործման պարզության, տեղափոխելու հարմարավետության և արագության հաշվին մարտական գործողությունների ժամանակը կարող է անհրաժեշտ տեղամասում ապահովել քանակական առավելություն հակառակորդի ավիացիայի նկատմամբ: Նման խելամիտ կիրառությունը և տեխնիկական հնարավորությունները կարող են ապահովել հաղթանակ անգամ դասական ինքնարիոնների և ուղղարիոնների նկատմամբ: Այսինքն՝ համագորային գորամիավորման հրամանատարը, իր տրամադրության տակ ունենալով մարտական ԱԹՍ-ների 3-4 համալիր, կարող է նշված վայրում և նշված պահին ապահովել հարվածներ մինչև 40-50 ԱԹՍ-ներով: Հարվածները կարող են լինել մարտավարական և անգամ օպերատիվ մարտավարական խորությամբ, կիրառման գանգան խարուսիկ, շեղող և օգնող հնարքներով, դասական ավիացիայի և հրթիռահրետանային հարվածների հետ համատեղ: 3-4 համալիրները ընդհանուր պետք է կազմեն մինչև 20 մերենա, որոնք անգամ կարող են տեղաշարժել տարբեր խմբերով, ոչ միասին և գործեն ոչ մեկ դիրքից: Մարտավարական բազմազանությունը մեծ հնարավորություններ է տայիս:

Լեռնային շրջաններում կարևոր է նաև օդային դեսանտավորումը: Հաճախ մեկ-երկու տասնյակ անակնեալ դեսանտավորված մարտիկները, հայտնվելով թերում կամ թիկունքում, կարող են խուճապի մատնել մեծ զորամիավորմաններին: Սակայն օդային դեսանտավորումը լեռնային տեղանքում ևս դյուրին խնդիրներից չէ: Դեսանտավորման ժամանակ նշանական նշանակություն ունի դեսանտավորման շրջանի հստակ պատկերի ստացումը: Անտառալեռնային խիտ և կտրտված տեղանքում մարտական գործողությունների վարման ժամանակ բարդանում է ավիացիայի կիրառումը՝ հատկապես պարտիզանական, ֆիդայական խմբերի հետ պայքարում: Այստեղ պետք է ունենալ բարձրորակ հետախուզակարգածային հուսալի համալիր: Անօդաչուների կիրառման լայն ոլորտ մեզանում կարող է հանդիսանալ այլ ԹՍ-ների՝ հատկապես ուղղարիոնների, հետ պայքարն օրում:

ՀՕՊ-ի համար լինելով և իրական, և հանդիսանալով կեղծ թիրախ՝ անօդաչուները կարող են ստեղծել տասնյակ ու հարյուրավոր նշանակետերի տպավորություն: Այսինքն՝ մարտական ԱԹՍ-ները կարող են կիրառվել և որպես հարվածող միջոցներ, և որպես խանգարող միջոցներ՝ միաժամանակ: Նման փորձի մասին մենք արդեն նշել ենք: Օրինակ՝ տվյալ ուղղության վրա ավիացիայի հիմնական հարվածներից առաջ կիրառելով ԱԹՍ-ների խիտ մասսաներ՝ հնարավոր է հակառակորդին ստիպել բացահայտել իրեն, ծախսել անիմաստ հրթիռային և հրանոքային զինամքերքի պաշարները: Հիմնական հարվածն իրականացնող ՕՀՍ-ներն ավելի հանգիստ և անվնաս կկատարեն մարտական առաջարիքանքը: Նման համալիրների զործունեությունն այդպիսի լավ ապահովված ՀՕՊ-ի շրջաններում հնարավոր է՝ ելնելով դրանց դժվար հայտնաբերվելուց և ոչնչացվելուց:

Ներկայումս համագորային մարտն առանց արդյունավետ էլեկտրոնային կառավարման հնարավոր չեղակացնելու: Բազմաշերտ կառավարումն ապահովող տարրերից է հետախուզահարվածային ԱԹՍ-ն<sup>168</sup>:

Հետախուզահարվածային ԱԹՀ-ների կիրառության համար նշանակետեր կարող են հանդիսանալ հրետանային հզոր համալիրներն ու հրթիռային արձակման կայանները, որոնց հարվածային հզորությունը բավականին մեծ է և կարող է քայրայիշ ու կործանարար ազդեցություն ունենալ ինքնապաշտպանական ուժերի ու խաղաղ բնակչության վրա: Նման համակարգերը դեռ բացառման բնագծից հեռու ավելի դյուրին է հայտնարերել և ոչնչացնել փոքր ԱԹՍ-ներով, որոնք կարող են հաղթահարել հակառակորդի պաշտպանական բնագծերի գգալի խորությունները: Հրետանային և հրթիռային համալիրների նկատմամբ կարելի է կազմակերպել իսկական որս: Նշվածների մեջ են մտնում նաև ինքնազնաց հրետանային կայանները, որոնք օժտված են կրակային դիրքը զբաղեցնելու և բողոքելու մեծ արագությամբ, ինչի արդյունքում շատ դեպքերում նրանց հայտնարերելուց հետո ժամանակը չի բավականացնում կրակային այլ միջոցներով ոչնչացնելու համար: Հրետանային հզոր համալիրները, հրթիռային արձակման կայանները և ինքնազնաց հրետանային համալիրները ոչնչացնելու համար կարևոր նախապայման է հսկողության տակ պահել հաղորդակցության հիմնական ուղիները: Չեղ<sup>169</sup> որ այդ միջոցները, իրենց շափերից և շարժունակությունից ենթվով, չեն կարող շարժվել ցանկացած տեղանքով: Հետախուզահարվածային համալիրներն արդյունավետորեն կարող են ոչնչացնել նաև հակառակորդի ավիացիան վերգետնյա տեղակայման ժամանակ: Այդպիսի ստրաբաժանումների հետ պայքարի ժամանակ ԱԹՍ-ները կարող են կիրառել նաև հրկիզոր մարտական մասեր, որոնք բավականին արդյունավետ են՝ վերգետնյա բազավորված ԹՍ-ները և կենդանի ուժը ոչնչացնելիս: Մարտական գործողությունների վարումը պահանջում է ստեղծագործ միտք:

Նոր սերնդի ամերիկյան հետախուզահարվածային ԱԹՀ-ները հանդիսանալու են ընդհանուր գլոբալ համակարգի մի մասը (*արրանցակներ, AWACS-ներ, ԱԹՍ-ներ, ռազմապայքարի միջոցներ և այլն*): Այդ համակարգը միջոցների ընդհանուր համատեղ կիրառության ժամանակ ապահովելու է մեծ հուսալիություն և ճշտություն: Կարևոր է, որ նման համակարգի բաղկացուցիչ մասեր կազմող առանձին ԱԹՍ-ներն ևս կարողանան ինքնուրույն կատարել մարտական խնդիրներ: Համակարգի ամբողջովին կամ մասնակի խափանման ժամանակ նման հենարավորությունը շատ կարևոր է (*այսինքն՝ ամերիկանական դեպում կարողանամ կատարել մասնակի կիրառմամ խնդիրներ*): Կիրառման ձևերը և տեսակները շատ են: Հեռանկարում նույնիսկ քննարկվում է այն տարբերակը, եթե հարվածային և խոցող տարատեսակ բոլոր միջոցները (*հրետանային արկեր, հրթիռներ և այլն*) հագեցած լինեն հետախուզական սարքավորումներով և կարողանան բռչելու ընթացքում տվյալներ հաղորդել մինչև թիրախին հասնելը (ինչպես հեռուստատեսային կառավարմանը հրթիռները): Մարտավարական կործանիչն իրենից կարող է արձակել տասնյակ ԱԹՍ-ներ: Արձակված սարքերը կատարելու են միաժամանակ և հետախույզի, և խանգարողի, և հարվածողի դեր՝ դրանով իսկ մաքրելով մարտավարական կործանիչի ճանապարհը օդային, վերգետնյա թշնամիներից: Սահ հետախուզահարվածային համալիրի գաղափարը, որը համակարգային կիրառության նոր որակ է: Այն ցանցակենտրոն պատերազմների կամ նախորդող վիճակի արտահայտումներից է:

Մենք արդեն նշեցինք, որ օրյային ողջ տարածությունը լավ վերահսկելու համար հարկավոր է այն հսկել վերեկից, ինչն իրագործելու համար կիրառվում են աերոստատները, օդապարիկները և դիրիժարերը: Օդից թերև միացությունների օգնությամբ ԹՍ-ները՝ ի տարբերություն ինքնարթիոնների, արբանյակների և այլ ԱԹՍ-ների, ունեն երկու լուրջ առավելություն՝ նրանք բավականին էժան են, և նրանց օգտագործման ժամանակը մեծ է<sup>169</sup>: Ներկայումս կիրառվող օդապարիկները, աերոստատները և դիրիժարերը իմմնականում միջին չափերի են, այսինքն՝ ունեն մի քանի տասնյակ մետր երկարություն, մինչև ինք-վեց կմ բարձրանալու հնարավորություն և կարող են կրել մինչև մեկ տոննա օգտակար բեռնվագծություն: Նման աերոստատները իմմնականում վերգետնյա սարքերի հետ կապված են լինում երկար պարաներով: Թեկուզ այսպիսի համեստ հնարավորություններով աերոստատները կարող են հետախուզակել մինչև 300-400 կմ հեռավորություն: Այսինքն՝ նրանց վրա տեղադրված են ռադիո և այլ հետախուզական սարքեր, որոնց հայտնաբերած տեղեկատվությունը հաղորդվում է համապատասխան մարմիններին: Օդից թերև միացությունների հիման վրա ԹՍ-ների

<sup>168</sup> Тактика, стр.34.

<sup>169</sup> А. Бычков. Применение аэростатных комплексов РЛР для охраны границы. ЗВО. № 10. 2001, стр. 32-35.

միջոցով հակառակորդի տարածքի հետախուզությունն ունի մի քանի առավելություններ: Նախ՝ մեծանում է ՀՕՊ-ի հնարավորությունները, քանի որ օդային տարածքում քարնված տեղեր քիչ են մնում, որոնք կարող են օգտագործել ցածրաթոփչք ինքնաթիռները և ուղղաթիռները: Հետախուզող աերոստատը, կառուցված լինելով ոչ մետաղական նյութերից, գրեթե աննկատ է հակառակորդի ՀՕՊ-ի համար, կամ ամենաքիչը՝ դժվար հայտնաբերվող, և այն ող է բարձրացվում սեփական տարածքում՝ շվտանգելով իրեն: Վերջին կարևոր առավելությունն այն է, որ նման սարքերը չեն վախենում նաև օդային հոսանքներից, տուրքութեանտությունից և քամիներից, որոնք հատուկ են լեռնային տեղանքին և կարող են ինչ-որ չափով ազդել ԱԹ-Ս-ների որոշ տեսակների վրա: Արտասահմանում լայնածավալ աշխատանքներ են ընթանում մեծ դիրիժարլերի ստեղծման ուղղությամբ, որոնք կարող են բարձրանալ մինչև 20 և ավելի կիլոմետր, օդում մնալ մի քանի ամիս, հետախուզել մինչև 1000 և ավելի կիլոմետր տարածություններ և ունենալ ինքնուրույն սնուցման աղբյուրներ՝ հիմնականում արևային մարտկոցների տեսքով<sup>170</sup>: Հայտնի են նման դիրիժարլերի մի քանի նախագծեր, որոնք կոչվում են «SPA», «Berkut», «HAA» և այլն: Այսպիս մեծ դիրիժարլերը, դեկավարման որոշ մարմինների օգնությամբ, ավելի կայուն են օդային տատանումների նկատմամբ: Մեծաչափ դիրիժարլերն այդպիսով կարող են լինել հետախուզահարվածային հզոր հարթակներ (նրանցից կարող են արձակվել հրիուներ) և միաժամանակ օդային դեկավարման կետեր:

ԱԹ-Ս-ները սիստեմատիկորեն և կառուցվածքայնորեն լինում են շատ բազմազան: Դրանք կառուցվում են ինքնաթիռային կամ ուղղաթիռային ամենաբազմազան սիստեմներով: ԱԹ-Ս-ների ստեղծման գործում գրեթե չի կիրառվել այնպիսի տեխնիկական լուծում կամ աերոդինամիկ մուտեցում, որը չի կիրառվել դասական Թ-Ս-ների մոտ: Ըստ Էորյան, ԱԹ-Ս-ները հասարակ կառուցվածք ունեն: Դեկավարման մարմինները և այլ առանցքային բաղադրամասերն աշխատում են ինչպես սովորական ինքնաթիռների և ուղղաթիռների մոտ: ԱԹ-Ս-ների ստեղծման համար պահանջվում են ավելի քիչ տեխնիկական բարդ համակարգեր և նյութական միջոցներ: Դրանով է պայմանավորված մինի-ավիացիա ստեղծող պետությունների ակումբի մեծացումը: Ոչ մեծ և հզոր տվյալներ ունեցող ԱԹ-Ս-ների ստեղծման գործում լայնորեն կիրառվում են փայտե մասերը: Դրանց վրա տեղադրվող տարատեսակ հետախուզական սարքավորումները ինքնում են բլոկներով և շատ արագ փոխարինվում են: Առհասարակ, ԱԹ-Ս-ները, ըստ բաղադրիչների, կառուցվում են բլոկներով, որպեսզի անհրաժեշտության դեպքում ուղղակի փոխվի այս կամ այն բլոկն ամբողջովին: Տվյալ դեպքում կրճատվում է վերանորոգման ժամանակը՝ միաժամանակ ավելացնելով վերանորոգելու հնարավորությունը: Ցանկացած չափերի, անգամ ամենահասարակ ԱԹ-Ս-ների ստեղծման գործում, ամենաբարդ խնդիրը համարվում է դեկավարման համակարգի ստեղծումը: Էլեկտրոնային այն սարքավորումները, որոնց միջոցով ԱԹ-Ս-ն կատարում է իր բոլոր ֆունկցիաները, հաճախ լինում են չափերով մեծ, ծանր, անհուսալի, երկար տարածության վրա չեն գործում, ինքնական գործողություններն ավտոմատ չեն և այլն: Ոչ բոլոր պետություններին է հաջողվում ստեղծել նման լավ և հուսալի համակարգեր, որոնց գործողությունների գգալի մասն ավտոմատացված է: Պատճառ այն է, որ այս սարքերի հիմքում ընկած են տեղեկատվական տեխնոլոգիաները և միկրոէլեկտրոնիկան, որոնք բարձր գիտատեխնիկական արդյունաբերության հայելին են: Ծատ կարևոր է, որպեսզի ԱԹ-Ս-ների դեկավարող օպերատորը, իր անհրաժեշտ բոլոր սարքավորումներով հանդերձ, տեղակայվի արագաշարժ և ամենազնաց, հնարավորին փոքր մեքենայի մեջ: Մարտական պայմաններում և անտառալեռնային տեղանքում հատկապես նման հնարավորությունը շատ կարենք է: Թերև և հատկապես մարտական ԱԹ-Ս-ների ստեղծման գործում որպես շարժիչ կարելի է լայնորեն կիրառել էլեկտրոնային և գազային պտուտակավոր շարժիչները, որոնք անհրաժեշտ են միայն մեկ բոլիչի համար: Այդպիսի շարժիչները կզբաղեցնեն փոքր տեղ և կունենան փոքր քաշ: Ներկայում այդ ուղղությամբ կատարվում են լայնածավալ աշխատանքներ: Նման ԱԹ-Ս-ներով գինված մեկ համալիրը, որում կա մինչև 10 միավոր ԱԹ-Ս, կարող է արժենալ մինչև 5-10 մլն դոլար: Փոքր, սակայն լավ տվյալներ ունեցող ԱԹ-Ս-ների ստեղծման գործում առավել մեծ դժվարություն է ներկայացնում փոքրաչափ և հզոր տուրբոռեալիտի շարժիչի ստեղծումը:

Փոքր պետությունների համար, ինչպիսի ՀՀ-ն է, ներկայում դժվար է ինքնուրույն ստեղծել և արտադրել լավ տվյալներ ունեցող ԱԹ-Ս-ներ: Կարելի է սկզբի համար այլ պետություններից գնել պատրաստի տեսակներ՝ շահագործելով ձեռք բերել փորձ, իսկ հետո փորձել այն ստեղծել սեփական ուժերով: Գործը հետաձգելը հանցավոր է: Նենք նման սարքերի կարիքը շատ ենք գգում. մեր

<sup>170</sup> В Беляев. Дирижабли плывут через XXI век. Вестник Воздушного Флота. январь-февраль. 2005, стр. 24-27.

սահմանների վերահսկողության խնդիրը արդյունավետորեն կարելի է լուծել հենց այս սարքերի միջոցով: ՕՀՍ-ների և ՀՕՊ-ի միավորված զորատեսակը մեծապես կարող է օգտվել զգալիորեն ավելի էժան ԱԹՍ-ների տրամադրած ծառայություններից:

Ամեն դեպքում ելնելով պետության ռազմատեխնիկական անկախությունից՝ նպատակահարմար է ԱԹՍ-ները, ինչպես և ցանկացած սպառագինություն, ստեղծել սեփական միջոցներով և ոչ թե ներկրել արտասահմանից: Հաստատապես անքննարկելի է այն, որ ՀՀ ԶՈՒ-ին անհապաղ հարկավոր են ԱԹՍ-ներ: Մեր տարածաշրջանի համար առանձնահատուկ կարևորություն ունեն ԱԹՍ-ների որոշակի բնութագրեր: Հարկավոր է, որ ԱԹՍ-ն ունենա ոչ պակաս, քան 6 կիլոմետր քրիչքային բարձրություն, լինի ինքնանետիչ արձակմանը, անկարգելով կամ հասող հարմարանքով վայրէջք կատարող, որպեսզի կախված չլինի քրիչքուղու պարտադիր առկայությունից: Առանձնահատուկ նրբություններ շատ կան: Թեման առհասարակ պետք է լինի մեր ուշադրության կենտրոնում: Ասվածը լավագույնս ապացուցում է Խորայելի օրինակը: 1969թ. մի քանի հրեա գինվորականներ և ինժեներներ ուղիղութակառավարվող ավիամողելների վրա տեղադրեցին նկարահանող սարք և փորձարկեցին: Արդյունքները գոհացուցիչ էին: Որոշ ժամանակ անց քանակը հետաքրքրվեց դրանով և մի քանի ինժեներների գումար տրամադրեց նման սարք ստեղծելու նպատակով: Չնայած որ ամեն ինչ այնքան էլ հարթ չէր ընթանում, պետությունը մի կողմից ամենազործուն կերպով խրախուսում էր նման սարքերի ստեղծման փորձերը, անգամ ընկերությունների հիմնումը: Մյուս կողմից ԱՍՆ-ից գնվեցին արդեն կիրառված ու փորձված սարքեր: Մի քանի տարի հետո, իհարկե, ամերիկյան փորձի և համապատասխան աշխատանքի համարման արդյունքում խրայելական նորաստեղծ ընկերությունները դարձան առաջատար այս ոլորտում:

Վրացական ԶՈՒ-ն վաղուց Խորայելից գնել է մի քանի ԱԹՍ-ներ: Ըստ մամուլի հաղորդումների՝ 2008թ. ընթացքում վրացական ԶՈՒ-ն արդեն կորցրել է մի քանի նման սարք: 2008թ. մարտի 18-ին վրացական «Hermes-450» հետախուզական ԱԹՍ-ներին օդում ոչնչացրեցին արխազական ՀՕՊ-ի ուժերը: Իրադարձությունը մեզ համար շատ հետաքրքիր էր, սակայն մեծ արձագանք չունեցավ: Մեկ ամիս անց, ապրիլի 20-ին նորից ոչնչացվեց վրացական «Hermes-450» հետախուզական ԱԹՍ-ն, սակայն այս անգամ հեռուստատեսությամբ ցուցադրեցին, թե հետախուզական սարքն ինչպես է հստակ կատարում տեսանկարահանում և անգամ նկարում իրենից քիչ հեռու և ներքև քոչող կործանիչին (*հավանական է ոտսական «MuG-29» կամ «Cy-27»*), որն արձակելով «օդ-օդ» դասի հրթիռ՝ խոցեց նկարահանող «Hermes-450» հետախուզական ԱԹՍ-ին: Տեղի ունեցածը մեծ արձագանք ստացավ, գրեթե քաղաքական ճգնաժամի էր վերածվում: Մի քանի օր անց նորից արխազական ԶՈՒ-ն հայտարարեց, որ խոցել են ևս մեկ ԱԹՍ, որը զինված է եղել «օդ-օդ» դասի հրթիռով: Աղբեցանն Խորայելից գնել է բազմանպատակ «Lynx» ՈԿՀԿ-ներ, որոնք կարող են արձակել տարբեր տրամաշափի հզոր հրթիռներ և անգամ մարտական ԱԹՍ-եր: Ամենահասարակ հետախուզական սարքերի գործածությամբ արդեն նրանք կարող են փորձ ձեռք բերել հետազայում ԱԹՍ-երի ամենաբազմազան և մեծ նախազգերի կիրառության համար: Աղբեցանը և Խորայելից ձեռք է բերել Aeronautics Defense Systems Ltd. ընկերության «Orbiter» և «Aerostar» ԱԹՍ-ներ, որոնք բազմից կիրառվել են զինված ուժերի շփման գոտում: Աղբեցանը ցանկանում էր նաև արտադրել սովորական ու անգամ մարտական ԱԹՍ-ներ՝ խրայելական ընկերությունների հետ համատեղ<sup>171</sup>: Վերջերս սակայն հասկանալի պատճառներով նման սարքերի ձեռքբերման համար պայմանագիր կնքվեց բուրքական TAI (Turkish Aerospace Industries, Inc) ընկերության հետ, որը ստեղծում է «Turna» ԱԹՍ-ները: (Տես նկար 30)

Ավելին, աղբեցանից սպանները թուրքիայում նասնագիտական պատրաստություն են անցնում՝ դեկավարելով «Turna» սարքերը: Իհարկե, բուրքական արտադրության ԱԹՍ-ները որակական շափանիշներով չեն կարող համեմատվել խրայելականների հետ, քայլ քուրքական ԱԹՍ-ները հարկ եղած դեպքում ևս կարող են օգտագործվել որպես մարտական-հարվածային միջոցներ:

Թուրքական իշխանությունները բանակցություններ էին վարում ամերիկյան և խրայելական ընկերությունների հետ՝ մարտական ԱԹՍ-ների ձեռք բերման ուղղությամբ: Մասնավորված են ուղարկել իհարկելական «Harpur-2» մարտական և «Heron» ԱԹՍ-եր<sup>172</sup>: Թուրքական ԶՈՒ-ն ցանկանում է նաև գնել անօդաչու հետախուզական օդապարիկներ, որոնք բոլորը միասին՝ արդեն գնված AWACS

<sup>171</sup> Крупнейшая военная компания Израиля открыла представительство в Азербайджане, 06.10.2009, [http://www.aze.az/news\\_krupneyshaya\\_voennaya\\_kompan\\_26137.html](http://www.aze.az/news_krupneyshaya_voennaya_kompan_26137.html).

<sup>172</sup> İşte Türk yapımı casus uçakları(TİHA), Zaman, 06.12.2008; <http://www.ssm.gov.tr>

համակարգերի հետ համատեղ, կկազմեն շատ հզոր հետախուզահարվածային և դեկավարման համակարգ<sup>173</sup>: Մենք իրավունք չունենք այս ամենն անուշադրության մատնել:

ԱԹՍ-ները շատ հեռանկարային ԹՍ-ներ են, որոնք անցել են զարգացման հետևյալ փուլերը.

- ✓ Չհաշված մի քանի ստեղծման կամ կիրառության այն փորձերը, երբ հիմնական դերակատարներն օդապարիկներն ու էկզոտիկ ԹՍ-երն էին, հիմնականում ԱՀՊ-ի ժամանակ արդեն նման սարքերի ստեղծման լայն աշխատանքներ էին ծավալված:
- ✓ 1930-ական թթ. արդեն այդ փորձերը տվեցին իրենց գործնական արդյունքները. հայտնվեցին հեռակառավարվող տարատեսակ ԹՍ-ներ:
- ✓ 1940-ական թվականներից արդեն ԱԹՍ-ների առաջին ներկայացուցիչներ՝ ԹՀ-ներ, համարվում էին ահեղ գեներերը:
- ✓ 1950-ական թվականներին արդեն ԱԹՍ-ները հանդիսանում էին թիրախներ և կատարում էին օդային հետախուզություն:
- ✓ 1960-ականներին արդեն ԹՀ-ները, որոնք ունեին բռիչքի զգալի հեռավորություն, զինված էին միջուկային մարտազիւններով:
- ✓ 1970-ականներին արդեն աշխատանքներ էին ծավալվում մարտական տարատեսակ անօդաչուների ստեղծման ուղղությամբ, և, որ ամենակարևորն է, աշխատանքները զնալով ընդգրկում էին թվով ավելի շատ պետություններ:
- ✓ 1980-ական թվականներին արդեն այդ աշխատանքները տվեցին իրենց զգալի պատումները: Ի հայտ եկավ ուսումնավարական ԹՀ-ն: Անօդաչուներն ունեցան տարբեր դերակատարություններ, իսկ նրանց հեռակառավարումը հասավ տիեզերական հարության և աստիճանի:
- ✓ 1990-ական թվականներին նման սարքերն արդեն կիրառվում են բազում ոլորտներում:
- ✓ 2000-ական թվականներին դրանց հիման վրա ստեղծվում են հսկայական համալիրներ և համակարգեր:

ԱԹՍ-ները, ի սկզբանե հանդիսանալով ԹՍ-ների մի հասարակ տեսակ, վերաճել են ուսումնավարական խնդիրներ կատարող համալիր միջոցների: Ուշադրության արժանի է այն, որ նրանք, ենելով իրենց ոչ մեծ արագությունից, մարտական մասի փորք չափերից և այլ բնութագրերից, տեղափոխվում են ավանդական մարտավարական օդակի սպառագինությունների չափանիշների մեջ՝ ենելով տեղեկատվական այն հզոր բազայից, որը տրամադրում են նրանք՝ առանց ժամանակային ձգձգման: Ընորիկ տրամադրված տեղեկատվության, օպերատիկ և ուսումնավարական համակարգերի հետ համագործակցության անհրաժեշտության, ինչն ապահովում է մարտի դեկավարման ձկունություն՝ անօդաչուները վերածել են ուսումնավարական միջոցների: Ասել է թե այս հասարակ ու պարզ մերենաները լուծում են բարդ ու կարևորագույն խնդիրներ:

Ժամանակակից ուսումնավարական, ուսումնավարական զարգացումները, սպառագինությունների զարգացման տեմպերը և ուղղվածությունները նոր մարտահրավերներ են նետում ցանկացած պետության առաջ, որոնք շատ խիստ են և դաժան: Նման մարտահրավերները պետք է հասկանալ, ընդունել ճիշտ և ժամանակին: Մարտահրավերները պահանջում են համարժեք և կտրուկ պատասխաններ, որոնք պետք է դիտարկել համաշխարհային փորձի հետ համադրված (թեկուց անհրաժեշտությամբ դեպքում բռվանդակային փոփոխություն կատարել) և պետք է կիրառել մեր պայմաններում: Այս դիմամիկ տեմպերից դուրս մնալով՝ մենք կարող ենք ի վերջո կորցնել ուսումնական անվտանգության երաշխիքները: Ժամանակակից ՕՀՍ-ների մասայական կիրառմանը հենց մարտական գործողությունների սկզբից հնարավոր է հաղթանակ տանել: Կիրառության մասայականությունն անհախաղեալ է<sup>174</sup>: Առաջին էշելոնի գորքերն այնքան արագ են շարքից դուրս գալիս, որ երկրորդ էշելոնը կամ ուզգերվը չեն հասցնում միջամտել<sup>175</sup>: Խրամատային ամուր, պասիվ պաշտպանությունը, որը կարծրատիպ է դարձել, արդեն չի կարող ապահովել հուսալի պաշտպանություն<sup>176</sup>: Հարձակողական դատողությունը հակամարտության ժամանակ դառնում է

<sup>173</sup> Այս մասին մանրանասն տես՝ Լ.Հովսեփյան, Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ուսումնարդյունարերությունը, Եր., 2010թ.

<sup>174</sup> А.Н. Захаров. Операция «Лис пустыни»..., стр. 70.

<sup>175</sup> В.А. Вахрушев. Локальные войны..., стр. 28.

<sup>176</sup> И.Н. Воробьев. Какие войны..., стр. 18-24.

գերակայող<sup>177</sup>: Ամբողջ աշխարհն անցնում է հիմնական ստորաբաժանումների փոփոխման: ՕՀՄ-ների, ԹՄ-ների և այլ համակարգերի հագեցվածության արդյունքում հիմնական դարձող բրիգադներն ավելի մեծ հարվածային և շարժունակության հնարավորություններ ունեն, քան նախկին դիվիզիաները: Մարտական գործողությունների ծանրության կենտրոնը վաղուց գետնից շարժվում է դեպի երկինք: Այս պարզ ճշմարտության ընկալումը կարող է հաղթանակներ ու գերակայություն ապահովել ապագայում և հակառակը՝ կորուստներ պատճառել այն չընդունելու պարագայում: Նման դառնություններ մենք չենք կարող թույլ տալ: Սեզանում, որպես կանոն, ուշադրություն է դարձվում ցամաքային գինատեսակների և գորատեսակների զարգացմանը, իսկ ԹՄ-ի, ՕՀՄ-ների զարգացմը թերի է կամ, լավագույն դեպքում, լիովին արտացոլում է ոռուական ընդիանուր մոտեցումը: Այրախի ուշադրությունն ՕՀՄ-ների նկատմամբ չի կարող լինել բավարար, քանի այս գինատեսակները կարենու են, և օրեցօր նրանց դերն ու նշանակությունն ավելի է մեծանում: Ուստաստանյան ամենահեղինակավոր մասնագետներն անգամ հայտնում են այն կարծիքը, որ ավիացիայի նկատմամբ իրենց ուշադրությունը բավարար չէ<sup>178</sup>: Ավիացիայի գալիքն ԱԹՄ-ներին է, իսկ ներկայումս ԱԹՄ-ների կիրառության հիմունքները դեռ վերջնականացեն հաստատված չեն: Որպեսզի հասկանանք նման սարքերի դերն ապագա պատերազմներում, անհրաժեշտ է պատկերացնել ապագայի պատերազմների մողելը: Միգուցե երբեք պատերազմները չվերածվեն ֆանտաստիկ ֆիլմերի: Ամենակատարյալ ոռորուն անգամ չի կարող փոխարինել մարդուն, քանի որ ոչ մի ոռորու ստեղծագործաբար չի կարող մտածել, իսկ դա մարդուն շահեկանորեն տարբերում է ցանկացած մեքենայից: Սակայն հուսալի և արագագործ համակարգերը կարող են մարդուն բավականին օգնել մարտի դաշտում: Յուրաքանչյուր դարաշրջանում գերակայող մի զորատեսակ իր նշանակությամբ թելադրում է մարտավարության ծևաչափը: Փոփոխվում է պատերազմի վարման ավանդական պատկերացումը, զայիս են նոր զաղագիւղներ և մոտեցումներ: Հարկավոր է ճիշտ հասկանալ նրանց շունչը և ոչ թե ապասել այդ փոփոխություններին: ԱԹՄ-ները միայն նոր տեսակի ԹՄ-ներ չեն, դրամբ գալիք պատերազմներում նոր տեսակի ավիացիա են:

#### 6.8. Ենթակառուցվածքները

Ինչպես մենք արդեն նշեցինք, Արցախյան գոյամարտի ընթացքում հիմնական բենափոխարումները կատարվել են ուղղաթիռներով, և այստեղ նաև առաջանում է այն հարցը, որ եթե լինեին համապատասխան օրանավակայաններ, խնդիրն ավելի հեշտ կարելի էր լուծել: Այսօր և անցնող մեկ ու կես տասնամյակի ընթացքում Հայաստանում շարունակում են գործել նույն օդանավակայանները, իսկ Արցախի միակ օդանավակայանը վերջերս է սկսել վերանորոգվել: Օդանավակայանների և օդային բեռնափոխարումների նշանակությունը մեզ համար ավելին քանի կարենու է: Հայկական ավիացիոն բեռնափոխարումները կատարվում են հիմնականում խորհրդային արտադրության բեռնատար ինքնարիներով: Դրանք են «Ահ-26», «Ահ-12», «Ալ-76» ինքնարիները<sup>179</sup>: Ոչ հաճախ կիրառվում են նաև այլ պետությունների արտադրության մի քանի ինքնարիների տեսակները և խորհրդային արտադրության «Ահ-22», «Ահ-124» ինքնարիները: Հետաքրքրական էր 2009թ. Երևանի ջերմագելեկտրոլիայանի համար առանձնապես մեծ շափերի և քաշի (187,6 տոննա) գեներատորի բերումը Հայաստան: Այն իրականացվեց աշխարհում ամենամեծ բեռնատար ինքնարինի՝ «Ահ-225 Մրիա»-ի, միջոցով, քանի որ Հայաստանը գտնվում է փաստացի շրջափակման մեջ: Թվարկված ինքնարիները, իհարկե, կարող են տարբեր ծավալի և քաշի բեռները հասցնել տարբեր հեռավորությունների վրա: Նշվածները պատկանում են տարբեր ժամանակների և տարբեր դասակարգումների: Ամբողջ աշխարհում հիմնականում կիրառվում են միջին բեռնատարները, որոնցից է «Ալ-76»-ը, որի բեռնատարողությունը կազմում է մինչև 50 տոննա<sup>180</sup>: Թվարկված ինքնարիներից կան տեսակներ, որոնք մեր պայմաններում կիրառվում են ավելի հաճախ, չնայած որ արդեն վաղուց հնացել են: Սինչե ուսակտիվ շարժիչներով բեռնատարների լայնորեն կիրառումն աշխարհում գոյություն չուներ 50 (բացառությամբ «Ահ-22»-ի<sup>181</sup>) և ավելի տոննա բեռնատարողություն ունեցող ինքնարին:

<sup>177</sup> С.Л. Печуров. Революция в..., стр. 73-80.

<sup>178</sup> С. Сокут. Сначала-системы..., стр. 14-17.

<sup>179</sup> О. Шевченко. Наше развитие в освоении новых самолетов. Взлет. (15) март. 3.2006, стр.8-11.

<sup>180</sup> Jane's. Д. Рендел. Современные самолеты. М., 2002, стр.153.

<sup>181</sup> В. Беляев, В. Ильин. Российская..., стр. 9-12.

Բեռնատար ինքնարիոների շահագործման համար կարևոր դեր է խաղում նրանց տեսակը՝ ըստ շարժիչների, որոնք լինում են պտուտակավոր և ռեակտիվ: Պտուտակավոր շարժիչներով ինքնարիոներն ի հայտ են եկել ավելի վաղ և հիմնականում երկայացված են միջինից փոքր ծանրությունների տեղափոխման ոլորտում: Ռեակտիվ շարժիչներով ինքնարիոներն ի հայտ են եկել ավելի ուշ, ավելի արդիական են և կարող են կրել ավելի մեծ բեռներ: Սակայն այս երկու տեսակի ինքնարիոների մեջ կա մեկ լուրջ էական տարրերություն: Դա նրանց շահագործման ծախսատարությունն է: Քանի որ, ինչպես նշեցինք, աշխարհում հիմնականում շահագործվում են միջին բեռնատարները, իսկ այդ ասպարեզում գործում են ռեակտիվ, թանկարժեք մեքենաները, ապա մասնագետները կատարելագործում են ավելի էժան պտուտակավոր շարժիչները՝ փորձելով բարձրացնել հզրությունը, որպեսզի միջին բեռնատարների ասպարեզը լցվի ավելի էժան ինքնարիոներով: Արդյունքում ստացվում է, որ ռեակտիվ թանկարժեք ինքնարիոների շահագործումը դառնում է քիչ ցանկալի և օգտակար: Որպես կանոն, նման ինքնարիոների արագության առավելությունն այնքան էլ չի գրավում բեռնափոխադրողներին: Միտումը չի վերաբերում ծանր բեռների փոխադրմանը, որոնց ծավալն այնքան էլ մեծ չէ: Այսինքն՝ նման ինքնարիոներն օգտագործվում են ստիպված: Ամրող աշխարհում շահագործվում են ընդամենը մի քանի տասնյակ «Ահ-124 Ռուսլան» և «C-5 Galaxy» ռեակտիվ շարժիչներով ծանր ինքնարիոներ («Boeing-747-400», «Boeing-777-200LR», «Ալ-96T», հեռանկարային «A-380-800F» և այլն)<sup>182</sup>:

Նոր տեսակի պտուտակավոր ինքնարիոների դասին են պատկանում «Ահ-70» և «C-130J Super Hercules» բեռնատար ինքնարիոները, ինչպես նաև նոր ստեղծվող համաեվրոպական «A-400»-ը<sup>183</sup>: Համեմատության համար նշենք, որ «Ահ-70»-ն ԱՊՀ երկրներում լայն տարածում գտած «Իլ-76»-ի մրցակիցն է և նույն հեռավորության վրա թռչելիս, ունենալով գրեթե նույն բեռնափոխադրման տվյալներ՝ ունի վառելիքի ծախսման կրկնակի բարելավված տվյալներ: Ինչպես նաև այն պահանջում է զգալիորեն կարճ թրիչքուղի<sup>184</sup>: Նոր ինքնարիոնի հիմնական գաղտնիքը նոր տեսակի հովհարապտուտակային տիպի շարժիչներն են (ինչպես «C-130J» և «A-400» ինքնարիոների շարժիչները): Նշված շարժիչների պտուտակներն ունեն զգալիորեն բարելավված աերոդինամիկ ցուցանիշներ: Մասնագետները չեն ցանկանում մեծացնել բեռնատար ինքնարիոների տարրողունակությունը: Ահա այսպիսի զարգացման միտում ունեն բեռնափոխադրող ինքնարիոները: Զարգացումը, բնականաբար, մեծ կարևորություն է ներկայացնում նաև հայկական բեռնափոխադրումների համար, սակայն այս ինքնարիոները դեռ լայնորեն չեն կիրառվում:

Կատարելով անհրաժեշտ հետևողություններ այս ամենից և հաշվի առնելով հայկական բեռնափոխադրումների աճի ծավալները՝ անհրաժեշտ է փաստել, որ ապագայում մեծ դեր կարող է հատկացնել նաև մեծ ծավալների բեռնափոխադրումներին (50 և ավելի տոննա բեռների հաճախակի փոխադրումների): Հիմք ընդունելով այս ամենը՝ անհրաժեշտ է հայ բեռնափոխադրողների համար մտածել նոր ինքնարիոնի և ծավալների մասին: Աշխարհում կա մի ինքնարիոն, որի մասին մենք ակնարկեցինք, որը միաժամանակ համարվում է միջինից ծանր բեռների կրող և, իր քիչ ծախսատարությամբ, ուեկորդակիր է: Աշխարհում եղած բոլոր միջին բեռնատարները, անկախ շարժիչների տեսակից, վառելանյութի ծախսի առումով ունեն «Ահ-22»-ից վատ ցուցանիշ: Ծախսի ցուցանիշով «Ահ-22»-ին են մոտենում միայն վերը նշված «Ահ-70»-ը և «A-400»-ը: Վերջինս դեռ խմբանակային արտադրության մեջ չկա, ավելի թանկարժեք է և ունի ընդամենը 40 տոննա բեռնատարողություն<sup>185</sup>: «Ահ-22»-ը 50 տոննա բեռով կարող էր թռչել 5000 կմ՝ օգտագործելով 43 տոննա վառելանյութ<sup>186</sup> այն ժամանակ, երբ «Ահ-70»-ը 35 տոննա բեռով կարող էր թռչել 3800 կմ՝

<sup>182</sup> Ю. Гордеенко и др. Военная Авиация. Ч 1. Минск. 2000, стр. 399, Ч 2, стр. 119-120.

<sup>183</sup> М. Архипова, Реактивные самолеты..., стр.230-231; Janc's. Д. Рендел. Современные самолеты. М., 2002, стр.158.

<sup>184</sup> В. Беляев, В. Ильин. Российская..., стр. 25-29.

<sup>185</sup> О. Шевченко. Наше развитие в освоении новых самолетов. Взлет. (15) март. 3.2006, стр. 8-11.

<sup>186</sup> О. Хлопотов. История военной авиации. Москва Санкт-Петербург. 2005, стр. 179; В.Беляев, В.Ильин. Указ. соч., стр. 9-13.

օգտագործելով 38 տոննա կերոսին<sup>187</sup>: Համեմատության համար նշենք, որ լայնորեն կիրառվող «Իլ-76»-ը 42 տոննա բեռով կարող էր թռչել 4000 կմ՝ օգտագործելով 81 տոննա կերոսին<sup>188</sup>:

«Ահ-22»-ի միջին բեռնատարողությունը կազմում է 40-60 տոննա, իսկ 100 տոննա բեռով այս ինքնարիող սահմանել է համաշխարհային ռեկորդ: Բացի ծանրաքարչ «Руслан»-ից և «Galaxy»-ից, աշխարհում միայն «Ահ-22»-ը և ամերիկյան «C-17 Globemaster III»-ը կարող են տանել 60 տոննայից ավելի բեռ (չհաշված մարդատար ինքնարիոների հիման վրա ստեղծված մի քանի բեռնատար ինքնարիոները, որոնց ծախսը ևս զգայիրներն թանկ է)<sup>189</sup>: Հենց այս երկու ինքնարիոներն են հայկական ավիացիոն բեռնափոխադրումների ապագա երաշխիքները: Ամերիկյան բեռնատարը ռեկորդի ինքնարիոն է, և նրա չափորոշիչները բոլորովին այլ են, սակայն վերջինիս տվյալները ևս գրավիչ են:

Նախ անդրադառնանը «Ահ-22»-ին, որի ընդարձակ բեռնախուցը թույլ է տալիս օգտագործել իր մեծ բեռնատարողությունն ամրոցությամբ: Այս ինքնարիոների շահագործումը, մեր խորին համոզմամբ, մեծ հետաքրքրություն պիտի ներկայացնի հայկական բեռնափոխադրումների համար: Ներկայումս «Ահ-22» ինքնարիոները սահմանափակ քանակությամբ շահագործվում են ռուսական Ռ-ՕՌ-ու-ում<sup>190</sup> և «Արօֆլոտ» կազմակերպությունում (ընդհանուր քանակը 80-ից պակաս է): Հնարավոր է 80-ից մի քանի ինքնարիոների գնում կամ վարձակալում, ինչը ներկայումս շատ տարածված է: Սակայն, հաշվի առնելով այդ ինքնարիոների տարիքը, պետք է ասել, որ նրանք չեն կարող մեզ երկար ծառայել: Այսօր Կիևում գտնվող «Անտոնօվ» ընկերության մասնագետները համապատասխան պայմանագրերի դեպքում պատրաստ են արտադրել համապատասխան քանակությամբ նման ինքնարիոներ՝ նույնիսկ որոշ կատարելագործումներով: Քանի ակուրագործումներով: Քանի ակուրագործումներով: Կարող է կազմել մինչև 20-30 ինքնարիոն: Մոտ ապագայում տարվա կտրվածքով կկատարվեն նման ինքնարիոների առնվազն մի քանի հարյուր թոփշներ: «Ահ-22»-ի երեք թոփշրով կտեղափոխվի «Իլ-76»-ի չորս անգամով տեղափոխված բեռը՝ միաժամանակ ծախսելով երկու անգամ պակաս վառելանյութ: Դժվար չէ հաշվարկել, թե ինչքան վառելանյութ կարելի է խնայել 300 կամ 400 թոփշների դեպքում:

Նշենք, որ նման ինքնարիոները կարող են ճնափոխվել և կիրառվել որպես մարդատար ինքնարիոներ: «Ահ-22»-ի ճնափոխված տարբերակը բարձրակարգ սրահներում կարող է տանել մինչև 250-300 ուղևոր՝ ունենալով մինչև 10-15 հազար կիլոմետր թոփշի հեռավորություն:

Իսկ նման ինքնարիոնով թռչող ուղևորներն անպայման կվճարեն զգայիրուն պակաս գումար: Ներկայումս աշխարհում կիրառվում են նաև ուղևորատար մեծ ինքնարիոների բեռնատար տարբերակներ, որոնց բեռնատարողությունը հասնում է վերը նշված բեռնատարների մակարդակին, սակայն նման ինքնարիոները նախ և առաջ քանի արժեքներ են և ծախսատարությամբ զիջում են «Անտեյ»-ին:

Կապված միջազգային պահանջների հետ՝ «Անտեյ»-ին թույլ չեն տա մուտք գործել Եվրոպա, սակայն թեկուզ միայն ԱՊՀ տարածքներում թռչելու համար «Ահ-22»-ը լուրջ միջոցներ կիսնայի: Չե՞ որ իմանական ապրանքաշրջանառությունը Հայաստանը կատարում է ԱՊՀ պետությունների հետ:

Տնտեսական զարգացման այս նոր փուլում հարկավոր է մտածել ապագայի գործերի մասին: Անհրաժեշտ է չմոռանալ նաև հայ ժողովրդին ապագայում սպասվող պատերազմը, որը ներկայումս գտնվում է գաղափարական և նախապատրաստական փուլում: Ուազմական գործողությունների ժամանակ մեզ հարկավոր է խնայել ամեն մի գրոշը: «Ահ-22» ինքնարիոն, լինելով անցնող ժամանակների ներկայացուցիչ, կարող է դառնալ ապագայի ձեռքբերումների երաշխիք:

Եվրոպական այլ և ավելի հեռավոր երկրների հետ օդային բեռնափոխադրումն անհրաժեշտ է կառուցել հենց ամերիկյան «C-17» ինքնարիոնի հիմքի վրա, քանի որ այն իր տեսակի մեջ ամենամեծ բեռնատարն է և ամենաքիչ ծախսողը: Ունի լայն և ընդարձակ բեռնախուց և հաջողությամբ վայրէջքներ է կատարում նաև ոչ կարծր ծածկույթների վրա:

Օդանավակայաններն երկրի անվտանգության ապահովման համար կատարում են առանցքային նշանակություն: Ինչպես վերը ներկայացվեց, Հայաստանի Հանրապետությունը ներկայումս շատ է կախված օդային բեռնափոխադրումներից՝ նույնիսկ անթույլատրելի չափով: Սակայն իրավիճակից դուրս գալու մոտավոր լավագույն լուծումն այդ բեռնափոխադրումներն ավելի շահավետ դարձնելն ու ճիշտ կազմերպելն է: Ինքնարիոնների մասով առաջնային լուծումները

<sup>187</sup> В. Беляев, В. Ильин. Указ. соч., стр. 25-29.

<sup>188</sup> Н. Таликов. Самолет Ил-76..., стр. 1-13.

<sup>189</sup> О. Хлопотов. Указ. соч., стр. 179; Jane's. Д.Рендел. Современные самолеты. М., 2002, стр.136.

<sup>190</sup> В. Беляев, В. Ильин. Указ. соч., стр.13.

Աերկայացնելուց հետո պետք է ներկայացնել նաև օդանավակայանային ենթակառուցվածքների առանձնահատկությունները:

Մեզ նախ անհրաժեշտ է, որպեսզի հայրենիքում առավելագույնս շատ օդանավակայաններ ընդունեն մեծածավալ բեռներ բերող ինքնարթուններ: Տվյալ դեպքում 100 տոննային մոտ բեռներ բերող ինքնարթունները պետք է կարողանան վայրէջք կատարել առնվազն երեք-չորս օդանավակայաններում:

Առաջին պատճառը հենց բեռնափոխադրումների ծավալների աճն է, որը պատերազմի ժամանակ կարող է ընդունել աննախադեալ մեծ ծավալներ:

Երկրորդը բեռների հասցեական ճիշտ բաշխումն է: Օրինակ՝ 100 տոննա բեռը ընդունող մեկ օդանավակայանի դեպքում տվյալ բեռն այլ քաղաք հասցնելը նորից առաջացնում է լրացուցիչ ծախսեր՝ կապված ավտոտրանսպորտի և երկարգծի հետ: Այլ օդանավակայանի դեպքում բեռն հնարավորինս արագ կհասնի վերջնական հասցեատիրոջը:


Երրորդ պատճառը եղանակային պայմանների առանձնահատկություններն են: Օրերով ու շաբաթներով մեկ օդանավակայանը կարող է փակ մնալ մառախուղի կամ ձնաբուրի պատճառով: Նման դեպքերը մեզանում եզակի չեն:

Նշված խնդիրներն արդյունավետ լուծելու համար այդ երեք-չորս օդանավակայանները պետք է լինեն մեկը մյուսից առնվազն 50-60 կմ հեռավորության վրա: Այսօր եղած օդանավակայանների հարմարեցման, մեծացման աշխատանքներին զուգահեռ պետք է Զերմուկում կառուցել Երևանի և Գյումրիի օդանավակայանների չափերին համապատասխանող օդանավակայան: Նախ՝ հեռավորությունը շատ հարմար է Երևանից, առավելագույնս մոտ է Արցախին և բավարար հեռավորության վրա է գտնվում աղբբեջանական և բուրբական սահմաններից:

Հաջորդ քայլն այն պետք է լինի, որ Արցախում գործեն առնվազն երկու-երեք օդանավակայաններ, որոնցից մեկը պետք է պարտադիր կարողանա ընդունել միջին բեռնատար ինքնարթուններ՝ մինչև 40-50 տոննա բեռնատարողությամբ: Մյուս երկուսը կարող են լինել փոքր օդանավակայաններ՝ հասարակ, ոչ կարծր ծածկույթ ունեցող թռիչքուղով: Արցախին մոտ Հայաստանի շրջաններում ևս պետք է գործեն համանման մի քանի օդանավակայաններ:

Օդանավակայանների ռազմավարական նշանակությունը միայն վերը նշվածում չի կայանում: Դրանք խաղաղ և հատկապես պատերազմի ժամանակ հանդիսանում են ռազմական ավիացիայի մշտական կամ ժամանակավոր բազաներ: Օդանավակայաններն առաջին տեղում են, հակառակորդի կողմից հարվածի ենթակա կառույցների ցուցակում: Այս առումով մարտական ավիցիայի համար հետաքրքրական են ջրային մակերեսների վրա առաջարկվող օդանավակայանները, որոնք ապահովված կլինեն հակառակորդի օդային հարձակման միջոցների անակնկալ հարվածներից<sup>191</sup>:

Հաշվի առնելով հայության և հայկական պետությունների առաջ ծառացած խնդիրները, արցախյան գոյամարտի վերլուծությունը և համաշխարհային ավիացիայի զարգացման միտումները՝ պետք է փաստել, որ ներկայումս խիստ անհրաժեշտ է զարկ տալ ընդհանուր քաղաքացիական և սպորտային ավիացիայի զարգացմանը: Բացի վերը շարադրված տնտեսական և ռազմավարական նախապայմաններից, նշենք, որ բազմատեսակ ավիացիոն սպորտի զարգացումը մեծապես կարող է նպաստել ճիշտ սերնդակերտնանը և առողջ ապրելակերպի զարգացմանը, որը ռազմավարական խնդիր է յուրաքանչյուր պետության համար:



Արձրուն Հովհաննեսյան  
2010թ. հոկտեմբեր

Խմբագիր՝ Լ.Հովհաննեսյան  
Հայերեն տեքստի ստուգում՝ Լ.Պետրոսյան  
Թարգմանչութեան՝ Լ.Անդրիասյան, Ժ.Ծառուկյան

<sup>191</sup> Այս մասին մանրամասն տես՝ Ա.Հովհաննեսյան: Սի քանի հարցեր..., էջ 111-116:

Վերստուգող սրբազրիչ՝ Ժ.Ծառուկյան  
Նկարների ձևավորումը՝ Վ.Կարապետյան